# ԷՋՄԻԱԾԻՆ



1962

ՌՆԺԲ

ԺԹ ՏԱՐԻ

Դեկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԺԲ.

1962

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


| | Էջ |
|---|---|
| ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին | 3 |
| ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կալիֆոռնիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանին | 5 |
| Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի քառասունհինգերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը | 7 |
| Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասուներկուերորդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը | 10 |
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Մեր ազգային մեծագույն տոնը | 12 |
| Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասուներկուերորդ տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում | 14 |
| Մ Ա Յ Ր  Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ | 16 |
| Զվարթնոց տաճարի հազարերեքհարյուրամյակը | 18 |
| Վալերի Բրյուսովին նվիրված գիտական նիստ | 21 |
| ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— Սրտագին կոչ բովանդակ հայության որ ի Սփյուռս աշխարհի | 23 |
| ԵԱՏ— Անդրադարձություններ | 25 |
| Բ—Սուրբ Էջմիածին, Սրբություն Սրբոցը հայուն | 28 |
| Տեսակցություն Հնդկաստանի և Մայրագույն Արևելքի Հայրապետական նախկին պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի հետ | 30 |
| Պաշտոնական բացում Սուրբ Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական դպրոցի | 34 |
| Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Պոլիս և իր դերը | 35 |
| Շ. Գ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ— Նոր-Ջուղայի հայկական տպարանը և այնտեղ տպագրված «Խորհրդատետր»-ը | 46 |
| ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ— Համառոտ պատմական ակնարկ Երևանի եկեղեցիների մասին | 52 |
| Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի | 65 |


ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“.

Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

---

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1962 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

**Վ Ա Զ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի,**
**ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ**
**ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,**
**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ**
**ԱԹՈՌՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ**
**ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.**

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՑԻ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՖՐԱՆՍԱՑԻ ՀԱՅՈՑ Տ. ՍԵՐՈՎԲԷԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ.
ՈՂՋՈ՜ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒ՜Ն ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ
ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Հոգեկան անփոխարինելի մխիթարութիւն է Մեզի համար հաստատել, թէ հայ Սփիւռքի տարածքին վրայ ունինք Մեզի լծակից և գործակից նուիրեալ ու հաւատարիմ հոգևոր եղբայրներ, որոնք անսասան հաւատքով և հայ հոգևորականի պայծառ գիտակցութեամբ կը ղեկավարեն մեր եկեղեցիները, կը պահպանեն մեր հաւատատր պանդուխտ վաւակներու հոգևոր-ազգային կեանքը և կ'առաջնորդեն զանոնք մեր նախնեաց սուրբ հաւատքի լոյսով և անոնց հերոսական պատմութեան ոգիով:

Դուք, սիրելի՜ Սրբազան, մեր Եկեղեցւոյ վինուորեալներու այդ հոյլին կը պատկանիք Ձեր երկար տարիներու ծառայութեամբ, սկսեալ Ձեր երիտասարդութեան տարիներէն, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց քրիստոսակոխ տեղերէն մինչև

Արևմուտքի հեռաւոր ափերը: Ամէն տեղ և ամէն առթիւ, Դուք Ձեր խղճի պարտքը կատարած էք և Ձեր աշխատանքը եղած է ի շինութիւն Եկեղեցւոյ և ի շահ ժողովրդեան:

Զանազան առիթներով Դուք ներկայացուցած էք մեր Սուրբ Եկեղեցին միջեկեղեցական ժողովներու և հանդիսութիւններու, ամէն անգամ իմացական և հոգևոր հեղինակութեամբ և բարի արդիւնաւէտութեամբ: Եւ ահա տարիներէ ի վեր սիրով և իմաստութեամբ կը հովանաւորէք Արևմտեան Եւրոպայի հայ եկեղեցիները և կրօնական համայնքները, իբրև Հայրապետական պատուիրակ և առաջնորդ Ֆրանսայի թեմին:

Անկեղծօրէն գնահատելով բազում տարիներու Ձեր անխոնջ ծառայութիւնը և անայլայլ հաւատարմութիւնը դէպի հայոց հաւատքի վէմ Սուրբ Էջմիածինը, Մենք ջերմապէս կը կամենանք, որ Դուք Ձեր առաքելութիւնը շարունակէք Ձեր դիրքին և Ձեր պաշտօնին առաւել համապատասխան տիտղոսով, որով Մեր այս կոնդակով կը շնորհենք Ձերդ Սրբազնութեան արքութեան պատիւ, մաղթելով Ձեզի, որ շատ ապրիք առողջ և մինչև խոր ծերութիւն ծառայէք Ձեր սիրած և Ձեզի հարազատ Մայր Եկեղեցիին և ժողովուրդին:

**«Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»** (Ա Թեսաղ. Բ 19):

Լուսոյ խորան Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն Ձեզի օրհնութի՛ւն և եղբայրական սիրոյ ողջո՛յն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն հոկտեմբերի
1962 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԲ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ

## Վ Ա Զ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԿԱԼԻՖՈՌՆԻՈՅ ՀԱՅՈՑ Տ. ԹՈՐԳՈՄԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈ՜ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԴԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կամարներուն ներքև, Հոկտեմբերի 14-ին, եպիսկոպոսական սուրբ ձեռնադրութեան շնորհները բաշխուեցան նաև Ձեզի, իբրև նորընտիր առաջնորդ Միացեալ Նահանգաց Կալիֆոռնիոյ թեմին:

Դուք, թէև տակաւին երիտասարդ, սակայն Ձեր ծառայութեան տարիները եղած են շատ և յոյժ արդիւնաւոր մեր Սուրբ Եկեղեցւոյ անդաստանին մէջ, սկսեալ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց սուրբ տեղերէն մինչև ափերը Ատլանտեանի: Քաջ գիտենք, թէ Դուք ոչ միայն լուրջ պատրաստութիւնը և գիտութիւնը ունիք Ձեր հոգևոր առաջնորդի պաշտօնին, այլ նաև խոր գիտակցութիւնը Ձեր առաքելութեան և ամբողջական նուիրումը Ձեր սուրբ կոչումին, քրիստոնէական և հայկական իմաստովը այդ գաղափարներուն:

Միածնաէջ Սուրբ Տաճարին մէջ Մենք Մեր ձեռքը դրինք Ձեր գլխուն վրայ և Տիրոջ շնորհները հայցեցինք Ձեզի համար այն համոզումով, որ Դուք իսկապէս

արժանի էք հոգևոր առաջնորդութեան կոչուելու, պահելու և պահպանելու համար Մեր պանդուխտ հօտը ամբողջ ու ապահով, մէկ և անբաժանելի, իբրև Եկեղեցի և իբրև Ազգ, Սուրբ Էջմիածնի աստուածային օրհնութեան ներքև:

«Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ» և «զգո՛յշ լինիջիր անձին և վարդապետութեանդ, և ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես, և՛ զանձն ապրեցուսցես և՛ զայնոսիկ որ քեզն լսիցեն» (Ա Տիմոթ. Դ 13—16):

Թող Տէրը ամբողջ ու անխռով պահէ Կալիֆոռնիոյ շրջանի հայ ժողովուրդը և ջէն ու պայծառ իր եկեղեցիները:

Թեմական խորհուրդը, եկեղեցական վարչութիւնները և յարակից եկեղեցասէր միութիւնները, Ձեր առաջնորդութեան ներքև, թող նուիրուին շինարար աշխատանքի, առաւել կազմակերպուածութեամբ և սիրով միաբան և ջերմ հաւատարմութեամբ դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որպէս հարազատ զաւակները Մայր Եկեղեցւոյս, և նոյնքան ջերմ հաւատարմութեամբ դէպի ամերիկեան ազնիւ ժողովուրդը և մեծ երկիրը, որպէս պարկեշտ և օրինապահ քաղաքացիները Միացեալ Նահանգաց, հեռաւոր ափերու վրայ բարձր պահելով հայու պանծալի անունը:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն ամերիկեան աստուածասէր ժողովուրդին:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն ամերիկահայ հաւատացեալ ժողովուրդին:

Ողջո՛յն և օրհնութի՛ւն Ձերդ Սրբազնութեան, պատուարժան թեմական խորհուրդին, եկեղեցական խորհուրդներուն և Ձեր թեմի բոլոր եկեղեցասէր կազմակերպութիւններուն և վարչութիւններուն:

Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ Ձեզ այժմ և միշտ: Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն Հոկտեմբերի
1962 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԲ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ընդունեցեք, մեծահարգ Նախագահ, Մեր անկեղծ շնորհավորանքները Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ: Թո՛ղ անսասան մնա խաղաղության հզոր պատվար Սովետական Միությունը ու նրա դրոշի տակ աճի ու բարգավաճի մեր Մայր երկիրը խաղաղ ու ապահով: Ձեզ երկար կյանք քաջառողջությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ հղում ենք Ձեզ և Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարության բոլոր անդամներին Մեր ջերմագին շնորհավորանքները և ամենաանկեղծ բարեմաղթությունները:

Սովետական Միության ժողովուրդների խաղաղ ու երջանիկ ընտանիքում թող հավետ ապրի ու ծաղկի մեր վերածնած Մայր Հայրենիքը հարատև վերելքի ու բարօրության մեջ: Մաղթում ենք Ձեզ և Ձեր գործակիցներին լիակատար հաջողություն Ձեր հայրենաշեն աշխատանքներում:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Ընդունեցեք Մեր սրտագին շնորհավորանքները Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ:

Մաղթում ենք Սովետական Միության ժողովուրդներին նոր հաջողություններ աշխարհի ընդհանուր խաղաղության պայմաններում:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ջերմապես շնորհավորում ենք Ձեզ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 45-րդ տարեդարձի առթիվ և մաղթում ենք Ձեզ և խորհրդիդ անդամներին արևշատություն և հաջողություն Ձեր հայրենանվեր գործունեության:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք, խնդրում եմ, Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահության և իմ շնորհակալությունը այն շնորհավորանքի համար, որ Դուք հղել եք մեզ Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ։

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի
Նախագահության Նախագահ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար։

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել խորհրդի անդամների և իմ շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների համար։

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեզ Սովետական Հայաստանի 42-րդ տարեդարձի առթիվ և մաղթում, որ միշտ անսասան մնա ու միշտ աճի ու ծաղկի խաղաղության մեջ մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ սովետական ժողովուրդների եղբայրության դրոշի ներքև:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձի առթիվ ջերմապես շնորհավորում ենք Ձեզ և մաղթում, որ մեր վերածնված Մայր Հայրենիքը միշտ շեն մնա ու անսասան և նորանոր նվաճումներով փառավորվի սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում, ամբողջ աշխարհի խաղաղության պայմանների մեջ:

Հայրենի կառավարության և անձամբ Ձեզ մաղթում ենք լիակատար հաջողություններ Ձեր հայրենաշեն գործունեության ճանապարհին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ջերմապես շնորհավորում ենք Ձեզ Սովետական Հայաստանի 42-րդ տարեդարձի առթիվ, մաղթելով, որ մեր շեն ու խաղաղ երկիրը հավետ մնա անսասան և առաջադիմի օրեցօր, հերջանկություն համայն հայ ժողովրդյան:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագրի համար:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի
Նախագահության Նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և անձամբ իմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել մեր շնորհակալությունը Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելու 42-րդ տարեդարձի առթիվ Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՏՈՆԸ

Այս տարի ևս, Նոյեմբերի 29-ին, հայ ժողովուրդը հպարտությամբ և արդար բերկրանքի զգացմունքներով, տոնեց իր ազգային վերածննդյան 42-րդ տարեդարձը, Հայաստանում սովետական կարգերի հաստատումը:

Քառասուներկու տարիներ առաջ, ամբողջական բնաջնջման եզրին հասած մեր տանջահար բայց արի ու հավատավոր ժողովուրդը ոտքի կանգնեց, փշրեց դարավոր իր ստրկության շղթաները և ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, տիրացավ դարերով երազած իր ազատության և Հայրենիքին:

Անցյալ ավելի քան վեց հարյուր տարիների բռնակալությունները, մահաբեր մրրիկները, որոնք անցան մեր Հայրենի հողի վրայով, չեն կարողացել մարել հայության հոգում Հույսը, Հավատը՝ պայծառ ապագայի նկատմամբ, խեղդել անկախության մեր ձգտումը, ընկճել մեր ազատատենչ հոգին:

Նոյեմբերի 29-ը մեր ժողովրդի ազատագրական պայքարի պատմության հերոսական և փառավոր էջերից մեկն է:

Նոյեմբերի 29-ը լայն հորիզոններ բացեց մեր ժողովրդի ազգային վերածննդի համար:

Քառասուներկու տարին ոչ մեկ ժողովրդի կյանքում մեծ ժամանակաշրջան չէ: Բայց հրաշքի համազոր նվաճումներ կատարվեցին մեր ժողովրդի մաքառումներով, խիզախումներով, պայքարով ու աշխատանքով՝ մեր Հայրենի հողի վրա:

Այսօր, քառասուներկու տարիների ընթացքում, երեկվա հետամնաց, որբերի և ողբի, համաճարակների և սովի Հայաստանը դարձել է գեղածիծաղ և բարգավաճ հանրապետություն:

Դեռևս 1924 թվականին Լեոն գրում էր Արշակ Չոպանյանին. «Ամեն ինչ կորցրել ենք, մնացել է մի փոքրիկ Հայաստան, որ այսօր գերագույն ճիգեր է թափում ազատագրվելու քաղցի, մերկության, համաճարակների, կոտորածների մի շարք տարիների զարհուրելի հետևանքներից...: Ես ականատես էի, թե ինչպես էր մեռնում հայ ժողովուրդը...: Մեզ նույնիսկ վտարել էին մարդկության շարքերից, մեր դժոխային կացությունը, մեր աննկարագրելի տանջանքները ոչ մի անհանգստություն չէին պատճառում: Ահա այսպիսի դրությունից էր, որ ընդամենը երեք-չորս տարի է, ինչ դուրս է եկել հայ ժողովուրդը, մերկ ու կատարելապես ընչազուրկ, առանց խրճիթի, առանց մաճի, առանց լծկանի»:

Այսօր, քառասուներկու տարի հետո, Հայաստանը դարձել է արդյունաբերության երկիր: Մեր Հայրենիքի արդյունաբերությունը աճել է 82 անգամ: Երևանյան մարկայով մեր Հայրենիքի արտադրության 70 տեսակներ առաքվում են արտասահմանյան ավելի քան քառասուն երկրներ:

Անցնող քառասուներկու տարիների ընթացքում, մեր Հայրենիքը մեծապես առաջադիմել է գիտության, մշակույթի, ժողովրդական լուսավորության, առողջապահության բնագավառներում:

Այժմ Հայաստանում գործում են ավելի քան 90 գիտահետազոտական ինստիտուտներ ու հիմնարկներ, ուր 6 000 գիտական աշխատողներ իրենց մտքի և սրտի նպաստն են

բերում մեր Հայրենիքի գիտության և մշակույթի հզորության:

Այսօր մեր Հայրենիքը դարձել է լույսի երկիր, արևի երկիր: Հայաստանում բնակչության չորս մարդուց մեկը սովորում է: Հայաստանը դարձել է համատարած գրագիտության երկիր, ծածկվել հանրակրթական դպրոցների, բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների, գրադարանների խիտ ցանցով:

Այս տարի օգոստոսին Հայաստան այցելած ամերիկացի ականավոր նկարիչ և գրող Ռոքուել Քենտը Հայաստանի մասին իր տպավորությունների մեջ արդարորեն գրում էր.

«Մենք այստեղ գտանք մի ժողովուրդ, կենսալեցուն տաղանդավոր մի ժողովուրդ, որը զբաղված է ոչ թե ապաստարաններ փորելով, այլ նոր ու գեղեցիկ քաղաքների շինարարությամբ: Ձեր ժողովուրդը հավերժ երիտասարդության հեքիաթային աղբյուրն է: Ձեր երկրի յուրաքանչյուր մարդ հավատում է իր ու համայն մարդկության պայծառ ապագային: Այդ հավատի աղբյուրից սնվելով, դուք կառուցում եք ձեր նոր աշխարհը, որտեղ թագավորում է խաղաղ, ստեղծագործ աշխատանքը:

Մենք բնավ չենք մոռանա այն օրերը, որ անցկացրինք ձեր գեղածիծաղ, հեքիաթային երկրում: Եթե ինձ հարցնեն, թե մեր մոլորակի վրա ո՞րտեղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը: Ժողովրդական տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի բնագավառում, ձեր հանրապետության վերափոխումները իրոք հրաշքի են նման: Ես սիրեցի ձեր երկիրը, նրա շնորհալի մարդկանց: Եվ ահա ես մեկնում եմ այստեղից սիրտս թողած այստեղ»:

Մեր վերածնված Հայրենիքի և նրա ժողովրդի հետ է նաև Սփյուռքի հայության բոցավառ սիրտը:

Մեր Մայր Հայրենիքը ձգողական հզոր ուժ է դարձել մանավանդ Սփյուռքի օտար հորիզոնների տակ ապրող մեր բազմահազար պանդուխտ եղբայրների և քույրերի համար:

Ուրախությամբ պետք է արձանագրել, որ Հայրենիքը, իր վերածննդյան քառասուներկուերորդ տարեդարձի առթիվ, նորից լայնորեն բացավ իր գիրկը՝ ընդունելու համար արտասահմանից՝ Կիպրոսից, Եգիպտոսից, Պարսկաստանից հայ նոր քաղաքացիներին:

Այս տարի, մեր պատմության մեջ առաջին անգամ, պետական հովանու տակ տոնվեց, արժանավոր շքով և համազգային հանդիսությամբ, հայ գրերի անման ստեղծող և մեր ազգային դպրության հիմնադիր Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հազարվեցհարյուրամյակը: Այդ հանդիսությունը արդարորեն վերածվեց հայ մշակույթի համաժողովրդական մեծ տոնի:

Անցնող տարում, հայրենի բարեխնամ կառավարության արտոնությամբ և ընձեռած դյուրություններով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, գումարվեց Ազգային-եկեղեցական ժողով, կատարվեց մեռոնօրհնեքի հանդես ու նշվեց Նորին Ս. Օծության գահակալության յոթերորդ տարեդարձը: Այդ հանդիսություններին ներկա եղան 150 պատգամավորներ և մոտ 600 ուխտավորներ և հյուրեր Սփյուռքից և ներքին թեմերից:

Այսօր, մեր վերածնված ժողովուրդը, իր Հայրենի հողի վրա ամուր կանգնած, իր խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով, վստահորեն քայլում է դեպի իր է՛լ ավելի պայծառ ապագան, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում:

Ծաղկի՛ր, ազատ իմ Հայրենիք՝ խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով:

Փառք ողջո՜ւյն և օրհնությո՜ւն մեր վերածնված Մայր Հայաստանին:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 29-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Մայր Տաճարում, Էջման Ս. Սեղանի առաջ, տեղի է ունենում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձի առթիվ Կառավարական մաղթանք։

Հանդիսության նախագահում է Վեհափառ Հայրապետը։

Գոհաբանական աղոթքին ներկա են Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։

Կառավարական մաղթանքից հետո, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում կազմակերպվում է գրական-գեղարվեստական ցերեկույթ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, նվիրված օրվա ազգային մեծ տոնի նշանակության։

Հանդիսության ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի քարտուղար տիկին Խաչատրյանը։

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով։

Այնուհետև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը հանդես է գալիս Նոյեմբեր 29-ի պատմական և ազգային նշանակության նվիրված բացման խոսքով։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձին նվիրված բովանդակալից ճառով հանդես է գալիս Հոգևոր Ճեմարանի գրաբար լեզվի դասախոս Ս. Անթոսյանը։

Հանդիսության ընթացքում գործադրության է դրվում Նոյեմբեր 29-ի խորհուրդը նշող գեղարվեստական հայտագիր, բաղկացած խմբերգերից, մեներգերից և արտասանություններից։

Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է «Ծաղկիր ազատ իմ Հայրենիք» և «Լեռների ուսին» խմբերգերը։ Գ դասարանի ուսանող Գ. Բունիաթյանը արտասանում է Ս. Կապուտիկյանի «Իմ Հայաստան»-ը, իսկ Բ դասարանի ուսանող Ս. Բոզոյանը՝ Հ. Թումանյանի «Հայրենիքիս հետ»-ը։

Հանդիսության ժամանակ խոսք է առնում խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի քարտուղար տիկին Խաչատրյանը և խանդավառ ծափերի մեջ, հանուն կոմիտեի շնորհավորելով, պատվոգրեր է հանձնում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին և գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին՝ խաղաղության պաշտպանության ի նպաստ նրանց կատարած աշխատանքների համար։

Այնուհետև ողջույնի և օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը ազգային-պետական մեծ տոնի 42-րդ տարեդարձի առթիվ

և շնորհավորելով պատվոգրերի արժանացած գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոսներին, նշում է, որ այդ պատվոգրերը նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խաղաղասիրական գործունեության գնահատությունն են։

«Մենք,— եզրակացնում է Վեհափառ Հայրապետը,— այսուհետև էլ կանգնած կլինենք միշտ, մեր եղբայրականներով և նվիրված ժողովրդով, խաղաղության պաշտպանության դիրքերում, որովհետև Քրիստոնեությունը խաղաղության առաքելությունն է մարդկանց մեջ և աշխարհի վրա»:

Ապա Նորին Ս. Օծությունն օրհնում է Հայրենի աշխարհն ու աշխատասեր հայ ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղությունն լինի համայն աշխարհում և բոլոր հայ երդիկների տակ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով։



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 18-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։ Քարոզի բնաբանն էր «Մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է»։

* * *

Նոյեմբերի 24-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, դասախոսեց վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Մեծն Ներսես Հայրապետի կյանքի և գործունեության մասին։

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Նոյեմբերի 25-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 1-ին, շաբաթ, «Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Գարաչյանը։

Եկեղեցական տոնի առիթով փակ էր Հոգևոր Ճեմարանը։

* * *

Դեկտեմբերի 2-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների Հայաստանում կատարած ավետարանական առաքելության մասին, բնաբան ունենալով «Առաքեալք Աստուծոյ, սիւնք հաւատոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էին նաև մի խումբ հայ ուխտավորներ Ստամբուլից։

* * *

Դեկտեմբերի 9-ին, կիրակի, «Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, վեր հանելով Ս. Աստվածածնի արժանիքները որպես տիպար մոր։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 11-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Նոր Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը։

* * *

Դեկտեմբերի 15-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ հերթական դասախոսություն։ Դասախոսեց Հոգևոր Ճեմարանի վերակացու հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը՝ Ալբերտ Շվայցերի կյանքի և գործունեության մասին։

* * *

Դեկտեմբերի 16-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 17-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ և դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։ Երևանի օդանավակայանում Տ. Շահե վարդապետին դիմավորեց հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանը։ Մայր Տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Շահե վարդապետը ընդունվեց Վեհափառ Հայրապետից։

* * *

Դեկտեմբերի 20-ին, հինգշաբթի, հետմիջօրեի ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ 1961 թվականի շրջանավարտ երեք ուսանողների ավարտաճառերի հրապարակային բանավոր պաշտպանությունը։

Հոգեշնորհ Տ. Ներսէս աբեղա Շաքարյանի նյութն էր «Գևորգ Զ Կաթողիկոս Չորեքչյանի կյանքն ու գործունեությունը»։

Բարեշնորհ Հակոբ սարկավագ Գյոկչյանի նյութն էր «Խրիմյան Հայրիկը որպես մատենագիր և մանկավարժ»։

Անաստաս սարկավագ Մովսիսյանի նյութն էր «Հայ ազգագրությունը և Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը»։

Վեհափառ Հայրապետի ներկայության, շրջանավարտները հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը և քննիչ հանձնախմբի գնահատությամբ արժանացան վկայականների։

Ընդհանուր ծափերի մեջ, շրջանավարտները Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստացան իրենց վկայականները։

Վերջում Վեհափառ Հայրապետը խոսեց գեղեցիկ խրատական։

* * *

Դեկտեմբերի 21-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, դասախոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը, Երուսաղեմի Ս. Հարության տաճարի նորոգության մասին։

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Վերջում հոգեշնորհ դասախոսը պատասխանեց ներկաներից ոմանց հարցերին։

* * *

Դեկտեմբերի 23-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը «Որում և մեք իսկ վկայեմք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև ուխտավորաբար Պոլսից Էջմիածին եկած «Ժամանակ» թերթի խմբագիր Հակոբ Սվազլյանը։

* * *

Դեկտեմբերի 24-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Գեվորգյան Հոգևոր Խորհրդի նիստը։

* * *

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի, «Տոն Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Ստեփանոս քաղցրիկ տատրակ, Տեառն Յիսուսի քաջ նահատակ» մեղեդու խոսքերը։

Հավարտ սուրբ պատարագի, բարեշնորհ սարկավագները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնությունը։

* * *

Դեկտեմբերի 26-ին, չորեքշաբթի, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը մեկնեց Մոսկվա։ Երևանի օդանավակայանում հոգեշնորհ հյուրին ճանապարհեցին հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, բարեշնորհ Զոհրար սարկավագ Շամլյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը։



ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



## ԶՎԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻ ՀԱԶԱՐԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

***Դեկտեմբերի 6-ին, Երևանում, ճարտարապետի տանը, տեղի ունեցավ Հայաստանի Ճարտարապետների միության և Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի համատեղ երեկոն՝ նվիրված Զվարթնոց տաճարի շինության 1 300-ամյակին։***

***Հայ ճարտարապետության գեղեցկագույն և ինքնատիպ կոթողներից մեկը հանդիսացող Զվարթնոց տաճարը կամ Առապարի Ս. Գրիգոր եկեղեցին կառուցվել է Ներսես Գ Շինող կամ Տայեցի կաթողիկոսի օրոք (641—662)։***

***652 թվականին ավարտվում է հայ ճարտարապետության մեջ դարակազմիկ ներկայացնող Զվարթնոց տաճարի շինարարությունը, որի նավակատիքի և օծման հանդիսություններին ներկա է լինում նաև հունաց Կոնստանդին Բ կայսրը 652 թվականի ձմռանը։***

***Տաճարի շինությունից հետո Ներսես Գ Տայեցին ձեռնամուխ է լինում անմիջապես Զվարթնոց տաճարին կից Կաթողիկոսարանի կամ պալատի, աշխարհիկ այլ կառուցումների խմբի շինարարությանը, շրջապատի կանալապատմանը, այգիների տնկման և ոռոգման հետ կապված աշխատանքներին, որոնք ավարտվում են 662 թվականին, ըստ ժամանակակից պատմիչ Սեբեոսի վկայության. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել... եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսլեան Սրբոյ Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն։ Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատուոյն՝ որում նուիրեացն։ Ած ջուր և եբեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տընկեաց այգիս և ծառատունկս, և շուրջանակի պատուարեաց զընակութեամբն գեղեցկադիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»։***

***Դեկտեմբերի 6-ին, Երևանում, ճարտարապետի տանը, Զվարթնոց տաճարի շինության և հարակից կոթողների շինարարության***



Զվարթնոց Տաճարը
(Վերակազմություն ճարտարապետ Թ. Թորամանյանի)

1300-ամյակին նվիրված երեկոն ներածական խոսքով բացում է արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Միքայել Մազմանյանը։

— Զվարթնոցը այնպիսի մի մոնումենտալ կառույց է,— ասում է զեկուցողը,— որն իր մեջ ամփոփում է այն լավն ու առաջավորը, ինչ որ հայ բազմադարյան ճարտարապետությունը ձեռք է բերել հնագույն ժամանակներից մինչև յոթերորդ դարը։ Այն համարվում է հայ ճարտարապետության բոլոր բարեմաս-

նությունների, շինարարական խիզախ մտահղացումների, նկարչության ու արձանագործության սինթեզը։ Այսօր էլ Զվարթնոցը ոգեվորում է ժամանակակից ճարտարապետներին, մղում նրանց ստեղծագործական առողջ որոնումների։

Այնուհետև ճարտարապետական գիտությունների թեկնածու Ս. Մնացականյանը հանդես է գալիս «Զվարթնոցի տաճարը» թեմայի շուրջ գիտական զեկույցով, որը լսվում է հետաքրքրությամբ։

Ճարտարապետների միության նախագահ և արվեստի վաստակավոր գործիչ Վարազդատ Հարությունյանի բովանդակալից և ծավալուն գիտական զեկույցը նվիրվել էր «Զվարթնոցի պալատական կոմպլեքսը» հետաքրքրական թեմային։

Անվանի գիտնականը հանգամանորեն ներկայացնում է, Զվարթնոցում կատարված վերջին պեղումների նոր նյութերի վրա, տաճարի հարավային և հարավ-արևմտյան կողմում կառուցված Կաթողիկոսարանի, ընդունելության կամ ունկնդրության սյունազարդ սրահի, տոնասրահի կամ գահադահլիճի, ճաշկերույթների սրահի, կաթողիկոսի աշխատասենյակի, ննջարանների, բաղնիքի և այլ աշխարհիկ շենքերի խմբի մեջ մտնող առանձին մասերի ճարտարապետական արվեստն ու կառուցողական առանձնահատկությունները և նրանց համեմատությունը կատարում նույն դարաշրջանի Հայաստանի պալատական այլ շենքերի, այդ թվում Արուճի, Դվինի հետ, նշելով, որ տաճարը և Կաթողիկոսարանը, «այս երկու հուշարձանները թերևս տարբեր էին իրենց բնույթով, սակայն եզակի՝ իրենց նշանակությամբ հայ ճարտարապետության պատմության համար...»։

Հարգելի ճարտարապետը եզրակացնում է իր շահեկան զեկույցը.

«Ստեղծագործական բարձր ավյունով հղացված այս խումբը (տաճարը և կաթողիկոսական պալատը) մի տեսակ հանրագումարը հանդիսացավ այն բեղմնավոր շինարարական-ճարտարապետական գործունեության, որ ծավալվեց Հայաստանում Ե—Է դարերի ընթացքում։

Զվարթնոց տաճարը մոնումենտալ մարմնավորումը եղավ հայ ժողովրդի ճարտարապետական գեղարվեստական այն կուլտուրայի, որը բաղկացուցիչ մասն է կազմում Մեսրոպյան գրերով սկզբնավորված վաղ ֆեոդալիզմի շրջանի ողջ կուլտուրայի»։



## ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Դեկտեմբերի 13—15-ին Երևանում, Վալերի Բրյուսովի անունը կրող Ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի նախաձեռնությամբ, անցկացվեցին Բրյուսովյան առաջին ընթերցումները, նվիրված ռուս ականավոր բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ Վալերի Բրյուսովի կյանքի, գրական և հասարակական գործունեության, ինչպես նաև հայ մշակույթի հետ նրա ունեցած կապերի լուսաբանմանը։

Վալերի Բրյուսովը առաջիններից մեկն էր, որն անգնահատելի գործ է կատարել հայ գրականությունն ու բանաստեղծությունը թարգմանելու և ժողովրդականացնելու ուղղությամբ։

1916 թվականի վերջերին լույս տեսավ «Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» ժողովածուն։ Նրա թարգմանությունների մեծ մասը պատկանում է Վ. Բրյուսովին։

Վ. Բրյուսովը միաժամանակ ջերմորեն ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը.

«... Հայաստանի ուսումնասիրության մեջ ես գտա հոգևոր ուրախությունների մի անսպառ աղբյուր, ու իբրև պատմաբան, իբրև գիտության մարդ, ես Հայաստանի պատմության մեջ տեսա մի ուրույն աշխարհ, որտեղ հազարավոր խիստ արժեքավոր, բարդ հարցեր արժարժում էին գիտական հետաքրքրություն, իսկ իբրև բանաստեղծ ու արվեստագետ, ես Հայաստանի պոեզիայում տեսա գեղեցկության նույնպիսի մի ուրույն աշխարհ, մինչ այդ ինձ անհայտ մի նոր տիեզերք, որտեղ փայլում ու լուսավորում էին գեղարվեստական իսկական ստեղծագործության վեհ կերտվածքներ...։

Ես կարող էի գնահատել, թե ինչպիսի համաշխարհային նշանակություն ունի հայ աշխարհը ամբողջ կուլտուրական մարդկության համար...։

Ես համոզվեցի, որ հայերի ճակատագրին կցված է ընդհանուր պատմության ամենաուշագրավ էջերից մեկը, որը նոր լույսով է լուսավորում պատմագիտության բազմաթիվ հարցերը...։

Մենք՝ ռուսներս պետք է իմանանք հայոց պատմությունը՝ չխոսելով այն մասին՝ որ բոլոր կրթված մարդիկ պետք է ճանաչեն Հայաստանը»։

Դեկտեմբերի 13-ին, Երևանի Պետական համալսարանի մեծ դահլիճում, տեղի ունեցավ Բրյուսովյան առաջին ընթերցումների հանդիսավոր բացումը։

Երեկոյին նվիրված հանդիսության իրենց սրտագին մասնակցությունն էին բերել Երևանի և Սովետական Միության տարբեր վայրերի անվանի գիտնականներ, որոնք զբաղվում են Բրյուսովի գրական ժառանգության գիտական ուսումնասիրությամբ։

Ներածական խոսքով հանդես եկավ ինստիտուտի ռուսաց գրականության ամբիոնի վարիչ, դոցենտ Կ. Այվազյանը։

Ապա լսվեցին երկու զեկուցումներ։ Բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հ. Ղանալանյանը «Հայ պոեզիան և Վալերի

Բրյուսովը» թեմայով իր զեկուցման մեջ ուշագրավ տվյալներ բերեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության, նրա գրական հարուստ կուլտուրայի նկատմամբ Բրյուսովի ունեցած խոր հետաքրքրության, ժամանակի հայ բանաստեղծների՝ մասնավորապես Հովհաննես Թումանյանի հետ նրա ունեցած բարեկամական կապերի մասին, նշեց այն անգնահատելի ծառայությունները, որ Բրյուսովը մատուցել է հայ պոեզիայի լավագույն նմուշները ռուս ընթերցողին իր կատարած թարգմանությունների միջոցով ներկայացնելու գործում։

Ներկաները խոր հետաքրքրությամբ ունկնդրեցին նաև «Համաշխարհային կուլտուրայի պրոբլեմները և Վ. Յա. Բրյուսովը» թեմայով զեկուցումը, որով հանդես եկավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Պ. Բերկովը։

Ապա ներկաները ջերմորեն ընդունեցին պոետի եղբայր, սովետական ականավոր հնագետ Ալեքսանդր Բրյուսովի ելույթը։ Նա հետաքրքրական հուշեր պատմեց պոետի մասին։

Հուզիչ էին ինստիտուտի դասախոս Զ. Յասինսկայայի հիշողությունները Բրյուսովի մասին, որի սանն էր Գրական-գեղարվեստական ինստիտուտում սովորելու տարիներին։

Հաջորդ երեք նիստերում կլսվեն ավելի քան տասը զեկուցումներ «Բրյուսովը հայ պոեզիայի թարգմանիչ», «Գորկին և Բրյուսովը», «Բրյուսովի պոեզիան հայ գրական քննադատության գնահատմամբ», «Բրյուսովը որպես գեղանկարիչ» և այլ թեմաներով։

Ընթերցումների մասնակիցները հետաքրքրությամբ են ծանոթանում ինստիտուտի Բրյուսովյան կաբինետում բացված ցուցահանդեսին։

# ՍՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՐ Ի ՍՓՅՈՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ*

Ազգիս աստվածարյալ Հայրապետը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Սփյուռքի բովանդակ հայության ուղղած Իր սրբատառ կոնդակով, սրտագին կհրավիրե Հայաստանյայց եկեղեցվո բոլոր հարազատները, որ ավագ պարտականություն նկատեն Երուսաղեմի Ս. Հարության Տաճարի նորոգության գործին բերելու իրենց լիակատար մասնակցությունը:

Նվիրական պարտավորության այս հանդիսավոր առիթով, միացնելով մեր տկար ձայնը Ազգիս Վեհին սրտագին կոչին, կհրավիրենք Հայաստանյայց եկեղեցվո բոլոր զավակները, կազմակերպություններն ու հաստատությունները, որ քաղցր հոժարությամբ կատարեն հայու իրենց այս նվիրական պարտքը:

Մեր երախտավոր նախնիք, ավելի քան տասնվեց դարեր, ի գին գերագույն զոհողություններու, ըրած են իրենց լավագույնը, Ս. Երկրին մեջ ապահովելու իրենց հավատքին ու արյան գինը եղող հոգևոր և ազգային այս ժառանգությունը: Այժմ մերն է կարգը, ընելու մեր կարելին՝ պահելու և մեր հաջորդներուն հանձնելու Ազգին այս պարծանքը: Ասիկա միայն եկեղեցական ու ազգային պարտականություն մը չէ, այլ նաև փառք մը միջկրոնական և միջազգային այս նվիրական ոստանին մեջ:

Նյութական պահանջը նորոգության այս գործին համար աննախընթացորեն մեծ է, սակայն ոչ անկարելի: Մեր ժողովուրդը, որուն կյանքը զոհողություններու շարք մը եղած է դարերով, բնավ չէ թերացած իր նվիրական զգացումներու և պարտականության հեղումին մեջ, և գիտցած է տալ միշտ իրմեն՝ իրեն:

Հավաքականության դարն է որ կապրինք. հավաքական ճիգերու և գիտակցության զոհաբերումներով միայն իրենց հաջողության ավարտին կրնան հասնիլ այս կարգի մեծ և բազմապահանջ ձեռնարկներն ու պարտականությունները:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության

---

** Ազգիս Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Նորին ենք անդրադառնում համազգային նշանակություն և այժմեություն ունեցող Երուսաղեմի Ս. Հարության Տաճարի նորոգության ծախքերին Հայոց Պատրիարքարանի մասնակցության հարցին, վերահրատարակելով «Սիոն» ամսագրի 1962 թվականի ապրիլ-մայիս միացյալ համարի խմբագրական կոչը, որը գրի է առնվել ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի կողմից, նույն առիթով գրված Նորին Ս. Օծության ապրիլ 30 թվակիր կոնդակի տպավորության ներքո:*

... Հայրենիքէն հեռու, բայց սրբության գերագոյն կեդրոնին մէջ, Ս. Հակոբը իր մայրավանքով, մեր Տիրոջ Ս. Հարության և Ս. Ծննդյան տաճարներով և ուրիշ սրբատեղիներու իր իրավունքով, է և կմնա մեր Տիրոջ անշիջանելի լույսին ու հավատքին կանթեղը Սիոնի բարձունքին և հայուն հոգեկան աշխարհին վերև մշտավառ ու պայծառ: Այդ լույսը մեր Ազգին մխիթարությունը, պատիվն ու պարծանքն է: Հայ Երուսաղեմի պահպանությունը Տիեզերական Երուսաղեմի մէջ պետք է ըլլա մեր ազգասիրական գերագոյն պարտականությունը, որովհետև հոգևոր այս ժառանգությունը Տունն է Ազգին:

«Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ», Սաղմոսերգուին խոսքը հարկ է որ արձագանքէ ամեն հայու սրտին մէջ, որպեսզի չկործանի մեր ներսը այն զորությունը, որ մեր ազգային պահպանության և շինության միակ ազդակն է եղած:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ», կերգե Եկեղեցվո քնարը: Ո՛րևէ ժամանակե ավելի ներկայիս համար կարծես արժեք ունի հրավերի այս երգը: Անհրաժեշտություն է, որ ամբողջ հայությունը սիրտ սրտի մոտեցուցած և ձեռք ձեռքի խառնելով, ընե իր կարելին, մեր Տիրոջ հրաշալի Գերեզմանի, Ս. Հարության Տաճարի նորոգության սրբազան ու սրբանվեր տուրքը գոյացնելու:

Վստահ ենք, թե արտասահմանի մեր եկեղեցանվեր ու ազգասեր հայությունը թույլ պիտի չտա ինքզինքին, որ Լուսավորչի և Տրդատի, Վկայասերի և Պահլավունյաց, Բագրատունյաց և Ռուբինյանց շինություններով, ավանդություններով և հիշատակներով սկզբնավորված ու պայծառացած, ինչպես նաև Պարոնտերներու, Շղթայակիրներու և իրենց արժանավոր հաջորդներու բարի ջանքերով արդյունավորված այս հրաշալի Տունը Ազգին, դադրի իր դարավոր դերեն, որովհետև Ս. Երկրի մէջ մեր գոյության կառույցն ու իրավունքը, իր լույսն ու ներշնչումը կստանա Ս. Հարության Տաճարեն, մեր Տիրոջ հրաշալույս Գերեզմանի խորհուրդեն:

... Ինչ որ ընենք Ս. Հարության Տաճարի նորոգության համար, Հայ եկեղեցիին ըրած կըլլանք, այն Եկեղեցիին, որ հոգևոր ու հարազատ Մայրն է եղած մեր բոլորին, անդադար պահելով այն ամենը, որ հայեցի է, որ սուրբ է, որ սկիզբն է եղած մեր բոլոր ուրախություններուն ու տրտմություններուն, աղբյուրը մեր բոլոր հույսերուն և երազներուն: Առանց Հայ Եկեղեցվո ջերմ զգացումին, մենք հազիվ թե հայ ենք:

Սիոնի նվիրական բարձունքին վրա տաղավարված Հայ Երուսաղեմը այն սրբազան տապանակն է այսօր, որուն մէջ պահված է հազար անգամ նահատակված բայց հավերժ կենդանի Ազգի մը մխիթարության և հավատքի մուրհակը: Ան այսօր համադրությունն է հին ու նախկին մեր բոլոր վանքերուն և կոչված է ժամանակի պահանջներուն համաձայն ընելու, ինչ որ անոնք ամենքը, միասին կամ հաջորդաբար, ըրին հետզհետե դարերու ընթացքին:

Երկնավոր Քահանայապետն Հիսուս Քրիստոս սրբազան Իր այս կայքեն թող շնորհե մեզի բոլորանվեր զոհաբերման այդ լուսավոր զգացումը, որպեսզի ի հաստատության ու ի պայծառության մնա Ս. Հարության աշխարհամատուռ Տաճարը, ի փառս Աստուծո բարձրելո և ի մխիթարություն Ազգիս մերո սիրելվո:

Աղոթարար
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք Երուսաղեմի

*30 մայիս 1962*
*ի վանս Սրբոց Հակոբյանց*
*ԵՐՈՒՍԱՂԵՄ*

ԵԱՏ

# ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## (Հ. Ս. Կոգյանի «Հայոց եկեղեցին» գործին առիթով)

**Քաղվածաբար հաճույքով հրատարակում ենք Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարք Հոր «Անդրադարձություններ (Հ. Ս. Կոգյանի «Հայոց եկեղեցին» գործին առիթով)» վերնագրով հրատարակված գրքույկից որոշ հատվածներ:**

**Գրքույկը իր ոգով և բովանդակությամբ մի շառաչուն ապտակ է Հ. Ս. Կոգյանին և միաժամանակ արժանավոր, կուռ մի պատասխան նրա այն բոլոր տխուր փորձերին և պղտոր մտադրությանց, որոնցով նա ջանք է ի գործ դնում խեղաթյուրելու պատմական ճշմարիտ փաստերը մեր սրբազան պատմության և ստվեր գցել Հայ եկեղեցու դարավոր առաքելության վրա:**

**Կոգյանի «Հայոց եկեղեցին» տրամավոր աշխատության մասին առաջինը հանդես եկավ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը «Վնասաբեր մի գիրք» խորագրով: Այնուհետև բովանդակալից խմբագրական պատասխանով հանդես եկավ Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկ»-ը, իսկ առանձին գրքույկով՝ Երուսաղեմի Պատրիարքությունը:**

**Հայ մամուլը ևս իր արդար դատապարտության խոսքը ասաց Կոգյանի գրքի առթիվ:**

**Ոչինչ ավելի ամոթալի է և դատապարտելի, քան այն մոլեգին արշավը, որով Վատիկանը մերթ ընդ մերթ և հաճախ ավելի կատաղի բայց անհույս թափով հետապնդում է հայ ժողովրդին իր փարախը առաջնորդելու տխուր մտորումը, խտիր չդնելով միջոցների մեջ:**

**Երեկ Հռոմը հանուն «կաթոլիկական միության» փորձում էր քանդել հայ ժողովրդի ազգային և եղբայր միասնությունը: Այսօր նույն լպրծուն և վտանգավոր ձեռքերով ընթանում է Կոգյանը, ընդ նմանյաց Աղաջանյան կարդինալի, որ Հ. Կոգյանի չար գրքին նվիրել է «Բան հանուրբեան», նույն չար ոգով:**

**Հայ ժողովուրդը և կաթողիկե հայ հասարակությունը վաղուց պատմության են հանձնել բյուզանդական վեճերը և սրտագին եղբայրության մեջ միաձուլված ապրում են բովանդակ հայության ազգային մտահոգություններով և իղձերով:**

**Ահա թե ինչո՞ւ «հրավերը» դատապարտված է մնալու «ձայն բարբառո յանապատի», իսկ Հ. Կոգյան պարտի ներողություն խնդրել հայ ժողովրդից:**

**«Էջմիածին» ամսագրի խմբագրություն**

*Մարդ մը և գիրք մը.— Մարդը՝ Լորենցո Կոգի[1], շատերու ծանոթ Հ. Սահակ Կոգյանի Գիրքը՝ «Հայոց Եկեղեցին»: Օտարանուն և նույնքան օտարոգի հեղինակի մը կողմե գրված այս գիրքը, հակառակ իր սրտառուչ անունին, մեզի չի պատկանիր, անվավեր ծնունդ մը եղած ըլլալուն համար անտարակույս: Մյուս կողմե սակայն չարափառ այդ հատորը իր ստանձնած տխուր դերով, անգամ մը ևս եղծելու և այլանդակելու ելած է մեր քրիստոնեական մաքուր հավատքին հիմն ու ակը և մեր եկեղեցական ու ազգային պատմության ճշմարտությունը:*

*[1] Մեր ընթերցողները թող չզարմանան, գիտնալով, թե Հ. Ս. Կոգյան ծանոթ է Վատիկանի և օտար շրջանակներու մեջ Լորենցո Կոգի անունով:*

*Ըստ Դ'Ալամբերի, արդար և հարգալից խոսքի և դատումի նկատմամբ մարդիկ շնորհակալություն և ակնածանք պարտին ունենալ, եթե եղածը արդար է բայց նվազ հարգալից, լոկ հարգանք: Սակայն այն պարագային, երբ դատումները կվերածվին նախատինքի և անարդարության, պետք է լռել միայն: Լորենցո Կոգիի «Հայոց Եկեղեցին» գործին նկատմամբ մենք ի վիճակի չենք պահելու այդ բեղմնավոր լռությունը, որովհետև դատվողն ու դատապարտվողը լոկ անձ մը չէ, այլ Հայ Եկեղեցին, որ մեր ժողովուրդի հոգիին գերագույն ստեղծագործությունն ու արտահայտությունն է:*

*Ի՞նչ կհետապնդե Լորենցո Կոգին իր այս հատորի պղտոր մտայնությամբ. այն, ինչ*

որ տասնևհինգ դարերե ի վեր ըսել ուզած են Վատիկանի հավատաքննիչները, իբր թե փաստելու համար, թե Հայ Եկեղեցին առաքելական չէ, թե ան հեռացած է ուղղափառ դավանանքեն, և մանավանդ՝ հագած ըլլալով իր անկախության և ազգային եկեղեցիի պատմուճանը, եղծած է քրիստոնեական հավատքը և հեռացած ճշմարտութենեն։ Բառերու դույզն տարբերությամբ, Լորենցո Կոգին կհանկերգե այն, ինչ որ 1926-ին Հ. Վ. Հացունին և 1947-ին Կարդինալ Աղաճանյանը փողերգեցին. սա տարբերությամբ, որ առաջիններու նվագը միտքերը բզկտող ջազ մըն էր, իսկ Լ. Կոգյանինը՝ միշտ կրկնվող, անսկիզբ և անվերջ յալեյլ մը, անապատին տաղասացները պարտության մատնելու աստիճան։

Լորենցո Կոգիի փայտե սուրը կճոճի Օրմանյան սրբազանին դեմ, սակայն զայն խրել կփորձե Հայ Եկեղեցվո սրտին մեջ։ Թե ի՞նչ բաներու արդյունք է իր և նմաններու այս ոխն ու մախանքը, նախ Օրմանյան սրբազանի և ապա Հայ Եկեղեցիի դեմ, լուսաբանությունններու չեն կարոտիր լատինականության փարախը մտնել չուզող Հայ Եկեղեցվո և ժողովուրդի հարազատ զավակներուն համար։

Ինչպես հիշեցինք, նոր չէ եղանակը, հետևաբար նոր պիտի չըլլան նույնպես մեր ըսածները այս առիթով, Հայ Առաքելական Ս. Եկեղեցվո հակառակորդներուն դեմ։ Որքան ատեն որ այսպիսիները չեն հոգնիր անարդար, հետևաբար անօգուտ հարձակումներով նորոգելու հերքված առարկությունները և կրկնելու անճիշտ վկայությունները, անավագելու և դատափետելու Հայ Եկեղեցին, մենք ալ մեզի պարտք կնկատենք, հանուն ճշմարտության և արդարության, պաշտպանելու մեր Եկեղեցին, արգիլելու համար այն ամբարիշտ ու կարկամ ձեռքերը, որոնք կփորձեն մուր քսել անոր դարավոր մարտիրոսության սպիներով պսակված ճակատին։

Գիտնալով հանդերձ, թե Հայ Եկեղեցվո առաքելականությունը և ուղղափառությունը պաշտպանության և ջատագովման չեն կարոտիր, բայց որովհետև գայթակղություններ ստեղծելու և միտքեր պղտորելու նոր և անխիղճ ճիգեր ի գործ կդրվին, պատմական ավանդությունը, Ավետարանի ոգին, ուղիղ հասկացողությունը այլայլող և զանոնք թյուր մեկնություններով ներկայացնող, անհրաժեշտ կնկատենք անգամ մը ևս, հրապարակ նետված թյուրիմացության և չարամտության դեմ ուղիղը հայտարարել և սխալ վերագրումները ցրվել։

Լորենցոյի հատորը կբացվի Օրմանյան սրբազանի դեմ մաղձարաշխ և անլուր որակումներով, զորս իբրև նախաճաշիկ կհրամցընե մեզի հեղինակը։ Ահա քանի մը նմուշներ անոնցմե. կrfօա, կծւյr փառասեr, ստացօղ, Համիդի սիrելին, անտաrբեr ճայ ռrյուԾին նկատմամբ, կեղեՇիչ և դավաճան ազգին: Իբրև պատմաբան՝ տախոս, խեղաբյուrի, առասպելապատում, ճացի տեղ fաr և ձուկի տեղ օձ տվող մը: Այս ահռելի որակումներեն անդին, տակավին գրքին յուրաքանչյուր էջին վրա կհոծանա այն անմարդկային ոգին, որ կգարշահոտի և կլեղվանա, երբ Լորենցոն բանաձևել կփորձե իր ըսելիքները Օրմանյան սրբազանի և Հայ Եկեղեցիի նկատմամբ։ Վերի դժոխածին որակումներով արարածը գոյություն չունի անշուշտ մեր պատմության մեջ, անիկա հղացումն ու ծնունդն է Լորենցոյի ուղեղին միայն, համաձայն իր պատկերին։

... Օրմանյան սրբազան իբրև հանճարեղ միտք և բազմակողմանի կարողություններով օժտված անձնավորություն, ինչպես նաև իր կազմակերպչական տաղանդով շնորհազարդված եկեղեցական, իր առանձին տեղն ու դերը ունի վերջին շրջանի մեր եկեղեցական և ազգային կյանքին մեջ։ Հատորներ անբավական պիտի գային, եթե փորձեինք թափանցումը ընել բրգացող այս արժանիքին, որուն գործն ու դերը անցնող ժամանակին հետ փոխանակ դժգունելու, ավելի կմեծնա ու կպայծառանա, իր վրա նետված քարերը վերածելու աստիճան անգին գոհարներու, անոնցմով հյուսելու համար պսակը իր ճակատին։

... Իբրև բարձրաթռիչ եկեղեցական, բազմահմուտ ուսուցիչ, պերճախոս քարոզիչ, մեծ մատենագիր, անխոնջ գործիչ և ժամանակին պահանջները ըմբռնող և նախատեսող վարչագետ, Օրմանյան իր ժամանակի բացառիկ և անհավասարելի մարդը եղավ։ Իբրև ուսուցիչ՝ դպրոց ստեղծեց, իբրև պատմաբան՝ գլեց ու անցավ ամենքը։ Եթե Ս. Մեսրոպ, գիրերու գյուտով, հայ հոգիին իմաստը ուրվագրելու միջոցը գտավ, Կոմիտաս հայ երաժըշտության գյուտը ըրավ և Անդրանիկ մեր օրերու ազատատենչության տիպարը հանդիսացավ, չափազանցություն պիտի չըլլար ըսել, թե Օրմանյան Հայ Եկեղեցվո աղբյուրին ու դավանանքին հարազատ ու ճշմարիտ ակը մատնանշեց ու հայտնաբերեց, ի հենուկս քրիստոնեության ոգին և տարազը եղծող ոտնձգություններուն, որոնք ճշմարտությունը և իրավունքը իրենց սեփականել կուզեն միայն։

... Օրմանյան ժամանակի և ճշմարտության մարդը եղավ հավասարապես։ Իր հմտությունը, բազմակողմանի կարողությունները և դեպի գործն ու ճշմարտությունը իր ձգտումները զինք կընեին բոլոր ժամանակներու մարդը և ճշմարտության սպասարկուն։ Անիկա բնավ չզոհացավ ճշմարտության վերացա-

*կանությամբ, ոչ ալ ինքզինքը փոքրեց ժամանակի անմիջական կարիքներով։ Ժամանակն ու ճշմարտությունը գիտցան հավասարակշռվիլ իր մեջ, վերածելու համար զինքը այն իմաստուն տնտեսին և հավասարակշռության, որ գիտեր ժամանակին ժամանակ տալ, ինչպես կըսե առածը։*

*... Ուրեմն թողո՛ւնք մեր եկեղեցվո առաքելական հիմնարկությունը, մեր հոգևոր անկախությունն ու ազատությունը, թողո՛ւնք մեր եկեղեցվո ժողովրդական ոգին, որ տիպարն է նախնի դարուց քրիստոնեության, թողո՛ւնք մեր ամենասուրբ դավանությունը, թե մի է հիմն և գլուխ Հիսուս Քրիստոս, ուրանա՛նք մեր եկեղեցվո հայրապետներու և վարդապետներու հեղինակությունները, ուրանա՛նք մեր եկեղեցվո նահատակներն ու մարտիրոսները, որոնք եկեղեցվո միակ և կենդանի գլուխեն չրաժնվելու համար թափած են իրենց վարդագույն արյունը, նզովե՛նք մեր ընտիր և անձնդիր հովիվները, որոնք իրենց հոտին անկախությունն ու ազատությունը պահպանելու համար, իբրև աննկուն ախոյաններ դիմակայած են միշտ նախ արտաքին թշնամիին, ապա Հունական և Հռոմեական եկեղեցիներու հակառակության և հրապույրներուն։ Մեկ խոսքով, ուրանա՛նք մեր շուրջ 1900 տարիներու սուրբ և մարտիրոս եկեղեցին, որ ամենադժնդակ ժամանակներու ընդմեջեն, կարմիր պահակն է եղած քրիստոնեության՝ Ասիո մեկ խուլ անկյունին մեջ, դարերու խավարին և մարդերու նենգության և գազանության դեմ։*

*Այս բոլորը պիտի թողունք, ընդունելու համար Հռոմեական եկեղեցվո միությո՞ւն, Հռոմա Քահանայապետի գլխավորությո՞ւն և Պետրոսի առաքելապետությո՞ւն։ Այսինքն թողո՞ւնք աստվածայինը և ընդունինք մարդկայի՞նը, թողունք ազգայինը և ընդունինք օտա՞րը, և ի՞նչ շահելու համար, ընդարձակելու համար Լիբանանի և Սուրիո մեջ Լորենցոներու իշխանապետությո՞ւնը, թե ոչ նոր ծիրանիներու և տիտղոսներու խոստումը, որուն ի հաշիվ կզրկվին այս բոլորը։*

Եզրակացություն.— *Սիրելի հայորդի, երբ կարդաս հակիրճ այս էջերը, իբրև անցողակի բայց անհրաժեշտ պատասխանը ամբարիշտ Լորենցոյի, որ աններևակայելի չարությամբ կխեղաթյուրե և կուրանա մեր սրբազան պատմությունը իր բովանդակ սխրանքով, կարծելով, թե ափ մը ծուխով կարելի է մթագնել անսահման գեղեցկությունը մեր անցյալին, հիշե, թե Հայ եկեղեցին ցեղին խղճմտանքն է, որ ոչ մեկ բանով կրնա փոխարինվիլ։ Այն սրբարանը, ուր հայ կյանքը ամենեն ավելի մարզվեցավ դեպի բարին ու կատարյալը։ Գանձարանը, ուր պահվեցան ու կպահվին մեր հոգիին ու մտքին շնորհները և մեր արյունով գնված գանձերը։*

*Երբե՛ք մի փոխեր մեր միսն ու ոսկորը եղող Հայ եկեղեցին ուրիշ որևէ բանի հետ, ան, որուն ճարտարապետը եղավ Լուսավորիչը, լուսարարը՝ Մեսրոպ, ժիր մատովակը՝ Սահակ, աղոթող քուրմը՝ Նարեկացին, և քաղցր երգիչը՝ Շնորհալին։ Անիկա դժվարություններու և աղետներու շատ է բախած, բայց չէ խորտակված, միշտ ունենալով բավարար լույս, բաշխելու իրեն հառող հոգիներուն, և տարածած իր սփոփարար հովանին, որ եթե աշխարհիկ զորությամբ զինված բազուկ մը չէ եղած, սակայն հոգևոր մխիթարության և զորության նեցուկ է հանդիսացած մարմնապես խոշտանգված և գերված իր զավակներուն համար։*

*Սիրե քու Մայրենի Հայ եկեղեցին, սրբվե անով, և անոր մեծության գանձերուն մեջ որոնե հոգեկան կազդույրդ, պատրաստ ըլլալով, եթե հարկ ըլլա, արյանդ վերջին կաթիլը տալու իրեն համար։ Մի՛ տրտմեցներ այդ Մայրը և մի՛ ըլլար խորթ զավակը Հայաստանյայց եկեղեցիին։*

*Բոլոր անոնք, որոնք կհեռանան Հայ եկեղեցիեն, իրենց ներշնչումն ու ուղղությունը կառնեն ուրիշ ոգիե մը, որ խոժոռ կնայի մերինին։ Բոլոր անոնք, որոնք մարդորսական ծուղակներով Ազգին ծոցեն կխլեն իր միամիտ և հաճախ բարեմիտ զավակները, իրենց վրա կհրավիրեն հայ ժողովուրդի դարավոր արյան ու հավատքի բողոքը, արյունապատգամ անեծքը։*

*Զավակունք Հայաստանյայց եկեղեցվո, հագեք նորեն և միշտ՝ մեր դարավոր ողջմտության զրահը, իբրև մի հոտ շարունակելու մեր գոյության պայքարը։ Ամեն մասնիկ, որ կփրթի մեր ամբողջութենեն, արժեք մըն է, որ կպակսի մեր նյութական ու հոգեկան դրամագլուխեն։*

*Ուշադիր եղեք առաքյալի խոսքին. «Որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնացէք։ Զգոյշ լերուք, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարութեամբ և սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան խաբէութեան և ըստ տարերց աշխարհի են և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի։*




## ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑԸ ՀԱՅՈՒՆ*

Քարեղեն կառույց մը ըլլալե ավելի, ոգեղեն իրականություն մըն է Ս. Էջմիածինը։ Ավելի ճիշտ պիտի ըլլար ըսել, որ ան ոգեղեն գոյացության մը թանձրացյալ արտահայտությունն է քարի և ճարտարապետական հատկանշական կերպի մը մեջեն։ Հայ ժողովուրդի հավատքին պոռթկումն է երկրեն դեպի երկինք, անոր հանճարին հաշտությունը աստվածային բացարձակ և գերակա իմաստության հետ։ Ու միևնույն ատեն ան զգալի պատկերն է անոր ապրելու կամքին, տոկուն ինչպես անոր նկարագիրը, պարզ որպես անոր հոգին, հստակ ինչպես անոր մտածումը, խորհրդասքող նման անոր տենչանքներուն, ու քարացած քաղցրությունը անոր սրտի աղաղակներուն, որոնք հայ ժողովրդական երգերուն մեջեն այնքան բանաստեղծականությամբ և զուտ երաժշտականությամբ իրենց կերպարանքը կհորինեն։

Մեկ խոսքով, ան հայության ներկայությունն է հողին վրա, հաստատ ինչպես Մասիսը և հավիտենական ինչպես բոլոր բարի բաղձանքները մարդկության։ Անոր երկնասլաց կաթողիկեին պրիսմակին մեջեն կցոլանա աստվածային արևը Հայաստան երկրին վրա։ Ճամբան է խավարեն դեպի լույս անսայթաք առաջնորդող դեպի հավիտենական գոները։ Խորհուրդ մըն է ավելի, քան զգալի, տեսանելի իր մը։ Անոր համար, ան ապրող ներշնչում մըն է յուրաքանչյուր հայուն մեջ։ Ձայն շոշափելե առաջ, հայը աշխարհի տարածության մեջ, որ հեռավոր անկյունն ալ գտնվի, կկերտե զայն իր հոգիին վրա։ Միշտ երազները ավելի գեղեցիկ են քան անոնց մարմնառումները, երբ հոգեղինացած նյութը իր կարգին մասամբ մը կնյութականացնե հոգին։ Թերևս այս կերպ կարելի է մեկնել ճարտարապետական այս բացառիկ ժառանգության հարուստ մյուս կողմը, որ հայուն բարոյական և հոգևոր նկարագրին, անոր դեպի բարին, գեղեցիկին և ճշմարտության ձըգտումներուն ինքնատիպ հենքը կկազմե։

Ահավասիկ թե ինչո՞ւ Ս. Էջմիածնի ծագումը, սրտառուչ ավանդությամբ մը, հայ ժողովուրդին խղճմտանքը կկապե ուղղակի աստվածային աղբյուրին։ Ինքը, Միածինը, գլխավոր դերը ունի անոր ճարտարապետական լուսեղեն ոճին և անոր պարունակության մեջ միանգամայն։ Էջքը Աստուծո հայ հողին

---

* Առանձին հաճույքով քաղվածաբար հրատարակում ենք Բուենոս-Այրեսի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կենտրոնական վարչության պաշտոնաթերթ «Հայ կեդրոն» ամսագրի 1962 թվականի հուլիսի համարի սրտագին և ինքնատիպ մտածումներով, էջմիածնասիրական ջերմ և իրավ շնչով գրված խմբագրականը, ստորագրված Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Ապատյանից։ Այս առթիվ գոհունակությամբ արձանագրում ենք, որ գերաշնորհ Տ. Բաբգեն սրբազանի խմբագրապետության ներքո, «Հայ կեդրոն»-ը դարձել է Սփյուռքի մեր եկեղեցական մամուլի սիրված ամսագրերից մեկը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրություն

վրա, որ հայ. սիրտն է ու հոգին։ Նոր դաշինքը «փոքր հոտ»-ին գերագանց զորության մեջ, որ է Աստուծո և անոր բացվիլը երկնային ճշմարտություններու։ Ամեն դաշինք երկու կողմ ունի ի զորության։ Պայմաններեն մին առաջինին էջքն է և երկրորդը մյուսին վերելքը։ Զույգ բևեռներ, որոնք բնական օրենքով զիրար պիտի քաշեն և զիրար լրացնեն, կատարելու համար ներդաշնակ թավալումը պատմության մութին ու լույսին մեջեն, մեծ իրագործումներով։

Կարելի չէ հասկնալ հայ ժողովուրդը և անոր հայրենասիրությունը առանց Ս. Էջմիածնի։ Ս. Գրիգոր Լուսավորչի մեծագործության խորհրդանշանն է անիկա։ Կանգուն կոթողը՝ հայ ժողովուրդի անմահության քրիստոնեական ըմբռնումի նոր կարգի մը մեջ։ Զայն կարելի է նմանցնել անմար փարոսին՝ կեցած մեր հավատքի ժայռին վրա, կյանքի և պատմության փոթորիկներուն դիմաց։ Լույս մը, որ չկրցան մարել մրրիկները և որուն ճառագայթները լուսավորեցին և ջերմացուցին ցուրտը մեր դժխեմ օրերուն, և հայ մտքի և սրտի բեղուն հողերուն մեջ ծաղկեցուցին ծիլերը իմաստության և բարիին։ Առանց Ս. Էջմիածնի, կարելի չէ հասկնալ մեծ գործը Ս. Մեսրոպի բանավոր լուսավորության, և ոչ ալ հանկարծարուխ պոռթկումները հայ հանճարին։

Ուրանալ Ս. Էջմիածինը պիտի նշանակեր ուրանալ ամբողջ մեր պատմությունը իր բոլոր իրագործումներով և ապագա կարելիություններով։ Ան խտացած մեր ժողովուրդն է, նյութին հետ բայց նյութը արհամարհող հոգեկան ճշմարտությունը։ ԶԱստված կարելի չէ խաբել այն բոլոր գանձերով, որոնք մարդկային սիրտը, որ գերին է նյութին, կրնան շլացնել միայն։ Ս. Էջմիածինը սիրտն է ժողովուրդի մը, որ մաքրեց զայն բոլոր դարդերեն աշխարհի, արմատախիլ ըրավ բոլոր փշալից սերերը ժամանակավոր բաղձանքներու և իրերու և զայն պատրաստեց Աստուծո բնակության համար միայն։

... Հայը էջմիածնական է և էջմիածնասեր անոր համար, պատմության մեկ անհիմանալի և անխուսափելի ներգործությամբ։ Ու ինչպե՞ս չվշտանա հոգին հայ ժողովուրդի պատմության իսկական ժառանգորդներուն, երբ լկտի շահեկանությամբ մը կհայհոյվին և կծաղրվին այդ կոչումները։ Ու անոր դեմ նույնարժեք կուզե տեսնվիլ փխրուն իրականություն մը, տխուր մտայնության և քաղաքական հետապնդումներու արդյունք։

Ու հիմա անցյալեն վերջ ներկային նորօրինակ ողբերգությունը։ Պատմությունը ծալլըված է ու նետված մեկ կողմ և ջանքը կըլլա նոր պատմություն գրելու։ Դարերու փորձառություններ և սրբություններ կարհամարհվին ու կենթարկվին ավերի։ Շենքերուն համար չէ մեր խոսքը, այլ շենքին համար հոգիին, որ հայ նկարագրին առաքինություններով գեղեցկացավ քրիստոնեական հավիտենական սկզբունքներու լուսավոր պայծառության մեջ։ Եվ սակայն Ս. Էջմիածին մեր պարտություններուն և նահանջներուն դեմ տակավին կկենա իբրև հզոր հիշեցում և կանչ զգաստության։ Կապրի ան դեռ և պիտի ապրի շարունակ, հակառակ այն մահացու վերքին, որ տրվեցավ անոր, և հակառակ այն վիշտերուն, զորս տակավին կպատճառեն անոր սրտին անողա վերագրումները անհարազատ մտածողներու։

Կապրի, որովհետև կարելի չէ սպանել հոգին, որ գաղափարին իսկությունն է։ Բացարձակին չեն հասնիր սլաքները նյութակերտ աղետներու, որոնք կլարվին չարին ուժերուն կողմե, խորտակելու համար հավիտենական իրողություններ։ Աստված կապրի Ս. Էջմիածնին մեջ. ու Ս. Էջմիածին իր կարգին հոգեղեն իրականություն մըն է Աստուծո մեջ, որուն ծոցեն հայ ժողովուրդը ամբողջ կընծայվի հավիտենական սեղանին։

Մեր բոլոր սրբություններուն գերազանցն է Ս. Էջմիածին, մեր Սրբություն Սրբոցը, ուր իջած է Աստված և տակավին կխոսի մեր ժողովուրդին հետ։ Անով իջավ լույսին փառքը մեր հողին վրա և ծաղկեցուց հոն բյուրազանգ ծաղիկները հոգիի և մտքի գեղեցկության։ Ու կշարունակվին անընդհատ դրախտաբույր ներշնչումները մեր կյանքին, իմաստավորելով ներկան, ներքին ժառանգության մը անուրանալի շնորհներով, որոնք Ս. Էջմիածնով հայ ժողովուրդինը եղան։

Փա՜ռք Ս. Էջմիածնին։

Բ.

## ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԿԻՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ

*«Էջմիածին» ամսագրի խմբագիրը վերջերս տեսակցություն ունեցավ Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական նախկին պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի հետ, որը գտնվում է Մայր Աթոռում։*

*Ասողիկ սրբազանը 1962 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընտրվել է Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ։ Սրբազանը միաժամանակ Մայր Տաճարի ժամօրհնողն է և Հոգևոր Ճեմարանում դասավանդում է Ներածություն Ս. Գրոց։*

*Սրբազանը ընդունելով «Էջմիածին» ամսագրի խմբագրին, սիրով պատասխանեց նրա հարցերին։*

*Ստորև ներկայացնում ենք այս տեսակցությունը իր շահեկանության համար։*

**Հարց.**— *Ո՞ր երկրներն են մտնում Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակության մեջ։ Քանի՞ եկեղեցիներ և դպրոցներ կան և ինչքա՞ն է հայ բնակչության թիվը։*

**Պատասխան.**— *Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակության մեջ կմտնեն Հնդկաստանը, Պակիստանը, Բիրման, Չինաստանը, Ճապոնը, Մալայան, Ինդոնեզիան, Ավստրալիան, Նոր-Զելանդան։ Ամենեն ընդարձակ և լայնածավալ թեմն է ան ամենայն Հայոց Հայրապետության, թեև ցանցառ հայ բնակչությամբ։ Այսպես, օրինակ, Հնդկաստանի մեջ կա շուրջ 550 հայ, Պակիստան՝ 30, Բիրմա՝ 40, Չինաստան՝ 25, Սինգապուր՝ 25, Ինդոնեզիա՝ 35, Նոր-Զելանդա՝ 40 և Ավստրալիա՝ 1 000։*

*Ավստրալիո հայ համայնքը ամենեն երիտասարդ և աշխույժ հայ համայնքն է, ուր երթալով հայերը կշատնան գաղթականական նոր հոսանքներով, որոնք կուգան ի մասնավորի Եգիպտոսեն, Սուդանեն և այլ երկիրներե։*

*Ծայրագույն Արևելքի այս երկիրներուն մեջ կան 14 հայ եկեղեցիներ, բայց այժմ ունինք միայն երեք քահանա, մեկը՝ Կալկաթա, երկրորդը՝ Մադրաս և երրորդը՝ Սիդնեյ։*

*Թեև հեռավոր այս երկիրներուն մեջ հայ համայնքներու թիվը նվազագույնին հասած է բացի Ավստրալիայեն, սակայն հայ եկեղեցիները հարուստ են և ի վիճակի՝ ավելի շատ թվով քահանաներ պահելու, եթե այդ երկիրներու քաղաքական և տնտեսական արգելքները չըլլան։*

*Հայերու գլխավոր զբաղումը այս երկիրներու մեջ առևտուրն է։ Կան նաև պետական պաշտոնյաներ, բժիշկներ, ուսուցիչներ, ճարտարապետներ, ինժեներներ։*

*Ամենեն հին գաղութը, անշուշտ, Հնդկաստանն է։ Ըստ Զենոբ Գլակի վկայության, շատ հին ժամանակներեն, երկու հնդիկ ազնվական ընտանիքներ, իրենց աստվածներով, սովորույթներով, կրոնական հավատալիքներով եկած և հաստատված են Հայոց Տարոն աշխարհի մեջ։ Որով հնդիկ և հայ բարեկամությունը հինեն կուգա և այդ հարաբերությունը եղած է միշտ ջերմ, եղբայրական։ Այսօր ալ հայ և հնդիկ դարավոր բարեկամությունը*



Հնդիկ Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն Բասիլիոսը գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի հետ

կշարունակվի։ Միայն վերջին դարերու մեջ, ըստ պատմական տվյալներու, Հնդկաստանի մեջ հայ և հնդիկ ժողովուրդներու բարեկամությունը շուրջ 400 տարվան պատմություն մը ունի։

Այսօր ալ հայ տարրը, ինչպես անցյալի մեջ, երկրի ընդհանուր զարգացման և հառաջդիմության մեջ իր նպաստը կբերե, ինչ որ արդարորեն կգնահատվի հնդիկ ժողովուրդի և անոր արդի ղեկավարներուն կողմե։

Պետք է սակայն ըսել, որ այսօրվան հնդկահայ գաղութը անցյալի հարուստ, մեծ գաղութը չէ այլևս։ Ոչ ևս են Շահամիրյանները, Արզարները, Շմավոնյանները և շատ ու շատ ուրիշներ, որոնք կհանգչին իրենց իսկ շինած եկեղեցիներու գավիթներուն մեջ, մինչ իրենց կենդանության, հնդկահայ գաղութի ազգային կյանքը ոգևորող, եռանդուն գործիչներ էին։

Ներկա սերունդը անոնց թողած վարկովը և բարի համբավովը կապրի։

Այսօր Կալկաթայի մեջ ունինք Հայոց Մարդասիրական ճեմարանը, որ 140 տարվան կյանք մը ունի իր ետին։ Ունինք նաև Դավթյանց աղջկանց վարժարանը։ Այս զույգ դպրոցներուն աշակերտներուն և աշակերտուհիներուն թիվը կհասնի մոտ 150-ի, որոնց մեծ մասը Կալկաթայեն է և կարևոր մաս մըն ալ Իրանեն և Իրաքեն կուգա։

Նախապես ունեցած ենք հայկական դըպրոցներ նաև Մադրաս, Ռանգուն, Սուրաբայա (Ինդոնեզիա), զուտ հայերեն սորվեցնելու համար այդ քաղաքներուն մեջ ծնած հայ մանուկներուն։

Հարց.— Ինչպե՞ս է ուրեմն հայ համայնքների ապագան այդ երկրներում, ո՞րն է ազգապահպանման մեծագույն ազդակը։

Պատասխան.— Այդ երկիրներուն մեջ տարիքը առած մարդիկ խաղաղ կերպով կապրին իրենց կյանքը, հավատարմորեն կառչած ազգային ավանդություններուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հայ լեզվին, մինչ երիտասարդ սերունդը բախտ փնտռելու համար կգաղթե երկրե երկիր, իսկ Նոր-Ջուղայեն թարմ հոսանք չի գար հիներու տեղը լեցնելու և թարմացնելու համար։

Բացառություն է միայն Ավստրալիան, որ կապրի նոր կյանքով։ Այդ երիտասարդ համայնքի մեջ կա եռուզեռ ու ազգային ոգի, կենսունակություն։ Ավստրալիան ապագա խոստացող նոր գաղութ է, եթե սակայն կարողանա հավաքաբար ինքզինքը պաշտպանել ձուլման վտանգին դեմ։ Ավստրալիան ալ ԱՄՆ-ի նման մեծ ձուլարան մըն է։ Անհուն ճիգ, աշխատանք, զոհաբերություն պետք է հա՛յ պահելու այս խոստումնալից համայնքը։

Սփյուռքի մեջ ինչպես ամեն տեղ, Ավստրալիո մեջ ալ հայը հայ պահելու մեծագույն

*և վճռական ազդակը Հայ Եկեղեցին և հայ դպրոցն են, ինչպես և վերածնած Մայր Հայրենիքի լուսավոր իրականությունը։*

**Հարց.**— *Ինչպիսի՞ն է հեռավոր այդ հայ համայնքների վերաբերմունքը դեպի Ս. Էջմիածինը։*

**Պատասխան.**— *Կարևոր հարց մըն է այդ մեր եկեղեցիին համար, Անթիլիասի տագնապեն ասդին։*

*Բայց ամենայն վստահությամբ պետք է ըսեմ և շեշտեմ մանավանդ, որ Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի ոչ մեկ հայ համայնքի համար այդ հարցը գոյություն չունի։ Անոնք բոլորն ալ իրենց նախնիքներու նման հավատարիմ զավակներն են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և անկե զատ ու անկե ավելի սիրելի ոչ մեկ հեղինակություն չեն ճանչնար։ Ս. Էջմիածինը եղած է և է միշտ իրենց Սրբություն Սրբոցը և այդ մասին երկու կարծիք չկա և չի կրնար ըլլալ Ծայրագույն Արևելքի բովանդակ հայության համար։ Ինչպես գիտեք պատմութենեն, Հնդկահայերը իրենց անձերով և գանձերով նվիրված են Ս. Էջմիածնին և Ամենայն Հայոց Հայրապետին, բոլոր ժամանակներու մեջ, ինչպես և այսօր։*

*Անոնք բոլորը հեռավոր այդ ափերուն վրա իրենց աչքերը սևեռարիր հառած են դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ իրենց կյանքի և գոյության միակ ամրոցն է, հույսի աշտարակը։ Որով, որքան Ս. Լուսավորչի Աջը զորավոր կերպով հովանի ըլլա անոնց վրա, այնքան երկար կապրին և կտևեն, հեռու և օտար ափերուն վրա։*

*Ազգապահպանման այս դժվարին բայց վսեմ գործին մեջ, մենք կարիքն ունինք նաև մեր Հայրենի բարեխնամ կառավարության և մեր բոլոր ազգային կազմակերպություններու օժանդակության և աջակցության։*

**Հարց.**— *Որպես Հայրապետական պատվիրակ, կազմակերպչական ի՞նչ աշխատանքներ կատարել եք Ձեր պաշտոնավարության ժամանակամիջոցում։*

**Պատասխան.**— *1957 թվականին նշանակվեցա Հայրապետական պատվիրակ, երբ կազմվեցավ Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակությունը, կեդրոն ունենալով Կալկաթան (Հնդկաստանի մեջ) և Սիդնեյը (Ավստրալիո մեջ)։*

*Հնդկաստանի մեջ պաշտոնավարությանս ընթացքին հանդիպեցա որոշ դժվարություններու և հակառակ ջանքերուս չկրցա ստեղծել թեմական խորհուրդ մը Կալկաթայի մեջ։*

*Հնդկահայ համայնքները կկառավարվին կանոնադրությամբ մը, որ 150 տարվան հնություն ունի։*

*Ըստ այդ կանոնադրության, Հնդկահայ համայնքը, իր եկեղեցիներով և դպրոցներով, կկառավարվի 11 հոգիե բաղկացած Կալկաթայի եկեղեցական խորհուրդեն, բոլորն ալ աշխարհական։*

*Բայց այդ կանոնադրությունը Հնդկաստանի մեջ օրենքի ուժ ունի, որովհետև հնդկական բարձրագույն դատարանին կողմե անցյալին մեջ վավերացված և արձանագրված է։*

*Ավստրալիո մեջ ունեցանք նաև կազմակերպչական գործունեություն։ Այնտեղ կազմակերպեցինք հայ համայնքը։ 1957 թվականին օծվեցավ Սիդնեյի առաջին հայ եկեղեցին, իսկ երկրորդը օծեցինք 1962 թվականի ապրիլին Մելբուռնի մեջ, մեծ հանդիսությամբ։*

*Մեր հաճախակի հովվական այցելություններով ջանացինք հեռավոր հայ համայնքներու կապերը ամրապնդել Մայր Աթոռի հետ, տեղական եկեղեցիներու կարիքներուն համար ձեռնադրեցինք սարկավագներ, քահանաներու պակասը կերպով մը լրացնելու և եկեղեցիները միշտ բաց պահելու համար հավատացյալներու առջև։*

**Հարց.**— *Հայերեն ի՞նչ հրատարակություններ կան Հնդկաստանում և Ծայրագույն Արևելքում։*

**Պատասխան.**— *Այսօր Հնդկաստանի մեջ չունինք ոչ մեկ հայերեն հրատարակություն։ «Նոր Ազդարար»-ը, որ մինչև 1956 թվականը լույս կտեսներ լոկ անհատի մը անձնական միջոցներով, դադրած է։ Ավստրալիո մեջ «Լույս» եկեղեցական ամսագիրը միայն, խմորատիպ, կհրատարակվի 1954-են ի վեր, խմբագրությամբ Տ. Արամայիս քահանա Միրզայանի։ Նույն ձևով «Ձայն» ամսագիր մըն ալ լույս կտեսներ չորս էջով, Ռուբեն Բարսեղյանի անձնական ջանքերով։ Խմբագրին մահովը ան ալ դադրեցավ։*

**Հարց.**—*Կառավարությանց վերաբերմունքն ի՞նչ է առհասարակ հայոց հանդեպ։*

**Պատասխան.**— *Հեռավոր Արևելքի բոլոր երկիրներուն մեջ հայերը, իբրև փոքրամասնություններ, օրենքին առջև հավասար իրավունքներ կվայելեն և իբրև օրինապահ տարր մը կհարգվին առհասարակ, իրենց պարկեշտ գործունեության համար։*

**Հարց.**— *Վերջերս Դուք այցելած եք Հարավային Հնդկաստանի Քերալա նահանգի Հընդկական Մալաբար եկեղեցիի կաթողիկոսին. ի՞նչ են Ձեր տպավորությունները։*

**Պատասխան.**— *Այո։ Քանի-քանի՛ անգամներ հրավիրած էին զիս պաշտոնապես, բայց հարմար ժամանակ չունենալուս, չէի կրցած պատասխանել իրենց հրավերին։ Ավստրալիայեն վերադարձիս, հարմար նկատեցի պաշտոնական այցելություն մը տալ հանուն Վեհափառ Հայրապետին անոնց եկեղեցվո*

*Պետին, Նորին Սրբություն Բասիլիոս կաթողիկոսին։*

*Քերալա նահանգը Հարավային Հնդկաստանի մեջ, ամենէն քրիստոնյա նահանգն է ամբողջ Հնդկաստանի մեջ։ Քրիստոնյաները բնակչության մեկ երրորդը կկազմեն, այլազան հարանվանությամբ։ Այդ նահանգին բնակչությունը ամենէն գրաճանաչն ու զարգացածն է ամբողջ Հնդկաստանի մեջ։ Քերալան դրախտանման գեղեցիկ երկիր մըն է, մշտադալար ու ծաղկուն բնությամբ։*

*Հուլիս 7-ին հասա Մալաբարի օդանավակայանը։ Կաթողիկոսը ղրկած էր իր անձնական ինքնաշարժը և ներկայացուցիչ մը զիս դիմավորելու։ Երկու ժամ ճամբորդելէ հետո, երեկոյան հասա Քոտայամ, կաթողիկոսանիստ քաղաքը, և ներկայացա Նորին Սրբություն Տ. Բասիլիոս ծերունազարդ կաթողիկոսին, իրեն հաղորդեցի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի եղբայրական ողջույնները։*

*Հակառակ 90 տարիներուն, շատ աշխույժ էր Նորին Սրբությունը և միտքը պայծառ։ Շատ տպավորվեցա սրբությամբ օծուն իր արտաքինեն։ Հաջորդ օրը, կիրակի, ներկա եղա ճեմարանի մատրան մեջ մատուցված պատարագին ու քարոզեցի անգլերեն լեզվով, մեր երկու եկեղեցիներու պատմական անցյալի ու եղբայրական հարաբերությանց մասին։*

*Տ. Փիլիպոս վարդապետը, որ իրենց միաբանության ամենէն զարգացած ու երիտասարդ վարդապետներեն մեկն է, իր բարձրագույն ուսումը առած Լոնդոնի մեջ, միշտ մեզ հետ էր իբրև թարգման, և որ մոտեն ծանոթ ըլլալով մեր եկեղեցիին Միջին Արևելք և Ամերիկա այցելություններուն առիթներով, մեզի պատմեց իրենց եկեղեցիներն ու դպրոցները, հակառակ անձրևային եղանակին։*

*Կիրակի, կեսօրե վերջ, Հ. Փիլիպոսի հետ ճամբորդեցինք 45 կիլոմետր, հանդիպելու համար իրենց նորընտիր կաթողիկոսին, որուն ի պատիվ ընդունելության մեծ հանդես մը կազմակերպված էր իր թեմի ժողովուրդին կողմե։ Ան ալ ծերունի մըն է, Տ. Տիմոթեոս արքեպիսկոպոս։ Մեզի խանդավառ ընդունելություն մը ըրին այս անակնկալ այցելության համար։*

*Մալաբար եկեղեցին շուրջ մեկ միլիոն անդամ ունի։ Ունին ցերեկօթիկ ու գիշերօթիկ բազմաթիվ դպրոցներ, ինչպես նաև քանի մը քոլեջներ, որոնցմե մեկ քանիին այցելեցի։*

*Երկու օր մնացի հոն։ Այդ միջոցին հանդիպեցա իրենց զանազան կազմակերպության մարմիններուն, ունեցա հոն հրատարակվող մալայալամ լեզվով թերթի խմբագրության հետ ասուլիս մը։ Այս թերթին տերն ու տնօրենը իրենց եկեղեցվո կարկառուն անդամներեն մեկն է։ Թերթը 100 000 տպաքանակով լույս կտեսնե ամեն օր և Հնդկաստանի այդ նահանգին ամենէն ծանոթ ու տարածված թերթն է։*

*«Էջմիածին» ամսագրի խմբագիրը, սպասած լինելով իր հարցերի շարքը, հրաժեշտ է առնում գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանից, ջերմ շնորհակալություն հայտնելով այդ շահեկան տեսակցության համար։*

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՎԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

*Հոկտեմբերի 28-ին, կիրակի, ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի Էվենստոն քաղաքի Ուզունյան տան մեջ տեղի է ունեցել Ս. Ներսես Շնորհալի աստվածաբանական վարժարանի պաշտոնական բացումը, եկեղեցական արարողությամբ։*

*Հանդիսության ներկա են եղել Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ և վարժարանի վարչական կազմի նախագահ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, վարժարանի տեսուչ և փոխ-նախագահ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ և փոխ-նախագահ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը, վարչական մարմնի անդամ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Էվենստոնի Ս. Հակոբ եկեղեցու հովիվ հոգեշնորհ Տ. Վարուժան վարդապետ Գաբարաճյանը, վարժարանի ուսուցիչ, տեսչի օգնական և մատենադարանապետ բարեշնորհ Հովհաննես սարկավագ Գասպարյանը։*

*Հանդիսության ներկա են եղել նաև հայ և օտար այլ հրավիրյալներ, որոնց թվում վարժարանի բարերար Հակոբ Ուզունյանի այրին՝ տիկին Սաթենիկ Ուզունյանը։*

*Դպրոցի բացման արարողությունից հետո տեղի է ունեցել վարչական մարմնի նիստը, ուր տեսուչ սրբազանը զեկուցել է կատարված աշխատանքների մասին։*

*Ս. Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական դպրոցը այժմ ունի երկու ուսանող։*

*Ժողովից հետո, քաղաքի Բիկ-Ջորջեն հյուրանոցում տրվել է ճաշկերույթ վարժարանի բացման առթիվ, որին մասնակցել են շուրջ 40 հայ և օտար հրավիրյալներ։ Ընդունելության ընթացքում Տ. Սիոն, Տ. Տիրան և Տ. Թորգոմ սրբազանները իրենց ելույթներում նշել են Ս. Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական վարժարանի օգտակար ձեռնարկի կարևորությունը։*

*Ճաշկերույթի ժամանակ ընթերցվել են նաև վարժարանի բացման ուրախ առիթով ստացված շնորհավորական հեռագրերը։*

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

# ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

## Բ

## ՊՈԼՍՈ ՀԻՆԳ ԴԱՐԸ

### 1

*Հինգ դար լրացավ այն օրեն ի վեր, երբ Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ Հովակիմ եպիսկոպոսը բազմեցուց Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա։*

*Անցնող այդ հինգ դարերը ուրույն շրջան մըն են Հայ Եկեղեցվո կյանքին մեջ, ու շահեկան մեկ գլուխը հայ ժողովուրդի պատմության։*

*Երկար դարեր քով-քովի քալած են անոնք՝ Հայ Եկեղեցվո պատմությունը և հայ ժողովուրդինը։ Մեր գերության դարերուն անոնք արդեն կշփոթվին. հայ ժողովուրդի պատմությունը ընդելուզված կքալե Հայ Եկեղեցվո պատմության հետ և մինչև մեր օրերուն հասնինք, չենք կրնար անջատել զանոնք իրարմե։*

*Նույնը նաև Պոլսո մեր հինգ դարերուն համար։*

*Պոլսո հայ գաղութին պատմությունը կարելի չէր զատել Պատրիարքական Աթոռի պատմութենեն, և փոխադարձաբար։ Քանի Եկեղեցին էր, որ կանձնավորեր հայ համայնքները, հայ կյանքը չէր կրնար դուրս ելլել Հայ Եկեղեցվո շրջափակեն։ Ոչ միայն հայ դպրոցները և բարեգործական հաստատությունները մարմին կառնեին ու կզարգանային Հայ Եկեղեցվո հովանիին տակ, այլ ամեն ինչ որ կապ ուներ հայ կենցաղին հետ. Հայոց Պատրիարքարանը տեսակ մը կառավարություն էր հայ ժողովուրդին համար։ Ան էր, որ կարտոներ իր նշանտուքներն ու պսակները, ան էր, որ կվճռեր իր ընտանեկան վեճերը, ան էր, որ պաշտպանություն կընծայեր իրեն՝ Ներքին պահերուն։ Այնպես որ Պոլսո Պատրիարքության պատմությունը իր մեջ կընդգրկե հայ գաղութինն ալ, բովանդակ այդ հինգ դարերու ընթացքին, թեև հայ կյանքը հաճախ Եկեղեցվո շրջանակեն դուրս ալ ելավ, ու հայ տարրեն մաս մը հեռացավ Հայոց Պատրիարքարանի հոգևոր իրավասութենեն։ Նույնիսկ այդ պարագային Հայոց Պատրիարքարանն էր, որ մնաց հիմնական կորիզը հայ գաղութին, բազկերակը անոր հուզումներուն։*

*Չկար ավելի պատշաճ առիթ՝ ակնարկ մը նետելու այդ հինգ դարերուն վրա։ Հանգրվանները ամենեն բարեդեպ պահն են ետև նայելու համար։*

### 2

*Աշխատությունը, որ կհետևի, մաս կկազմե, իրականին մեջ, գրվածքներու շարքի մը, որոնք պիտի պատմեն հայ ժողովուրդի կյանքը սուլթաններու լուծին տակ։*

*Վեցուկես դար թուրքին հետ ապրեցավ հայը։ Վեցուկես դարը փոքր շրջան մը չէ, որպեսզի լեցուն ըլլա դեպքերով, մանավանդ երբ այդ դեպքերը կընթանան բացառիկ պայ-*

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի Ա Բ-ից։

մաններու տակ՝ աշխատանքը խռովող մեծ տագնապներու շրջապտույտին մեջ։

Զ

Այս աշխատության ընթացքին պիտի խոսինք առաջին հերթին Պոլսո Հայ Պատրիարքության մասին, սկսելով առեղծվածային այդ Հովակիմ պատրիարքեն ու հասնելով մեր օրերուն։

Եվ այս դյուրին աշխատանք չէ։

Հինգ դարու ընթացքին 80-ի չափ պատրիարքներ նստած են Պոլսո Աթոռին վրա։ Տարբեր նկարագրով, տարբեր արժեքով ու տարբեր հեղինակությամբ դեմքեր, տարբեր ալ պիտի ըլլային անշուշտ իրենց գործունեությամբ, իրենց կատարած դերով և Հայ Եկեղեցվո պատմության մեջ իրենց գրաված տեղով։ Այդ դեմքերեն շատերը հետք մը չձգած գացին, ուրիշներ ալ եղան, որոնց գործունեության մասին ոչինչ հայտնի չէ։ Եղան ալ, ավա՜ղ, որոնց ետևեն սև բիծ մը մնաց։

Արդարև, Հովհաննես Կոլոտի և Հակոբ Նալյանի կողքին, օրինակ, որոնք փառքով պսակեցին իրենց շրջանը, և նաև այնքան ուրիշներու, որոնք տեր կանգնեցան Հայ ժողովուրդին իր փորձության ու դժբախտության պահերուն, պատրիարքներու ամբողջ շարան մըն ալ կա, զոր պատմությունը պիտի հիշե կ՚ամչնի։

Շրջան մը եղավ, որ պատրիարքները արագ-արագ հաջորդեցին իրարու։ Ու քիչ չեղան դեպքերը, երբ միևնույն դեմքը քանիցս եկավ Աթոռը բազմիլ։ Կարապետ Կեսարացին 5 անգամ նստած է Պատրիարքական Աթոռը։ 4-ական անգամ են նստած Դավիթ Արևելցին և Հովհաննես Խուլը, ու 3-ական՝ Եփրեմ Ղափանցին և Գրիգոր Կեսարացին։ 16 պատրիարքներ ալ 2-ական անգամ գրաված են Աթոռը։

Հաճախակի այս փոփոխություններուն մեջ ի՞նչ տեսակ փաստեր ծածկված են սակայն երբեմն։ Եթե մեկ կողմե դեր կատարած են օրվան ազդեցիկ հայոց կամայականությունները այդ փոփոխությանց մեջ, կամ սուլթաններուն ու վեզիրներուն շահագրգռությունը, նվազ դեր չեն կատարած անձնական փառասիրությունները, փոխադարձ թշնամությունները, ինչպես և կրքոտ պայքարը՝ Աթոռը իրարմե հափշտակելու համար։

Բավական է հիշել, որ միակ տասնամյակի մը ընթացքին, 1641-են 1650, 7 պատրիարք փոխված է Պոլիսը։

Պատրիարքներ ալ եղան, որ Պոլսո Աթոռը կռվան ըրին Էջմիածին հասնելու համար, Պատրիարքարանը դարձնելով հաճախ դավադրություններու բույն։ Շրջաններ ունեցավ Հայ Եկեղեցին, երբ հայ ժողովուրդը զրկված էր, ամենադույզն չափով մը անգամ, դեր ունենալ կաթողիկոսներու ընտրության առեն։ Լուսավորչի Աթոռը կերթային բազմիլ անոնք, որ ճարտարությունը կունենային շահին կամ սուլթանին և կամ ասոնց մարդոց կամքը շահելու։ Այդ շրջաններուն Պոլսո հայ ամիրաներուն քմահաճույքեն կախված էր այս կամ այն հոգևորականը այդ գահը բազմեցնել, և հոն կերթար բազմիլ հետևաբար ան, որ ամենեն ավելի հաճելի էր օրվան ամիրաներուն։

Կոլոտ ու Նալյան անշուշտ բացառություններ չէին։ Անոնցմե առաջ և անոնցմե հետո Պոլսո Պատրիարքական Աթոռը բազմեցան կարկառուն ուրիշ դեմքեր ալ, զորս չի կրնար հարգանքով չհիշել Հայ Եկեղեցվո պատմությունը, որպիսին էր, օրինակ, անոնցմե շատ առաջ, Գրիգոր Կեսարացին, թեև ան զուգադիպեցավ կրքերու բախման օրերու՝ պայքարներու ստիպվելով խառնվիլ ինքն ալ և անոնցմե շատ հետո ամբողջ շարան մը պատկառելի դեմքերու, որոնք պատվեցին իրենց շրջանը։

Դեռ խոսքը չենք ըներ ԺԵ և ԺԸ դարերու բանաստեղծ մեր պատրիարքներուն, որ աշխարհիկ մեր գրականության համեստ նախակարապետներն եղան և երգեցին ժողովուրդին լեզվով և անոր հուզումներով, ինչպես նույն այդ Գրիգոր Կեսարացին և Հակոբ Նալյանը, նույնպես Մելքիսեդեկ Սուլհին (1698—1699), Գալուստ Կայծակ Ամասիացին (1703—1704), Զաքարիա Վանեցին (1626—1631 և 1636—1639) ու նաև տարաբախտ Ավետիք Եվդոկիացին (1702—1703 և 1704—1706), որմե համով տաղեր կմնան, առանց դեռ հիշելու հին դարերու միակ մեծ երգիծաբանը՝ Մարտիրոս Ղրիմեցին, որ կարճ պահ մը (1659—1660) նստավ Պոլսո Աթոռին վրա ալ, և որմե երգիծանքի քանի մը գլուխ-գործոցներ կմնան։

Պատրիարքական Աթոռը դժնդակ պահեր անցուց մանավանդ այն շրջաններուն, երբ կաթոլիկ քարոզությունը թափ կուտանար հայ ժողովուրդի ծոցին մեջ։ Կռնակը Ֆրանսայի տված, Հռոմ ուզեր էր գրավել այն օրերու հայ միջնաբերդը՝ Պոլիսը։ Եվ ան կիրարկեց խայծի բոլոր ձևերը։ Առանց հիշելու տխրահռչակ Մելքիսեդեկ Գառնեցին, որ իր շահատակության ճամբուն վրա տարի մը Պոլսո Աթոռն ալ նստավ (1599—1600), իր նոր արկածախնդրության մեջ մխրճվելե և իր խիղճը վերջնապես վաճառելե առաջ Հռոմին, Պոլսո հայ պատրիարքներեն քանի մը ուրիշներ ալ, ինչպես Զաքարիա Վանեցին և Հովհաննես Խուլը, շուտով ինկան ծուղակը, ինչպես ուրիշ քանի մը եղկելիներ ալ իրենցմե հետո, և փոխարեն պատրիարքներ ալ եղան, ինչպես Գրիգոր Կեսարացին (երիցս պատրիարք

1601—1625 տարիներուն միջև), Դավիթ Արևելցին (դարձյալ երկու Պատրիարքական Աթոռը նստած 1643—1651 տարիներուն), Եփրեմ Ղափանցին (նույնպես պատրիարք եղած 1684—1702 տարիներուն շրջանին), որոնք բուռն պայքար բացին մարդորսության դեմ, պայքար, զոր ծայրահեղության պիտի հասցնեն, ավա՜ղ, Ավետիք Եվդոկիացին (1702—1703 և 1704—1706), առիթ տալով դժբախտ դեպքերու, որոնց զոհ պիտի երթար և ինքը։ Հաջորդեցին ուրիշներ, ինչպես Կոլոտ (1715—1741) ու Նալյան (1741—1749 և 1752—1764), որոնք մեղմ դիրք բռնեցին դավանական այդ կռիվներուն մեջ, ինչպես զգույշ պիտի ըլլար, իրենցմե հետո, Գրիգոր Պասմաճյան ևս (1764—1773), թեև դեպքերը դարձյալ ծայրահեղության պիտի մղեր անկե հետո Զաքարիա Կաղզվանցին (1773—1781)։

Դավիթ-Դանիելյան լարաքատիկ վեճերը Մայր Աթոռին մեջ Պոլիսն ալ պիտի վարակեին ճիշտ այդ օրերուն, իրենց հորձանքին մեջ քաշելով պահ մը Պոլսո Աթոռը ևս։

ԺԹ դարու սկիզբը արդեն շոշափելի էր վտանգը, որ Հայ Եկեղեցվո կսպառնար Կաթոլիկ քարոզության երեսեն։ Ուրացվողներու թիվը հետզհետե կշատնար, հոգևորականները փարա՛խը կլքեին տակավ, և ամիրաներուն մեջ ալ փոքր չէր կաթոլիկ դարձածներուն թիվը։ Օրվան պատրիարքները չէին կրնար անտարբեր մնալ հարաճուն այս վտանգին առջև։ Եվ արդարև պատմությունը կարձանագրե անոնց միամիտ ճիգերը՝ Հայ Եկեղեցվո Ծոցը վերադարձնելու մոլորյալները, ինչպես այդ եղավ Պողոս Ադրիանուպոլսեցի (1815—1823) և Կարապետ Պալաթեցի (1823—1831) պատրիարքներուն օրով, երբ միության ամուլ փորձերն և անոնց կցված եղերական դեպքերեն հետո, Հռոմ, կաթոլիկ պետության աջակցությամբ, հուսկ ուրեմն պիտի հաջողեր հայ կաթոլիկ ուրույն Պատրիարքություն մը ստեղծել Պոլսո մեջ 1830-ին, և նվիրագործել այս կերպով ճեղքը, զոր դարերե ի վեր կփորձեր բանալ հայ ժողովուրդի ծոցեն ներս։

Պատրիարքական Աթոռ եկան նստիլ, ԺԹ դարու կեսերուն մոտ, կարգ մը դեմքեր ալ, որոնց օրով Պոլսո հայ համայնքը ինքն սկսավ խլրտիլ ներսեն։ Ժողովրդական խավերու պայքարն էր միահեծան պատրիարքներու և ամիրաներու կամայականության դեմ։

Ամբողջ 30 տարի, այսինքն Ստեփանոս Աղավնի (1831—1839 և 1840—1841), Աստվածատուր (1841—1844), Մատթեոս Չուխաճյան (1844—1848), Հակոբ Սերոբյան (1839—1840 և 1848—1858) և Գևորգ Քերեսթեճյան (1856—1860) պատրիարքներուն օրով էր արդարև, որ Հայոց Պատրիարքարանը թատր եղավ բուռն պայքարներու, որոնք 1860-ին պիտի հանգեին Ազգային Սահմանադրության, հույսերու և հուզախառնության երկար շրջան մը բանալով հայ համայնքին։ Սույն հիշվածներեն երկուքը՝ Մատթեոս և Գևորգ, հետո նստեցան նաև Կաթողիկոսական Աթոռը, առաջինը 1858—1865, և երկրորդը՝ 1866—1882։ Մատթեոս, ծանոթ նաև իր մատենագրական աշխատանքներով, իբրև պատրիարք ուշագրավ եղավ ամիրաներու հանդեպ իր անհաշտ դիրքով և իր հախուռն գործունեությամբ, իսկ Գևորգ, որ Բրուսան շենցուցեր էր պատրիարք դառնալե առաջ, հին հոգևորականի տիպար էր ու չկրցավ հաշտվիլ նոր օրերու մարդոց հետ, երբոր նստավ պատրիարքի Աթոռը։ Փոխարեն, լուսավոր հետք մը պիտի ձգեր Էջմիածնի մեջ՝ Ճեմարանը, որովհետև հոն տարբեր պայմաններ էին։

Մոտենալով մեր օրերուն, առաջին պատրիարքները, զորս Սահմանադրությունը բերավ գործի գլուխ, տարբեր եղան իրենց խառնվածքով ու դերով։ Ասոնցմե Սարգիս Ադրիանուպոլսեցի (1860—1861), Ստեփաննոս Մաղաքյան, որ երկու տարի տեղապահություն վարեց (1861—1863) և Պողոս Թաքթաքյան (1863—1869) զուգադիպեցան Սահմանադրության մեղրալուսնի օրերուն ու քալեցին օրվան հոսանքին հետ։

Խրիմյան (1869—1873) Պատրիարքական Աթոռ կուգար արդեն կուռք դարձած, բայց իր անզուսպ նկարագիրը չկրցավ տոկալ Սահմանադրության կաշկանդումներուն։ Ստիպվեցավ Աթոռը լքել՝ ժողովուրդին ցավերուն նվիրվելու համար դարձյալ, և անոնց անունով երթալ բախելու համար Եվրոպայի խղճմտանքին ու ձեռնունայն դառնալու համար ես։ Երբոր Համիդ զայն աքսոր ղրկեց Երուսաղեմ, զայն ավելի ամրացուց հայ ժողովուրդի պաշտամունքին մեջ։ Ազգը, միահամուռ, Կաթողիկոսական Գահը բերավ զայն իր աքսորեն, հուսախաբվելու համար շուտով դարձյալ միահամուռ։ Ինչպես Պատրիարքական Աթոռին, նույնպես Կաթողիկոսական Գահուն վրա չկրցավ մեծ դեր խաղալ Հայոց Հայրիկը։ Ան պատմության անցավ Հայոց աշխարհի կսկիծներուն արձագանք եղած, անոնցմով նույնացած և զանոնք երգած ըլլալուն համար առավելապես։

Ներսես Վարժապետյան (1874—1884) պատմական րոպեի մը՛ն էր, որ զոհվեցավ Ազգին գլուխը։ Հայկական դատը սեղան եկավ իր օրով, և առավելապես իր ջանքերով։ Քաջությունն ունեցավ ան Եվրոպայի դռները բախելու հանուն հայ ժողովուրդի դատին, և երբ Եվրոպան զգետնեց զինքը իր հույսերուն մեջ, նույնքան ճարտար եղավ Համիդի վրեժ-

խնդրությունը հեռացնելու։ Օժտված մտավոր որոշ պատրաստությամբ, անստույգ նկարագրի տեր, կարճ կյանք մը ունեցավ սակայն, և չկրցավ Լուսավորչի Աթոռն իսկ բազմիլ, թեև ընտրված էր։ Իր հակառակորդները իր քաղաքականությունն էր, որ հարվածեցին։ Մեկը չկրցավ դպչիլ մարդուն։

Իր հաջորդը՝ Հարություն Վեհապետյան (1885—1888) իր անունը Երուսաղեմի կապեց քան թե իր Պոլսո պատրիարքության։ Մոլեռանդ և խստաբարո, Պոլսո մարդը չէր ինք այդ օրերուն, ու նախընտրեց Երուսաղեմը։ Բայց հոն ալ, իր գառամյալ տարիներուն խռովիլակ մը պիտի դառնար լոկ, պատճառ հանդիսանալով, որ ստեղծվի դժբախտ այն թնճուկը, որ տասնյակ տարի ալեկոծեց հայ կյանքը Պոլսո և Երուսաղեմի մեջ։

Համիդի տիրապետության վերջին 18 տարիները ավելի ահավոր եղան։ Անոնք զուգադիպեցան այն պոռթկումներուն, զորս հայ ժողովուրդը ունեցավ տեղ-տեղ իր ցասումը հայտնելու համար վարչակարգի մը դեմ, որ հետզհետե զարհուրելի կդառնար։

Հայոց պատրիարքներն ու Պատրիարքարանի ազգային ղեկավարները չէին կրնար դեպքերուն խաղալիք չըլլալ այդ ահավոր շրջանին։ Երեք պատրիարքներ նստեցան այդ շրջանին Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա, Խորեն Աշըգյան (1888—1895), Մատթեոս Իզմիրլյան (1895—1896) և Մաղաքիա Օրմանյան (1896—1908), և երեքն ալ տարբեր կերպով ըմբռնեցին իրենց դերը ու տարբեր քաղաքականություն վարեցին հայ ժողովուրդի գլխուն կուտակված ամպերը հեռացնելու և երբ փոթորիկը այնուամենայնիվ պոռթկա, մեղմելու համար աղետը։ Աշըգյան ծնրադրեր էր գազանին առջև ողոքելու համար զայն, Իզմիրլյան՝ Եվրոպայի վրա հույս դրած, ավելի ևս գրգռեր էր գազանը, Օրմանյան ջանացեր էր գազանը զսպել։ Մտավոր պատրաստություն ունեին երեք պատրիարքներն ալ, բայց Օրմանյանն եղավ, որ մեր աչքերուն իսկ առջև հսկայի մը պես ծառացավ Հայ Եկեղեցվո պատմության մեջ, Պոլսո Աթոռը անգամ մը ևս պսակելով շուքով և փառքով, Նալյանէն երկու դար հետո։

Չորս հոգևորականները, որոնք Պատրիարքական Աթոռը նստան «Երիտասարդ-Թուրքեր»-երու տիրապետության օրով,— Մատթեոս Իզմիրլյան (1908—1909), Եղիշե Դուրյան (1909—1910), Հովհաննես Արշարունի (1910—1913) և Զավեն Եղիայան (1913—1915 և 1919—1922),— տարբեր պահերու զուգադիպեցան։ Իզմիրլյան 12 տարվան աքսորե կդառնար փառքով, բայց դեռ չհաշտված նոր կլիմային հետ՝ հայ ժողովուրդը զայն Էջմիածին տարավ բազմեցուց. երբեմնի «Երկաթե պատրիարք»-ը նոր օրերու մարդը չէր սակայն։ Դուրյանի մտավոր բարձր ձիրքերը, անձին հմայքն ու պատկառանքը բավական չեղան արդյունավոր ընելու Պոլսո իր պատրիարքությունը, ինչպես պիտի ըներ, օրինակ, անոր տասնամյա պատրիարքության շրջանը Երուսաղեմի մեջ (1921—1930)։ Հովհաննես Արշարունի գլուխ մը չարձանագրեց իրեն համար իր եռամյա պատրիարքությամբը, որովհետ՝ բացառիկ էր այդ շրջանը, երբ կուսակցական կրքերը իրենց մոլեգնության հասած էին Պոլսո հայ կյանքին մեջ և երբ Բալկանյան պատերազմը նոր կացություն կստեղծեր հայ և թուրք հարաբերության համար և մեր հարևաններու քաղաքական շրջադարձը կվերարաներ։ Զավեն ամենեն դժբախտն եղավ պատրիարքներուն. հույսի պահե մը հետո, որ մեզ պարգևեր էր հայկական դատը, պիտի պայթեր մեծ փոթորիկը, աքսոր քշելով օրվան պատրիարքն ալ, սփոփանքի քանի մը տարի շնորհելե հետո աքսորեն դարձին, բայց ի վերջո հեռավոր ափեր նետելով զայն ալ իր ժողովուրդին հետ։

Զրկված իր դարավոր իրավունքներեն ու ամփոփված հոգևոր պետի մը համեստ պատյանին մեջ, Պոլսո հայոց պատրիարքը բացառիկ դեր մը այլևս չունի Նոր Թուրքիո օրով։ Դժգույն պատրիարք մը եղավ Մեսրոպ Նարոյան (1926—1945)։

Ոչ իր համեստ ուժերը ոչ ալ օրվան պայմանները թույլ կուտային Արմաշի նախկին վանահոր անուն մը թողուլ։ Գևորգ Ասլանյան, որ երկիցս տեղապահ եղավ (1920—1926 և 1945—1950) առանց հաջողելու Պատրիարքական Աթոռը բազմիլ, ծափերու մեջ չհեռացավ աշխարհեն։

Գարեգին Խաչատուրյան իր տասնամյա պատրիարքության ընթացքին (1950—1961) սփոփանք մը եղավ իր հոտին համար, խոհեմությունը քծինքի չվերածեց, սիրաշահեց՝ բայց չստրկացավ, ուզեց շունչ տալ հայ կյանքին ու Պատրիարքական Աթոռին հմայք, և աչքերը փակեց իր ստեղծած դպրեվանքին առաջին բերքը չտեսած։

Շնորհք Գալուստյան 1961-ին անոր թափուր թողած Աթոռը նստավ։ Հինգ դարերը, զորս կտոննենք այսօր, թող իրեն ուղեցույց ըլլան։

Այս դեմքերեն շատերուն պիտի անդրադառնանք։ Եթե այժմեն իսկ քանի մը գիծեր տվինք անոնց գործունեությենեն, ընդգծելու համար էր միայն, թե ի՛նչ ահավոր բեռ էր դրած ճակատագիրը անոնցմե յուրաքանչյուրի ուսին, և թե որքան դժվար էր հաճախ նավը անսայթաք անցնել փոթորիկներու մեջեն։

Չկարծենք, սակայն, որ Պոլսո Պատրիարքական Աթոռը իր պատմությունը գրելու

...ամար բավ կսեպե իր պատրիարքները։ Այդ Աթոռը պետք է ըմբռնել իր ամբողջ կազմով, իր շրջապատո՛վ ալ։ Շատ անգամ պատրիարքներուն դերը աւելի գույգն եղած է քան ...նոնցը, որոնք իրենց շուրջն են եղած և որոնց ...աճախ վարած են զիրենք։ Հոգևորական թե ...աշխարհական այլազան դեմքեր կզարդարեն ...ոլսո հինգ դարու կյանքը, թեև պետությունը ...պատրիարքը ճանչցած է միշտ իբրև գլուխ ...ազգին, և պատմությունն ալ անոր կկապե իր ...դեանը։ Թողունք ամիրաները, որոնց քմայք...ներուն հետ քայլ է նետած հաճախ օրվան ...պատրիարքը, աշխարհական մարդիկ են ե...ած, որոնց շատ անգամ կոթնած է ան, և ...որոնք, քանի մոտենան մեր օրերուն, այնքան ...իրական են դարձած Պատրիարքարանի մեջ։ ...ական սովոր է թիվը այն հոգևորականներուն, ...որոնք առանց Պատրիարքական Աթոռին վրա ...ատած ըլլալու, իրենց շեշտը դրած են իրենց ...ժամանակին վրա, և եղած են նույնիսկ քահա...աններ, որոնք սովերի մեջ ձգած են մեծ ...արիտղոսները։ Մեր օրերուն քահանաներ ալ ...խեսանք, որոնց առջևեն ակնածանքով կանգ...ներ թաղին քարոզիչ եպիսկոպոսը։

4

Բայց Պոլսո հայ գաղութին պատմությունը ...իմիայն Պատրիարքական Աթոռին պատմու...թյունը չէ։

Պոլիս դեր կատարեց հայ ժողովուրդի ...պատմության մեջ նաև տարբեր մարզերու ...վրա, ավելի ճիշտ՝ գրեթե ամեն մարզի վրա։ ...ներ կատարեց նախ անոր համար, որ Օս...մանյան կայսրության մայրաքաղաքն էր ե...ղեր ան ամբողջ հինգ դար։ Ու բնական էր, որ ...մայրաքաղաքը դառնար ան և հայուն համար, ...նորհիվ առանձնաշնորհյալ այն դիրքին, զոր ...հայ տարրը կվայելեր հոն օսմանյան գահուն ...անմիջական հովանիին տակ, ինչպես կվայե...լեին ուրիշ ազգեր ալ, իսլամ ըլլային թե ոչ։

Պոլիսը պիտի չկրնար կատարել սակայն ...այն դերը, զոր իսկապես կատարեց հայ ժո...ղովուրդի պատմության վերջին հինգ դարե...րուն մեջ, եթե հոն հաստատված չըլլար, դեպ...քերու բերմամբ, Թուրքիո Հայոց Պատրիար...քական Աթոռը։ Այդ Աթոռին շնորհիվ էր, որ ...հայ ազգային կյանքը ծաղկեցավ օսմանյան ...մայրաքաղաքին մեջ, հեղինակություն և ու...ժ ...ղեցուց դառնալով մոտավոր և հեռավոր բո...լոր հայ շրջաններուն համար։

Ծանր բեռ է խոսիլ Պոլսո հայ գաղութին և ...իր դերին մասին։ Դժվար է, նյութին ընդար...ձակության համար նախ։ Բազմաթիվ երես...ներ կընդգրկե այդ նյութը, որովհետև հայ ...ժողովուրդի արևմտյան հատվածի պատմու...թյունը պահ մը եկավ կեդրոնանալ սուլթան...ներու մայրաքաղաքին մեջ. հայ ժողովուրդի քաղքերակը դարձավ ան երկար ժամանակ մը, ու հայ կյանքի շատ մը երևույթները հոն սկիզբ առին կամ հոն զարգացան։ Պոլսո հայ գաղութին պատմությունը գրել կնշանակե հետևաբար հայ ժողովուրդի հինգ դարու կյանքը պատմել կերպով մը, որովհետև ա֊ ռավել կամ նվազ չափով, և ուղղակի թե անուղղակի ան առնչություն ունեցավ այդ կյանքին բոլոր փուլերուն հետ ալ։ Դժվար է և անոր համար, որովհետև նյութը շատ բարդ երեսներ ալ ունի, որոնք տարբեր եզրակացության կբերեն, տարբեր անկյուններե դիտված ատեն։ Շատ է գրված Պոլսո հայ գաղութին մասին, բայց երբեք լրիվ։ Թերի զննած ու սխալ դատած են զայն հաճախ, ու բնականաբար հակասական են տրված վճիռներն ալ։ Դժվարության կրախինք, եթե փորձենք վերջնական եզրակացության հանգիլ նոր օրերու լույսին տակ մեկ հայտարարի բերելու համար այդ հակընդդեմ տեսակետները։

Իրականին մեջ Պոլիս գաղութ մը չէր իր ուրույն դիմագծությամբ, ոչ ալ հայ համայնք մը իր սեփական հատկանիշներով։ Այդպես, ան հաճախ փորձեր էր ըլլալ, բայց միշտ ձախողեր էր։ Հազիվ կերպարանք առնել սկսած, նոր տարր մը եկեր, հոսեր էր ծոցը, ու նոր դիմագծություն էր տվեր անոր։ Հետևաբար անհեթեթ պիտի ըլլար Պոլիսը զննել իբր միատարր գաղութ մը, իր հանրային կյանքին որքան իր քարքերուն և սովորությանց մեջ. միակ հնարավորը հետևիլը պիտի ըլլար, քայլ առ քայլ, անոր կյանքին դարե դար, և անոր այլազան դիմահեղումներուն, ու փնտռել նպաստը, զոր ան ստացավ ուրիշներե, և նպաստը, զոր ուրիշներուն բաշխեց փոխարեն։

Պոլիս խճանկար մըն էր ավելի, ուր բոլոր հայ գավառներեն մասնիկ մը կար։ Ամեն պատահարի հետ յավառներեն նոր քարավան մը խուժեր էր Պոլիս, միասին բերելով իր բարքերն ու սովորությունները, իր բարբառն անգամ։ Ճիշտ է, որ իր ծոցը խուժող բոլոր այդ տարրերը կձուլվեին իր մեջ, բայց հաճախ ալ կայլափոխեին զայն։ Այդպես էր որ դարերու ընթացքին հոն Պոլիսեն հետք մը չմնաց, և եկվորները տիրեցին Պոլսո, հաշտվելե հետո սակայն նոր կլիմային հետ, իրենց բարքերը խառնելով տեղվույն մեջ իրենց գտածներուն, իրենց բարբառը ձուլելով տեղական ռամկորենին հետ։

Այնպես որ, երբ Պոլիս կըսենք, պետք է հասկնալ հայություն մը, որ անընդհատ կնորոգվեր հոն, և որ անդադար գավառեն բարքեր կբերեր, մայրաքաղաքին պատշաճեցնելով զանոնք, ասիականը փորձելով խառնել եվրոպացիներեն իր տեսածներուն, հաճախ

կապկելով ու երբեմն յուրացնելով ուրիշներին տեսածը, տարբեր կենցաղ ստեղծելով թաղե թաղ ու դասե դաս։

Այդ գաղութը, ամսյայն պատմության կենտկայանա հոծ զանգված մը, որ ի վերջո որոշ դիմագծություն մը ստեղծեց իրեն և այլատարրեր կատարեց հայ ժողովուրդի կյանքին մեջ։

Գրեթե հինգ դարերու այդ պատմությունը վեպն է ժողովուրդի մը, որ կզգետնվի ամեն օր և դարձյալ ոտքի կկանգնի, կանցնի փոթորիկներեն և [illegible] ափ հանելու կրկին, կուրծք կուտա հեղեղին ու ալեկոծներուն և սպանդներուն, իր սուգին մեջ անվրդով, արցունքին մեջ խառնած, և երբեք չկորսնցնելով հույսը։

5

Պոլիս հայ դատին կեդրոնը դարձավ, ու դերը, զոր ան ունեցավ այդ դատին հետապնդման մեջ, մեկն էր իր կյանքին ամենեն ուշագրավ գլուխներեն, ինչպես է ամենեն շահեկան մեկ էջը հայ ժողովուրդի պատմության։ Այնպես որ, այս աշխատության ընթացքին չէինք կրնար չզբաղիլ Պոլսո այդ դերով ևս, մանավանդ որ ամբողջ կես դար, Բեռլինեն մինչև Լոզան, հայկական դատը իր վերջին փուլերեն անցավ Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքության անմիջական հովանիին տակ։

Պայմաններն էին, որ Պոլիս բերին Հայկական դատը։ Հորմեհեան չախչախվեր էր Սիլիկիան, հայ հողը ոտքի կոխան էր եղեր արշավանքներու, և այլազան լուծերու էր հանձնըվեր Հայ Մնացորդացը, ամբողջ երկու դար հայ ժողովուրդը խարխափեր էր ընդունայն, չգիտնալով ուր զարնել գլուխը։ ԺԶ դարուն, Ստեփանոս Սալմաստեցիին հետ մեկտեղ, մարմին կառնեք մեր դատը, երթալ բախելու համար Եվրոպայի դուները։ Հայ ժողովուրդի ազատագրումը պարսկական լուծեն կապելով արևմտյան պետությանց և նաև Պապին բարեհաճության հետ։ Եվրոպան սակայն մեր դատը հուսախաբ պիտի ըներ ի վերջո, իսկ Հռոմը սակարկության պիտի նստեր հայ ժողովուրդի խղճմտանքին հետ, ճիշտ ինչպես ըրեր էր Կիլիկյան թագավորներու շրջանին։

Դժնդակ ապագեր պիտի անցներ հետո հայ ժողովուրդը, հույսեր ու հուսախաբություններ, պատրանքներ և հիասթափություններ, ճիգեր ու պայքարներ պիտի հաջորդեին իրարու, մինչև որ, Իսրայել Օրիի հետ մեկտեղ, Հայ դատը մտներ իր բնական հունը, մտներ ռուս ժողովուրդի հովանիին տակ։

Ու դար մը ամբողջ հայ ժողովուրդը իր ճակատագիրը կապեր էր ռուս զենքերու բախտին հետ, ու հետևեր էր, սրտատրոփ, անոր արշավանքներուն հայ հողին վրա, իրեն ալ խառնելով իր արյան տուրքը ռուս բանակներու սխրագործությանց, մինչև որ ինքզինք հասած էր նկատեր իր երազներու պսակման, երբ 1828-ին Արարատյան դաշտը կազատվեր պարսկական լուծեն։

Երևանի նահանգին ազատագրությունը ռուսերուն կողմե չէր լուծած սակայն հայկական հարցը։ Ցարական ռեժիմը ռուսական նահանգի մը վերածեր էր իր գրաված շրջանը։ Փոխարեն, սակայն, բախտավոր դար մը սկսեր էր հայ ժողովուրդին համար. մեկ կողմե կյանքի ավելի տանելի պայմաններ ստեղծվեր էին իրեն համար ու բարգավաճելու հնարավորություն, և մյուս կողմե շփման մեջ էր մտեր հայությունը ռուս ժողովուրդին հետ, հաղորդվեր էր ռուս մտքին, ռուս մշակույթը ուղեցույց էր առեր իրեն. իր ճակատագիրը այլևս ցմիշտ կապեր էր ռուս ժողովուրդին։

Իսկ անդին հայ ժողովուրդը կհեծեր սուլթաններու լուծին տակ, մինչ, իր աչքերուն առջև, ուրիշ ժողովուրդներ հետզհետե կազատագրվեին այդ լուծեն։ Մինչև այդ օրերուն հայ ժողովուրդը պաշտոնական դատ չէր ունեցեր Թուրքին հետ. իր պահանջքը Թուրքեն՝ կյանքի, ինչքի և պատվո ապահովությունն էր միայն։ Իսկ այդ անգամ զլացվեր էր միշտ իրեն։ Ընդհակառակը, կեղեքումները միշտ ավելի ևս սաստկացեր էին Եվրոպայի անտարբեր աչքերուն առջև։ Զեյթունի բռնկումը 1860-ին՝ առաջին պոռթկումն էր եղեր հայ ժողովուրդին ու հերոսական փորձը հայ ժողովուրդին՝ տեր կանգնելու իր ճակատագրին։ Այդ փորձը դատապարտված էր սակայն մեռնելու, որովհետև Եվրոպան շահ չուներ հայ ժողովուրդի ազատագրության մեջ, իսկ հայուն իր ուժերը անզոր էին պայքարի մտնելու համար։ Գավառեն հասնող ողբի աղաղակներուն առջև, Պատրիարքարանի միակ զենքը իր «Թագրիր»-ներն էին, զորս Բարձրագույն Դուռ կտեղացներ ամեն օր։

1877—1878-ի ռուս-Թուրք պատերազմը երազներով ողողեց պահ մը հայ ժողովուրդը։ Ան հուսաց, թե ռուս զենքերուն հաղթանակը փրկություն պիտի բերե և իրեն։ Հաղթեցին արդարև ռուս զենքերը։ Հայկական դատը, այդ պահեն, նոր կերպարանք կստանար, և Պոլիսն էր, որ հանձին իր Պատրիարքարանին, տեր կդառնար այդ դատին։

Հաջորդեց դարձյալ պատրանքներու և հիասթափությանց շրջան մը, Սան-Ստեֆանո և Բեռլին, բողոքներ և խլրտումներ, և ասոնց ալ՝ քարը ու ազետ Պատրիարքարանն էր, որ պիտի ստիպվեր ի վերջո շալկել հոգերուն բովանդակ բեռը, ջվարած և անզոր։

Թրքական «Հուրրիեթ»-ը հայ-թուրք եղբայրության խաբուսիկ շրջան մը պիտի բանար։ Պահ մը փակված կարծվեցավ Հայկա-

կան դատը։ Բայց քիչ հետո, 1912—1913-ին, երբ երիտասարդ Թուրքեր-երը հայ ժողովուրդին համար նոր աղետ մը կդարբնեին՝ հայ և թուրք բարեկամության շրջանը փակելով, Հայոց Պատրիարքարանն էր դարձյալ, որ տեր կանգնեցավ Հայ դատին։

Հույսերու և երազներու նոր պահ մըն էր հայ ժողովուրդին համար, բայց առաջին համաշխարհային պատերազմը, 1914-ին, չքացուց զանոնք եւս։ Երիտասարդ Թուրքեր-ը կարծեցին, թե սրածությունն անցնելով Հայոց աշխարհը, պիտի ընդմիշտ թաղեն հայ ժողովուրդի դատը անոր ավերակներուն տակ։ Պատմությունը ցույց տվավ, որ անոնք սխալած էին։

Թ

Պոլիս հայ մշակույթին օրրանը եւ դարձավ պահ մը։ Եվ իր այդ դերը չի կրնար չկազմել բացառիկ ուշադրության առարկան բոլոր անոնց, որոնք երբեւիցե պիտի զբաղին Պոլսո անցյալովը։ Այդ դերը կապված է Պոլսո Պատրիարքարանի դարավոր կյանքին հետ ալ, որովհետև Պատրիարքարաններու իրավասությանց ենթակա էր կարևոր չափով մը փոքրամասնությանց մտավոր կյանքը եւ և հետևաբար անոնց հովանիին տակ էր, որ զարգացավ ան առավելապես։

Դիպվածով չէր որ Պոլիսը մշակութային կեդրոն դարձավ հայության համար։

Միայն Օսմանյան կայսրության մայրաքաղաքը չէր ան։ Միևնույն ժամանակ Արևմուտքի և Արևելքի հանդիպման կետն էր, և հետևաբար կոչված էր լուսամուտ մը եւ դառնալ լույսի սպասող ժողովուրդներուն համար։

Հայ գաղութը եւ պիտի օգտվեր այդ լուսամուտեն, առավելագույն չափով մը։

Հայ ժողովուրդը և անոր հետ նաև Պոլիսն ալ շատ բան կպարտի նախ Գուտենբերգին։

Օտար հողի վրա ծնունդ առնելե հետո 1512-ին, հայ տպագրությունը իր առաջին կայքերեն մեկն էր ըրեր Պոլիսը և պատճառ դարձեր, որ անոր շնորհիվ հորիզոն բանա իրեն հայ ժողովուրդը։ Պոլսո մեջ էր արդարև, որ Աբգար դպիր կանգ պիտի առներ Եվրոպայեն իր դարձին և տպարան պիտի հիմներ 1567-ին, Պոլսո առաջին հայ տպարանը։ Իրմե դար մը հետո էր, 1677-ին, որ հայ գրքերու տպագրության հետամուտ պիտի ըլլար պահ մը Երեմիա Չելեպին ալ, ասպարեզ տալով հետո Գրիգոր Մարզվանցիին, որ ամբողջ 40 տարի, 1694—1734, հայերեն գիրք պիտի տպագրեր։ ԺԸ դարուն արդեն կբազմանան հայ տպարանները, և իրարու ետևե իրենց տպարանները կունենան Սարգիս դպիր, Մարտիրոս դպիր, Աբրահամ դպիր, Չնչին Հովհաննես, Մատթեոս դպիր, հիշելու համար ամենեն կարևորները։

Ու չմոռնանք, որ Պոլիս տպված այդ հին գրքերը, որոնք թերևս շատ անշուք մնան եվրոպական ոստաններու մեջ տպված շքեղ հատորներուն քով, շուք կձգեն բոլորին վրա իրենց զմայլելի զարդերով, որոնց մեջ անանուն համեստ փորագրիչներ փորձեր են ապրեցնել հայ մանրանկարներու զարդային ոճը։

Մտքի տիտաններով հարուստ չեղան հայ գերության դարերը։ Հայ մշակույթը վանքերուն խորն էր քաշված երկչոտ, իսկ դուրսը քաջություն չունեին մարդիկ իրենց միտքը հմլելու։ Պոլիսը բացառություն պիտի չկազմեր։ Եվ այնուամենայնիվ, ԺԷ և ԺԸ դարերուն քանի մը դեմքեր եկան հայտնվիլ և փառքով պսակել իրենց դարը։ ԺԷ դարուն ծառացավ հանկարծ, կանգած այդ շրջապատին մեջ, ուր դավանական վեճերը կհյուծեին հայ կյանքը և հազար հոգեր կխռովեին հայ ժողովուրդը, Երեմիա Չելեպին, որ ջահ մը եղավ մռայլ այդ օրերուն համար, իր գանկին տակ պահելով իր ապրած այդ կարճ շրջանը, և պատկառելի երկեր ձգելով իր հաջորդներուն ալ, երկեր, ուր կկոթողանա գրչի և հմտության մարդը, բանաստեղծն ու լեզվագետը, մտածողն ու ռահվիրան։ Իրմե դար մը հետո Պաղտասար դպիրն եղավ, որ լույս տարածեց սերունդի մը վրա, հայ նոր աշխարհաբարին խանձարուրը պատրաստեց, ճանապարհ հարթեց նոր աշուղներու սերունդ եւ ստեղծեց։ Իր օրերուն է, որ Պոլիսը ծանոթացավ հմտության ու տքնության նոր բարձունք մը՝ Գևորգ Պալաթցին, լեզվագետ ու պատմաբան հավասարապես, որուն տպված և անտիպ երկերը ամոթով կթողուն հետագա շատ մը սերունդներ։ Պիտի անդրադառնանք այս երեքին ալ, որովհետև առանց անոնց դժբախտ պիտի ըլլային այդ երկու դարերը։

Նոր աշխարհաբարը Պոլսո մեջ էր որ մարմին առավ։ Եվ այս փոքր արժանիք մը չէ գաղութի մը համար, որ շատ նախնական ռամկորեն մը կխոսեր ինքը, և որ այնքան հեռու էր Մայր հողեն թարմ ավիշ ծծելու համար անընդհատ անկե և իր բարբառը առույգ պահելու համար։ Եվ սակայն Պոլիսը կրցավ, անխոնջ իր ճիգով, գրական լեզվի վերածել իր այդ անշուք բարբառը, գեղեցկացնել և ճոխացնել զայն։ Դյուրին չէ այդ աշխատանքը։ Պատվելիներու ամբողջ փաղանգ մը կար Պոլսո մեջ, որ կգաներ այդ ռամկորենեն, ու կառչած կմնար գրաբարին, գրաբարը հասկընալով անշուշտ նոր օրերու իր եղծված ձևին մեջ։ Նախ պետք եղավ ուրեմն այդ մգլոտ որջերը մաքրել, և հետո ժողովուրդին գիրք ու թերթ տալ իր հասկցած լեզվով։ Մեծ տքնություն անկե հետո էր։ Շատ աղքատ էր այդ ռամկորենը դարուն տոկալու համար։ Քանի մը սերունդ ճգնեցավ, որպեսզի զոհ զայն ու

հարստացնել։ Ճիշտ է, Մխիթարյանները և բողոքականները օգնության հասան իրենց ևս ռամկորենը որդեգրելով իրենց ինչ-ինչ հրատարակությանց, ինչպես «Դիտակ»-ին և «Բազմավեպ»-ին ու «Ճեմարան»-ին մեջ կամ ուղի ցույց տալով, ինչպես ըրավ մեծ Այտընյանը։ Բայց Պոլսո սերունդներն էին, որ ստանձնեցին բուն տքնությունը։ Պետք եղավ սակայն, որ զսպվի ոմանց խանդավառությունը բռնազբոսիկ աշխարհաբար մը ստեղծելու քմածին կանոններով, ուրիշներու ալ ապաժամ փորձերը գրաբարը իր դագաղեն հանելու։ Նվազ դժվար չեղավ աշխարհաբարը թուրքերեն բառերեն և ձևերեն ազատագրելու մեծ աշխատանքը, որ նույնպես անհրաժեշտ էր, և մանավանդ նոր լեզուն նոր բառերով հարստացնելու, օտար միտքը հայ բառերով արտահայտելու ճիգը, որ տեսակ մը կիրք և մենամոլություն դարձավ ի վերջո արևմտահայ գրողին համար։ Գուցե չափազանցության գացինք մեր այդ կրքին մեջ, բայց մասամբ մեր այդ կրքին պարտական է նոր աշխարհաբարը իր բառագանձը, ուրկե բարեբախտաբար լայն չափով մը կօգտվի այսօր սովետահայ աշխարհաբարը, թեև երբեմնի հայ Կովկասը կհեգներ մեզ բառ ստեղծելու մեր նույն այդ կրքին համար։ Դասական ձևը նոր էր գտած արևմտահայ աշխարհաբարը, երբ արևմտահայ գրականությունը սարսեցավ իր իսկ բույնին մեջ։

Պոլսո մշակութային կյանքին մաս կկազմեն նաև հայ դպրոցները, որոնք, հիմնվիլ սկսած ԺԸ դարու սկիզբներեն, անցյալ դարուն է, որ ցանց ստեղծեցին Պոլսո բոլոր հայ թաղերուն մեջ։ Դյուրին աշխատանք չէր եկեղեցիներու խուցերեն և պատվելիներու ճանկեն ազատել հայ մանուկները, բայց այդ աշխատանքը այնուամենայնիվ եղավ մինչև որ կրթությունը սկսավ քալել օրվան պահանջներուն հետ։ Ամեն թաղ իր նախակրթարանն ունեցավ, Սկյուտար իր Ճեմարանը, և հետագային Ղալաթիա իր Կեդրոնականը, առանց հաշվելու այն կրթարանները, որոնք անհատական նախաձեռնության արդյունք էին և որոնք ևս սերունդ հասցուցին տասնյակ տարիներ, ինչպես Պերպերյանը, և առանց հաշվելու հայ կաթոլիկ կրթարանները, որոնցմե մեկուն՝ Լուսավորչյանին՝ տեսուչը Վարուժանն էր պահ մը, և զույգ Մխիթարյաններու կրթարանները Բանկալթիի, Պերայի և Գադըգյուղի մեջ, որոնք նույնպես հունձք տվին բազմաթիվ տասնյակ տարիներ։ Մեր ուսումնասիրության ընթացքին բացառիկ հուզումով է, որ պիտի հիշենք սակայն գուրգուրանքը, զոր հայ ժողովուրդը ընծայեց իր դպրոցներուն, և այն պայքարները, զորս ան մղեց, ինչպես Սկյուտարի Ճեմարանի պարագային, որ ճամբա պիտի բանար Ազգային Սահմանադրությունը կանխող կռիվներուն։

Պոլսո հայ մտավոր կյանքին ծաղկման մեջ բացառիկ դեր կատարեցին թաղերու մեջ հիմնված ընթերցարաններն ու մշակութային միությունները ևս։ Ճիշտ է, այնքան ալ երկար չեղավ անոնցմե ամեն մեկուն կյանքը, բայց ամեն մեկը իր նպաստը բերավ տվյալ պահու մը։ Ժողովուրդը կարդալու վարժեցուցին նախ անոնք, գրքեր ու թերթեր իսկ հրատարակեցին կամ սատարեցին անոնց հրատարակության և մաս առին Պոլսո գրական ու գեղարվեստական կյանքին մեջ։ Եվ արդար էր, որ մեր բանասերներեն ոմանք զբաղեին անոնցմով, ինչպես այդ ըրին դոկտ. Թորգոմյան, Արշակ Ալպոյաճյան և վերջերս ալ Հ. Եփրեմ Պողոսյան, թեև անհրաժեշտ էր, որ անոնցմե շատերը առանձին ուսումնասիրության առարկա դառնան, ուշագրավ այն դերին համար, զոր ունեցան իրենց գործունեության ընթացքին, ինչպես ունեցան, օրինակ, Միացյալը, Ազգանվերն ու Հայուհյացը՝ Պոլսո սիրտը ջերմացնելու համար գավառին, ինչպես ունեցեր էր, անոնցմե շատ առաջ, Համազգյացը՝ կամուրջ դառնալու համար «մրրկավ զատված» եղբայրներու միջև։

Հայ մամուլը ևս թափ առավ Պոլսո մեջ, եթե ան ծնունդ էր առեր 1794 թվականին հեռավոր Հնդկաստանի մեջ Հարություն քահանա Շմավոնյանի «Ազդարար»-ով, Պոլիսն է որ զայն դիեցուց։ Առանց հիշելու «Դիտակ Բյուզանդյան»-ը, որ Պոլսո համար բայց Վենետիկ կտպվեր, և «Լրո գիր»-ը որ տեղեկատու մըն էր միայն, Պոլսո մեջ էր, որ հետզհետե լույս աշխարհ եկան անհամար հայերեն թերթեր, որոնց թվումն անգամ կրնա գլխու պտույտ պատճառել մարդու։

Այս թերթերեն շատերը կարճ կյանք միայն ունեցան։ Ոմանք ալ տպվեցան տպված ըլլալու և հայ մամուլի պատմության մեջ հիշատակված ըլլալու համար լոկ։ Եղան ալ, որ սև հետք ձգեցին, ինչպես Տերոյենց պատվելիի հրատարակածները, որոնց դերն եղավ կռիվ բանալ նոր գաղափարներու դեմ։

Բայց թերթեր ալ եղան, որ գիծ բացին կյանքի մեջ։ Սվաճյանի «Մեղու»-ն էր անոնցմե մեկը, որ կոչված եղավ նոր սերունդի մը նոր կյանք ստեղծելու իր ճիգերուն մեջ։ Ութուճյանի «Մասիս»-ը մեկ կողմե ժողովուրդին սիրցուց հայ թերթը և մյուս կողմե լայն չափով մը դարբնեց նոր աշխարհաբարը. իր թերթը ձեռքե ձեռք անցավ հետո, ամեն մեկ խմբագրի հետ ուրույն դիմագիծ ստանալով, բայց հայ մամուլի պատմությունը բացառապես պիտի հիշե Զոհրապի վարած շրջանը։ «Արևելք» և «Հայրենիք» մամուլը, ինչպես նաև գրականությունը մոտեցուցին

...ղովուրդի սրտի զարկին և գրական սերունդ ...տրաստեցին իրենց շուրջ։ Այդ սերունդեն ... որ մեզ պիտի գային Արփիարյանը, Զոհ...պն ու Բաշալյանը, Կյուրճյանն ու Օտյանը, ...պանյանն ու Կամսարականը, և դեռ շատ ...ները անոնցմե հետո։ Զմռնանք և Պա...նյանը իր «Մեղու»-ով և «Արծաղ»-ով, Փարոս»-ով ու «Խիկար»-ով, և իր ծիծաղն ...հեգնությունը, որոնք հաճախ բժշկեցին Պո...ը։ Այս քանի մը անունները ոչինչ չեն ըսեր ...ական մամուլի մը մասին, որ ցոլացուց Պո...ը կես դարե ավելի, և ուր պետք է երթալ ...նտռել մեր լեզուն, գեղեցկանալու իր ճիգե...ն մեջ, մեր գրականությունը՝ իր այնքան ...մայլերի էջերով, և երեկվան հայ կյանքը, որ ...հավրտած է թերթերու հավաքածոներուն մեջ։

Հայ բեմը Պոլիսը խանձարուր ունեցավ ի...ն։ Բեմ ստեղծելու փորձերը, որոնք եղեր ...ն այլուր, պատահական դեպքեր էին լոկ։ ...ոլիսն է, որ բուն քայլը առավ, և քիչ հետո ...րձագանք տվավ իրեն Թիֆլիսը։ Հազիվ քա...ի մը տասնյակ տարի շողաց այդ բեմը, ...այց քանի մը տասնյակ տարին բավ եղավ, ...ր անոր ծոցեն հայ ժողովուրդին գան իր ...եծագույն արվեստագետները՝ Արուսյակ և ...ստղիկ, Հրաչյա և Սիրանուշ, Մարի-Նվարդ Գարագաշյան քույրեր, Արամյան ու Մնակ...ան, Թրյանց ու Ֆասուլյաճյան, Վարդովյան ...ւ Մաղաքյան, Հոլաս ու Զաֆրաստ, և դեռ ...այ բեմի այնքան վարպետներ, որոնց շարա...ը հասավ մինչև մեր օրերուն, երբ ունեցանք ...ահրամ Փափազյանը եւ, Արուս Ոսկանյանի Հրաչյա Ներսիսյանի հետ մեկտեղ։

Հայ ժողովուրդի մեղքը չէր եթե Պոլսո հայ ...եմը խամրեցավ Համիդյան ռեժիմի ճիրան...երուն մեջ։ Իր ուժերուն մեկ մասը գնաց այն ...ամանակ Կովկաս, և ուրիշ մաս մը անձնա...ուր եղավ թուրք բեմին։

Երկու վոիտ ճիգեր Պոլիսը ըրավ 1908-ին ... 1919-ին՝ վերստեղծելու համար իր բեմը։ ...այց երկու անգամուն ալ չորցավ հազիվ ...աչված։

Բայց մանավանդ հայ գրականությունը ...ատ բան կպարտի Պոլսո։ Դժբախտություն ...ր հայ ժողովուրդին համար վերածվիլ երկու ...ատվածներու, որոնք կոչված էին զարգանալ ...տարբեր պայմաններու մեջ, տարբեր միջա...վայրերու ազդեցության տակ, և ստեղծել ...ւրույն գրական լեզու և գրականություն։ Հայ ...ողովուրդի արևմտյան հատվածը Պոլիսը ի...են խարիսխ ունեցավ ստեղծելու համար իր ...եզուն, ինչպես և իր գրականությունը, որ ...ւյարու մը ճիգերեն հետո սկսեր էր ստանալ իր ...եփական դիմագիծը, երբ փոթորիկը սարսեց ...չյան հիմեն։ Բայց վարպետները, որոնք հա...ոնցան այդ գրականության ծոցին մեջ, հայ մշակույթի պատմության համար պիտի մնան մեկ սյուն ու պիտի չկորսվին իրենց թողած երկերը, գոհարներու պես շողալով միշտ հայ ժողովուրդի հոգեկան գանձարանին մեջ։

Պոլսո դերը պատմելու առթիվ հայ մշակույթի նոր զարթոնքին մեջ, պիտի չմոռնանք անշուշտ և քույր Զմյուռնիան, որ մաս առավ արևմտահայ լեզվի և գրականության համար թափված ճիգերուն մեջ, դպրոց ու մամուլ ունեցավ, ինչպես և գրչի ու մտքի մշակներ, որոնք իրենց ստեղծագործություններով և մանավանդ թարգմանություններով զարկ տվին արևմտյան աշխարհաբարի ստեղծման և ճոխացման։

Միամիտ չենք կարծելու համար, որ Հայրենի հողեն հեռու կրնան երկար շնչել գաղութները իրենց մտքի ճիգերով։ Ուշ կամ կանուխ անոնք դատապարտված են խամրելու։ Բայց այն օրերուն, երբ Պոլիսը կառաջնորդեր հայ միտքին, հայը դեռ չուներ իր սեփական հողը, ու Պոլիսը ինքը գաղութ չէր։ Ճիշտ ինչպես Թիֆլիսն ու Բաքուն էին հայ ժողովուրդի արևելյան հատվածին համար, Պոլիս ու մասամբ Իզմիրն եղան հայ մտքի կեդրոն, ուր հեռավոր Հայ Հայրենիքը անընդհատ ավիշ կհոսեր։

Հիմա, արդեն, հայ գաղութները, Պոլիսն ալ մեջը, մասնիկներ են լոկ։

7

Հինգ դարերու այդ պատմությունը որքան տխուր էջեր ալ ունի։ Ստրկության ի՛նչ դառն դրվագներ կան այդ դարերուն մեջ։

Բյուզանդիոն միշտ կշնչեր Պոլսո մեջ։ Ներքին վեճերու հնոց մըն էր միշտ ան, մեծ մասամբ ունայն վեճեր, որոնք կրոնկեին հոն հանկարծ։ Կռորոքեին կրքերը երկար, մարելու համար անպտուղ։ Որքան բեղմնավոր պիտի ըներ Պոլիս իր հինգ դարերը, այդ հումպետս վատնված կորովն ու ճիգերը եթե չըլլային։

Լևանտենիզմի դասական քաղաքն էր Պոլիսը։ Դարերու ընթացքին հոն ստեղծվեր էր տեսակ մը արտառոց տիպար, որ Արևմուտքը կկապկեր, բայց ասիացի էր հոգվով, և որ սեփական դիմագիծ չուներ։

Հայերու մեջ ալ դաս մը եղավ, որ լևանտենի հովեր փորձեց առնել։ Եվրոպացի դառնալու իր անհաջող ճիգերուն մեջ ան կորսնցուցեր էր իր սեփականն ալ։ Կգաներ ու կամչնար իր սպաներուն փորձերեն, միմոսի վերածված կեղծ բեհեզներու մեջ։ Այդպես տիպեր տվին մանավանդ «կաթոլիկ միլլեթի»-ն, «պրոտեստան միլլեթի»-ն, որոնց բերնեն չամանին հոտը դեռ կուգար, բայց որոնք ամոթ կզգային հայ անունեն։

Ամիրաներու շարանը, որ քանի մը դար իր թաթին մէջ պահեց հայ կեանքը, նոյնպէս տխուր էջեր թողուց Պոլսոյ պատմութեան։ Գաւառէն սրճեփներով մայրաքաղաք եկող այդ բախտախնդիրները կհարստանային խտիր չընելով միջոցներու միջեւ, և հետո կանակ տուած մեծ մեծ փաշային, կուզային իշխել հայ ժամուն։ Եղան անոնց մէջ, որ չմոռցան նաև իրենց ժողովուրդը իրենց փառքին մէջ, երբեմն տէր կանգնեցան անոր դժնդակ վայրկեաններու, ու սատարեցին ալ ժամուն, դպրոցին։ Բայց մեծ մասամբ չքացան գացին առանց հետք մը ձգելու։ Ոչ մէկը թողեց սրբուհի մը աւելի։ եթե չհաշվենք երեք այն գերդաստանները, զորս սիրով պիտի արձանագրե մեր պատմությունը և որոնք Պալյան, Տատյան, Տյուզյան կոչվեցան։

ԺԹ դարու կեսերեն հետո ալ ամիրա չմնացին։ Թուրքիո մեջ ստեղծված նոր պայմանները նոր տիպ ստեղծեցին՝ հայ աղան։ Նույնքան գարշելի, որքան երբեմնի հայ ամիրանները, հայ աղաներն ալ բախտավոր հարստացածներ էին նույնպես, մեծ մասամբ կողպակներու մեջ դիզած իրենց հարստությունը։ Անոնք ևս իրենց տիրապետության տակ կուզեին պահել ժամն ու դպրոցը, և իրենց գերագույն հաճույքն էր իրենց դեմը բարև կեցնել տերտերներն ու վարժապետները։ Սարրաֆ Թուրքին մոտեցած առեն, հոխորտ կմտնեին ժամուն բակեն ներս, բայց քիչերը միայն իսկական «աղաս»-ներ էին, այսինքն փշրանք միայն կնետեին Ազգին։

Կամաց-կամաց քիչցավ և անոնց թիվը, ավելի ճիշտ անուն ու տարազ փոխեցին անոնք։ Եվ աղաներուն տեղ ունեցանք «էֆենդիս»-ները։ Նույն տիպն էր, որ իր քսակով մենասեր փոխան, կզոռոզանար պետության մեջ իր գրաված դիրքով։ Ինք «Թեմեննահ»-ը գետնեն կուտար «էֆենդիս»-ին, բայց թաղին քարոզիչը դողով կեցլեր իր դեմը։

Մեծ ոստաններուն պես, անոնց առհամահանքով կնային գյուղին, Պոլիսը ևս վերեն նայեցավ հաճախ գավառին վրա։ Այդ ալ տխուր մեկ երեսն է հինգ դարերու իր պատմության, ու դառնությամբ է, որ պետք անդրադառնանք մենք անոր։

8

Տխուր այդ էջերեն հետո կան գավառական վեճերը, որոնք դարերով պղտորեցին հայ կյանքը Պոլսո թաղության մեջ ևս։

Պետք ընդ է, որ պիտի քորրենք այդ վեճերը մեր Հիմնադա էջերուն մեջ։ Ոչինչ կա այնքան խղճալի և ամոթալի քան այն մոլեգին արշավանքը, որով Հոռոմ Հայ ժողովուրդը ենթակայմ զարեբե ի վեր իր փարախը մտցնելու համար զայն խտիր չընելով միջոցներուն մեջ, զարդանալով սպասելով ազնիւ պահերուն, որպեսզի դիմադրելու անկարող գտնե հայ ժողովուրդը, փորձելով խայծերուն բոլոր տեսակները։

Կիլիկյան շրջանեն սկսած այդ արշավանքը, ու հետո փորձված Հայաստանի հողին վրա ու գաղութներու մեջ, ան պիտի աշխուժանար հետագային Պոլսո մեջ ևս, արձանագրելով այնպիսի դժնդակ էջեր, զորս թղթատելն անգամ սարսուռով կլեցնե մեզ այսօր և զորս սակայն չենք կրնար անուշմար թողուլ, որովհետև անոնք պետք է, որ չմոռցվին նաև մեր օրերուն, երբ դավանական մոլուցքը առեն-առեն կխլրտի դեռ մարդոց հոգիներուն մեջ, այնքան փոթորիկներե և աղետներե հետո ալ։

Մեր պեժգանքը անոր համար ավելի բուռն է, որովհետև Հռոմ իր արբանյակները միշտ ունեցավ հայ ժողովուրդի ծոցին մեջ ևս։ Անոր փորձերը բերդը ներսեն գրավելու համար այնքան ալ ապարդյուն չանցան։ Կիլիկիո շրջանին ունեցանք՝ հայ թագավորներ, որոնք հավատացին Հռոմի խոստումներուն, ու կաթողիկոսներ ալ, որոնք տակարկության նստան անոր հետ՝ հայ ժողովուրդին բարիք ապահովելու հույսով։ Ու բոլորն ալ խաբվեցան անշուշտ իրենց ակնկալության մեջ։ Կաթողիկոսներուն մեջ Մելքիսեդեկն անգամ ունեցանք, որ գլխեցավ ծախել իր խիղճը և պատրիարքներ ալ Պոլսո աթոռին վրա, որ լռիմացան խայծերուն։ Ու դեռ որքա՞ն հայ մեղսակիցներ Հայ Եկեղեցվո դեմ սարքված այդ դավերուն մեջ, որոնց պատճառ պիտի դառնային Ավետիք պատրիարքի սայթաքումներուն ու իր վերջը անոր եղերական վախճանին, և մյուս կողմե զոհերու, ինչպես սատարապետ Կոմիտաս քահանան, զոր կաթոլիկ քարոզությունը Թուրք դահիճին պիտի հասցներ՝ սուրբերուն կարգը դասելու համար հետո զայն։

Դավանական վեճերը, որոնք երբեմն կփոթորկեին Պոլսո հայ կյանքը, եղբայրատյաց մոլուցքի մը վերածվելով շատ հաճախ, իրենց ամոթը հասցուցին մինչև մեր օրերուն։ Դավանական կիրքը վառ մնաց մարդոց հոգիներուն մեջ, և հենուելս աղետներուն, որոնք զգետնեցին հայ ժողովուրդը։ Արյամբ ներկվեցավ հայոց աշխարհը, ամբողջ ժողովուրդ մը խողխողվեցավ իր օջախին մեջ, հազարափեսա վրա տարտղնեցավ հայ ժողովուրդի մնացորդաց, և դեռ մարդիկ կան, որ կհրահրեն դավանական փցուկ հակաճառությունները։

Եթե ներելի էր երբեմն մարդոց միամտությունը Հռոմեն բարիք սպասելու հայ ժողովուրդի դատին համար և հանուն այդ բարիքին ուրանալու իրենց պապերուն հավատքը, այնքան չհասկացողություններ և աղետներե

հետո արդէն ոճիր կդառնա դավանական կիրքեր շարունակել գրգռել հայ ժողովուրդի ծոցին մեջ և խրամատ բանալ փոքր ժողովուրդի մը ներսը, որ հոգեկան միության պետք ունի առավել քան երբեք, գլուխ հանելու համար իրեն վիճակված մեծ առաջնորդությունը։ Պոլսո անցյալով զբաղողի մը համար նվիրական պարտք մըն էր ուրեմն մատնանշել դավանական վեճերը ևս, որոնք փոթորկած են երբեմն հայ կյանքը և սև էջեր թողած Պոլսո հայ պատմության մեջ։

9

Մարդ կշվարի սակայն, երբոր փորձե զբաղիլ Պոլսո հայ գաղութով։ Հակասությանց ամբողջ աշխարհ մը փռված է առջին, ու մարդ չի գիտեր, ինչ բան կռվան ունենա՝ հարազատ դիմագիծը տալու համար այս տարօրինակ գաղութին։ Հակասությանց աշխարհ մը նախ գաղութը ինքը, այլազան տարրերու խճանկար մը, որ նոր գիծ ու երանգ ստացած է ամեն դարու հետ, շարան մը բազմազան սերունդներու, որոնք կհերքեն հաճախ զիրար, և խառնարան պեսպես մտայնության, բարքերու, որոնք կշփոթեցնեն մարդս, եթե փորձե մեկ հայտարարի բերել զանոնք։ Ավելցուցեք և խայտաբղետ կարծիքները, որոնցմով մարդիկ ցարդ դատած են զայն, հորինելով գովեստներու և պարսավներու ամբողջ բավիղ մը, որ մարդը կմոլորեցնե, որքան ալ ջանա անոնց ճանկին մեջ չիյնալ։

Ամիրաներու, աղաներու և էֆենդիներու քաղաք էր Պոլիսը, բայց հոն շնչեցին նաև խոնարհ խավերը։ Մարդոց կողքին, որոնք տերն էին ժամուն ու կսիրեին իրենց գեմը բարև կեցնել տերտերներն ու վարժապետները, համեստ մարդոց դաս մը ևս կար, որոնք հայ բարքերը դարերով անեղծ պահեցին ընտանեկան իրենց հարկեն ներս, որոնք կապված մնացին հայրենի ավանդություններուն, վառ պահեցին միշտ իրենց դպրոցն ու եկեղեցին, անմահ բարերարո-ներու քովն ի վեր, որոնք փշրանք նետեցին հայ ժողովուրդի կարիքներուն, եղան նաև համեստ գանձանակները, որոնք ամոքեցին այդ կարիքները

Հոսհոսներու քաղաք էր Պոլիսը, բայց շուտ մը բռնկող ու շուտ մը սմքող այդ բազմության քովն ի վեր հայ գրչի ու մաքի անխոնջ մշակներ ալ եղան, որոնք տքնեցան ու մաքառեցան, զմայլելի լեզու մը թողուցին իրենց հաջորդներուն, բարձունք հանեցին հայ գրականությունը։ Մեծապատիվ մաւրացկաններ եթե երբեմն եղան, եթե եղան Պաղտասար աղբարներ ու Մանուկ աղաներ, եղան Պարոնյաններ ալ։

Տիրացուներու քաղաք էր Պոլիսը, բայց ան պահեր ունեցավ, ուր թև տվավ հոգիին, բեմ ու մամուլ ստեղծեց, դպրոց ու ընթերցարան սփռեց թաղե թաղ։

Գավառին խորթ նայեցավ հաճախ Պոլիսը և արհամարհեց զայն։ Բայց ի վերջո ո՞վ էր, որ արձագանք տվավ գավառի ճիչին, եղբայրացավ անոր կսկիծներուն հետ, լույս տարավ գավառ։

«Երջանկության սերմնա» էր Պոլիսը և միևնույն ժամանակ զարիբներուն քաղաքը։ Վաչխառուն և սեղանավորը կիլինտային հոն, բայց և որքա՜ն պանդուխտներ խաներուն անկյուները։ Գավառեն Պոլիս շատերը եկան կրպակ բանալու, խարելու-խարխլելու, ամիրա դառնալու համար. բայց և որքա՜ն խեղճեր, որոնք տարիներով բեռ կրեցին պատառ մը հաց ղրկելու համար իրենց երեխաներուն, ու մարեցան խանի մը անկյունը։

Սուլթաններուն քղանցքը լզող մարդոց քով, ի՜նչ ճշմարիտ հայեր ալ տվավ սակայն Պոլիսը։ Մանկլավիկներ, ստրուկներ, և անշուշտ ուրացողներ ալ ծնցուց իր ծոցեն, բոլոր մեր մյուս գաղութներուն պես, բայց փոխարեն հոգիի տեր այնքան մարդիկ ալ, նույնիսկ իր ամենեն դժնդակ պահերուն։ Բարձրագույն դասուն մարդոց մեջ եղան այնպիսիները, որ իրենց ժողովուրդը մոռցան, բայց և քանիներ նույն այդ մարդոց մեջ, որոնք տեր կանգնեցան, անվեհեր ու խիզախ, հայ ժողովուրդին և անոր դատին։

Երբոր կսկսինք Պոլիսը պատմել, մեր մտքին մեջ կխուժեն բոլոր այդ հակասությունները ու մեզ կահարեկեն պահ մը բացասական գծերը, որոնք թավալեցին ավելի հինգ դարը. բայց հանկարծ մեկեն հարցում մը կցցվի մեր ուղեղին մեջ. «Հապա եթե եղած չըլլար այն մյուս Պոլիսը...»։

Պոլիսը ներարը դրած է զայն քավարանն մը անցուցած ժամանակ, չմոռնանք նաև այս մյուս Պոլիսը...։

(Շարունակելի)

Շ. Գ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

# ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ ԵՎ ԱՅՆՏԵՂ ՏՊԱԳՐՎԱԾ «ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ»-Ը

Ծանոթ է, որ հայ տպագրության նախահայրերից է Խաչատուր Կեսարացին։ Նա հայ տպագրությունը հիմնադրել է Իրանի հայաբնակ Նոր-Ջուղա գյուղաքաղաքում։

Խաչատուր Կեսարացին 1620 թվականին որպես նվիրակ գնում է Նոր-Ջուղա։ Տեղի հայ բնակչությունը կարճ ժամանակամիջոցում ծանոթանալով նրա բնավորության և գիտելիքներին, նրան ընտրում է իրեն հոգևոր առաջնորդ։ Կեսարացին Ամենափրկիչ վանքում դպրոց է հիմնում, որտեղ դաստիարակում է բազմաթիվ արժանավոր սաներ։ Այդ դպրոցի մասին նա իր տպագրած ժամագրքի հիշատակարանում այսպես է արտահայտվում. «Որ է մենաստան կուսակրոնից բանասիրաց...»։

Խաչատուր Կեսարացու գործունեության ամենակարևոր բնագավառը տպագրությունն էր։

Նոր-Ջուղայի մատենադարանի և դպրոցի կողքին նա հիմնում է տպարան։ Կեսարացին բոլորովին տեղյակ չլինելով տպագրության գործին և շրջապատված լինելով այդ գործին նույնպես անտեղյակ հոգևորականներով, նրանց մասնակցությամբ և օժանդակությամբ, մեծ դժվարություններով գլուխ է բերում այդ գործը։ Իրենց խելքով ու հնարագիտությամբ նրանք կարողանում են պատրաստել այն ամենը, ինչ անհրաժեշտ էր տպագրության համար։ Տառեր են փորագրում, մամուլը, թուղթն ու թանաքն էլ իրենք են պատրաստում և սկսում են տպագրությունը։ Այդտեղ տպագրված առաջին գիրքը՝ «Հարանց վարք»-ը հիացնում ու զարմացնում է գործի նկատմամբ այդ մարդկանց ունեցած մեծ սիրո ու եռանդի վրա։ Եվ չնայած նրանց տպագրությունը շատ նախնական է, մանր տառերով, հասարակ ու անհարթ թղթի վրա, բայց այդ գործով նրանք այնպիսի մեծ ծառայություն են մատուցել հայ մշակույթի առաջընթացին. որ այդ թերությունները անկարևոր են դառնում ո մոռացվում։

Ճանապարհորդ Տավերնյեն XVII դարում Արևելքում կատարած իր ճանապարհորդական հուշերի մեջ խոսում է այդ տպարանի մասին։ Նա ասում է, որ այդ տպարանը ոչ միայն առաջինն էր Իրանում, այլև ամբողջ Արևելքում։ Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ նոր սկսվող այդ գործը վրդովմունք էր առաջացրել գրիչների մեջ, որովհետև նա գրիչներին դուրս էր մղում ասպարեզից[1]։

Խաչատուր Կեսարացին և մյուս աշխատավորները գրքի հիշատակարանում խոստովանում են, որ ծանոթ չեն տպագրության գործին, չեն տեսել, չեն սովորել, «զի ոչ ուսաքյումեքէ և ոչ տեսեալ ի վարպետէ». («Հարանց վարք», էջ ՑԴ)։ Խաչատուր Կեսարացին այդ հիշատակարանում թվում է այն հոգևորականների անունները, ի թիվս որոնց նաև Սիմեոն Ջուղայեցու, որոնք ամեն մեկը մի ձևով մասնակցել են տպագրության գործին. «... և այլ ևս բազումք մեծամեծք և փոքունք և ամենեքեան օժանդակեն այսմ գործոյ, ոմն ի թղթի շինութիւնն, զի թուղթսն ևս ի տանէ եմք շինեալ..., ոմն ի կազմութիւն գրոցս, ոմն

[1] Tavernier, «Les six voyages en Turquie, en Perse et aux Indes», Paris, 1679.

ի սրբագրութիւն և այլք յայլ իմն գործս...» (էջ Զե)։

Այդ տպարանի առաջին տպագրությունը՝ «Հարանց վարքս»-ը տպագրվել է առանց տիտղոսաթերթի. առաջին էջը, կամ գրքի սկիզբը սկսվում է ցանկով. այսպես՝ «Ցանկ է գլխաւոր բանից Հարանց վարուց սուրբ գրոց...»։ Ցանկին հաջորդում է «Ցառաջաբանութիւն»-ը, ապա տեքստը։ Նա 22×16×7 սմ. չափի, շագանակագույն կաշեպատ փայտե դրոշմազարդ, ամուր կազմով գիրք է²։ Կազմի տակ դաջած կտոր է փակցված։ Մանր տառանիշերով, անհարթ տպագրություն է. դեղնած, հասարակ, անհարթ թղթի վրա, թռչնագիր գլխագրերով, պարզ, փոքր նախազարդերով։ էջերը համարակալված են հայկական թվանշաններով։ Հիշատակարանը սկսվում է այսպես. «Փառք Ամենասուրբ Երրորդութեանն..., որ ետ կարողութիւն տառապեալ անձանցս հասանել յաւարտ գրոցս որ կոչի Հարանց վարքս։ Թվին ՌՂ (1641) ի քաղաքն Շօշ, որ է Սպահան։ Ցանապատն Նոր Ջուղայոյ... Ձեռամբ Նուաստ Խաչատուր Կեսարացւոյս»։

1642 թվականին տպագրվում է «Ժամագիրք ատենի», որը նույնպես տպագրվել է առանց տիտղոսաթերթի։ Այս Ժամագիրքը բաղկացած է երեք մասից. Ժամագիրք, Սաղմոս և Տօնացույց։ Գրքի առաջին էջը սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա...»։

Սաղմոսարանի վերջում դետեղված հիշատակարանի մեջ ասված է. «Ով վայելող սուրբ մատենիս. Դավթի սրբոյ երգարանիս։ Նաև յիշել մաղթեմ Սարգիսն ոմն շինող թղթի և մրի. միւսն գիճուցող և տպող... կատարեցաւ տպագրութիւն հոգենուագ Սաղմոսացն Դաւթի... Ցամի հազար և իննսունեւորդի և միակ թուոյ (1091+551=1642) արքայանիստ քաղաքիս ըստ գրոց Շօշ կոչեցելոյ... ի գիւղաքաղաքիս Նոր Ջուղայուս»։

Ինչպես տեսնում ենք, Ժամագիրքն էլ նույն ձևով է տպագրվել, ինչ որ Հարանց վարքը։ Թուղթն ու մուրը իրենք են շինել, տպագրվել է նույն միաբանների աշխատանքով։ Սակայն համեմատելով երկու գրքերը, նկատվում է տարբերություն։ Ժամագրքի տառերը ավելի խոշոր են, պարզ, դյուրընթեռնելի։ Գրքի մեջ կան մեկ կիսախորան և թռչնագրեր։ Թուղթը ավելի լավն է, հարթ, տեղ-տեղ փայլուն։ Ժամագրքի և Սաղմոսարանի տառանիշերը նույնն են, իսկ երրորդ գրքի՝ Տոնացույցինը այլ են, մանր, անհաշող, դժվարընթեռնելի։ Ժամագիրքը ունի կաշեպատ, դրոշմազարդ կազմ, 22×18×7 սմ. չափի։ Լավ պահպանված, կազմի դարձերեսին փակցված է դաջած կտոր³։

Թեոդիկը այս Հարանց վարքը և Ատենի ժամագիրքը չի տեսել։ Նա գրում է. «Իրենց ժամուլեն դուրս ելած այս երկու գիրքերն ալ խիստ հազվագյուտ են հիմա...»։ Ատենի ժամագրքի վերաբերյալ նա ոչ ճիշտ տեղեկություն է հաղորդում։ Նա ասում է. «բաղդատմամբ առաջնոյն՝ ավելի փոքր ու վայելուչ տառերով կանոնաւոր տիպ մըն է»⁴։

Ատենի ժամագրքի տառերը ավելի խոշոր են ու ավելի բարեձև, քան Հարանց վարքինը։ Մատենադարանում պահվում են այդ հետաքրքրական տպագրության մի քանի լավագույն օրինակները։

Խաչատուր Կեսարացու օրոք իր ժամանակի համար անսահման դժվար, լլված ու չտեսնված խանդավառ աշխատանքի շնորհիվ հիմնադրված տպարանում տպագրված գըրքերից մինչև օրս մեր մատենագիտության հայտնի են եղել այս երկու գրքերը, որոնց մոտավոր նկարագրությունը տրվեց այստեղ։

Վերջերս մեզ հայտնի դարձավ, որ այդ տպարանում, բացի վերոհիշյալ երկու գրքերից, նույն ժամանակամիջոցում տպագրվել է ևս մի գիրք՝ «Խորհրդատետր», որը Մատենադարանին հանձնեց ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը։ Նա իր անձնական արխիվը, ինչպես նաև մի քանի ձեռագրեր, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-րդ տարեդարձի առթիվ նվիրեց Մատենադարանին։ Ձեռագրերի հետ էր նաև վերոհիշյալ Խորհրդատետրը, որը նույնպես Նոր-Ջուղայում է տպագրվել 1641 թվականին, որից չուներ Մատենադարանը։

Խորհրդատետրը վերոհիշյալ գրքերի նման չունի տիտղոսաթերթ։ Առաջին էջն սկսվում է. «Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ Տէր մեր Յիսուս Քրիստոս...»։ Սա ամբողջական, լրիվ, լավ պահպանված, 23×15×1,5 սմ. չափի գիրք է։ էջերը համարակալված են հայկական թվանշաններով, բաղկացած է «ԽԷ» (47) էջից։ Նույն տառերն ու նույն թուղթն է, որով տպագրվել է Ատենի ժամագիրքը։ Գրքի վերջում ունի փոքր հիշատակարան։ Հիշատակարանից պարզվում է, որ գիրքը տպագրվել է 1641 թվականին Նոր-Ջուղայում, Խաչատուր Կեսարացու ձեռքով. «Ով սուրբ պատարագօղ, յիշեա զԽաչատուր վարդապետս և զմայր իմ. թվ. ՌՂ. (1641) կազմեցա»։ Գրքի մեջ օգտագործված են թռչնագրեր և երկու տեսակ տառանիշեր, խոշոր և մանր։ Թռչնագրերը և խոշոր տառանիշերը նույնն են, ինչ

² Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի պետական մատենադարան, հնատիպ գրականության հավաքածու, № 1224։

³ Նույն տեղում, № 1336։

⁴ Թեոդիկ, «Տիպ ու տառ», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 161։



Նոր-Ջուղայի 1641 թ. խորհրդատետրի 1-ին էջը

որ օգտագործված են ժամագրքի մեջ։ Գիրքը կազմված է սպիտակ, կաշեպատ տախտակներով։ Պետք է ենթադրել, որ գիրքը կազմվել է Հոլանդայում, որովհետև գրքի սկզբից ու վերջից դրված են 4-ական թերթ սպիտակ, ավելի նուրբ թղթի պահպանակներ։ Չկան զարդաքարեր վրայի կազմը և դաջած կոռ-ղեր[5]։

Այս խորհրդատետրը անհայտ է եղել մեր մատենագետներին։ Հ. Արսեն Ղազիկյանը իր «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ. կյանքի» (Վենետիկ, 1909—1912 թ. թ.) վերնագիրը կրող մատենագիտության մեջ «Խորհրդատետր» հատվածի տակ ժամանակագրական կարգով հիշատակված խորհրդատետրերից առաջինը համարում է 1513 թվականին Վենետիկում Հակոբ Մեղապարտի հրատարակած «Պատարագատետր»-ը, երկրորդը՝ Կոստանդնուպոլսում, Աբգար դպրի հիմնադրած տպարանում 1568 թվականին տպագրվածը, երրորդը համարում է Հռոմի 1642 թվականին հայերեն և լատիներեն երկլեզու խորհրդատետրը (էջ 1157—1160)։

Հ. Գ. Զարպհանալյանը իր «Հայկական մատենագիտություն» (Վենետիկ, 1883) գըրքում «Խորհրդատետր կամ պատարագամատույց» հատվածի տակ նկարագրում է մի շարք հրատարակություններ և առաջինը համարում է 1642 թվականին Հռոմում տպագրված երկլեզվյանը, երկրորդը՝ նորից Հռոմի 1677 թվականի տպագրությունը (էջ 278)։

Թեոդիկը իր «Տիպ ու տառ»-ի մեջ կանգ առնելով Նոր-Ջուղայի տպարանի հիմնադրման ու գործունեության վրա, հիշատակում և նկարագրում է վերևում բերած երկու գրքերը՝ Հարանց վարք և Ժամագիրք անունով, իսկ Խորհրդատետրի մասին ոչ մի բառ չի ասում[6]։

Գ. Լեոնյանը իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» գրքի մեջ հանգամանորեն կանգ է առնում Նոր-Ջուղայի տպարանի գործունեության վրա, այնտեղ տպագրված գրքերից նկարագրում է վերոհիշյալ երկու գրքերը, չհիշատակելով Խորհրդատետրի մասին ոչ մի բառ[7]։

Այս խորհրդատետրի մասին հիշատակություն չկա և Վ. Զաքարյանի «Հիշատակա-

[5] Մատենադարան, Ձեռագրաց գրականության հավաքածու, № 1702։

[6] Թեոդիկ, Հիշված աշխատությունը, էջ 160—161։

[7] Գ. Լեոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1958, էջ 83—90։



Խորհրդատետրի վերջին էջը հիշատակարանով

րանս»-ի մեջ, որտեղ մանրամասնաբար պատմում է Խ. Կեսարացու մասին և նկարագրում է վերևում եղած երկու տպագրությունները միայն[8]։

Տրդատ եպիսկոպոս Պալյանը «Թանասեր» ամսագրում «Կապետ» կեղծանունով հրատարակել է «Ցուցակ հայերեն հին տպագրությանց» վերնագրով հնատիպ գրքերի ցանկ։ Ահա այդ ցանկում նա հիշատակում է այս խոյհրդատետրի մասին, որը համարում է 3-րդ տպագրությունը։ Նա ասում է. «Թեև մենք տեսած չենք, բայց Վենետիկի Մխիթարյանց Մատենադարանի մեջ կգտնվի եղեր երկու էջ պատառիկ մը, որուն տառերու ձևերուն նայելով, հավանականաբար կենթադրեն, թե տպագրությունն եղած ըլլա ի Ջուղա»[9]։

Տրդատ եպիսկոպոս Պալյանը ինքը չի տեսել այդ պատառիկները, ուրիշների նկարագրության վրա հենվելով, ենթադրում է, որ դա Նոր-Ջուղայի տպագրությունը պետք է լինի։ Եթե նա տեսած լիներ և համեմատեր այնտեղ

8 Վ. Զարդարյան, «Հիշատակարան», հատ. Գ (1512—1988), էջ 1—105, 5—109։

9 Կապետ, «Ցուցակ հայերեն հին տպագրությանց», «Թանասեր», Փարիզ, հատ. է, № 4, 1905, ապրիլ, էջ 108։



Մի էջ Նոր-Ջուղայի 1961 թ. Հարանց վարքից



Մի էջ Նոր-Ջուղայի 1962 թ. ժամագրքից

տպագրված Առենի ժամագրքի հետ, ապա չէր գրի՝ «հավանականաբար կենթադրեն, թե տպագրությունն եղած ըլլա ի Ջուղա»։

Մեր ձեռքի տակ եղած բիբլիոգրաֆիական տվյալները ապացուցում են, որ այս խորհրդատետրը այդ տպարանի երկրորդ արտադրությունն է։ Ինչպես վերևում նկարագրեցինք, Հարանց վարքը տպագրված է մանր տառանիշերով, 1641 թվականին։ Ժամագիրքը տպագրվել է խոշոր տառանիշերով, ավելի լավ թղթի վրա, 1642 թվականին, իսկ խորհրդատետրը՝ նույն տառանիշերով, ինչ որ ժամագիրքը, բայց 1641 թվականին, այսինքն ժամագրքից առաջ։

Ուրեմն երկրորդ արտադրությունը խորհրդատետրն է, իսկ երրորդը՝ Առենի ժամագիրքը։

Դեռ 1639 թվականին, երբ ոչ մի գիրք չէր տպագրվել Խաչատուր Կեսարացու հիմնադրած տպարանում, նա իր աշակերտներից մեկին՝ Հովհաննես Ջուղայեցուն ուղարկում է Եվրոպա, որպեսզի նա այնտեղ սովորի տպագրության գործը, նոր տառեր ձուլել տա, տպագրության այլ անհրաժեշտ պարագաներ ճարի և բերի Հայրենիք։ Այդ առթիվ Խաչատուր Կեսարացին իր 1642 թվականին տպագրած ժամագրքի հիշատակարանում հետև-

յալն է գրում. «Մինչեւ մաղթեմ... և զՅովհաննէս վարդապետն, որ գնացեալ շրջի յաշխարհին լատինացւոց որպէս զի ուսեալ ի նոցանէ և եկեալ ուղղեսցէ և հաստատեսցէ զսա (տպագրությունը) ի մէջ Հայաստանեայց...» (էջ ՌԵ—ՌՉ)։

Տպարանական արվեստի մեջ հմտացած Հովհաննեսը վերադառնալով Հայրենիք, լավ ընդունելություն չի գտնում տեղի հոգևորականների կողմից։ Մահացել էր Խաչատուր Կեսարացին։ Չնայած բազմաթիվ ջանքերին, նրան չի հաջողվում որոշ բարձրության հասցնել այդ գործը։ Նոր-Ջուղայում մեծ դժվարությունների դեմ պայքարելով, 1647 թվականին նա իր կամքի ուժի շնորհիվ կարողանում է լույս ընծայել «Պարզատումար Ազարիայի...» գիրքը։ 1650 թվականին նա փորձում է հայերեն լեզվով տպագրել Աստվածաշունչը[10]։ Մի քանի մամուլ տպագրելուց հետո, ստիպված թողնում է Նոր-Ջուղան և Փիլիպոս կաթողիկոսի հրամանով տեղափոխվում է Էջմիածին։

Հովհաննես Ջուղայեցուց հետո Նոր-Ջուղայի տպարանը երկարատև դադարի է մատնվում։ Միայն 1687 թվականին, Նոր-Ջուղայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսը մեծ ցանկություն է հանդես բերում վերականգնելու տպարանը, տպագրելու համար հայերեն օգտակար գրքեր։ Նա գիտեր, որ շատ կարևոր ձեռագրեր կան, որոնցից օգտվել չէր կարողանում ժողովուրդը, որոնք մնում էին անօգտագործելի և բացի այդ, առաքելական և կաթոլիկ հայերի միջև խռովություններ ու դավանաբանական վեճեր էին առաջացել։ Այդ վեճերին վերջ տալու համար, Ստեփանոսը որոշում է երկար տարիներ դադարի մատնված Նոր-Ջուղայի տպարանը վերանորոգել ու գործի դնել։

Իր վերականգնած տպարանում տպագրված առաջին գրքի՝ «Պատճառ և Նախերգանք գրոյս» վերնագիրը կրող նախաբանի մեջ գրում է. «Գիտութիւն լիցի ձեզ սիրելեացդ, զի պատճառ տպագրութեանս մե՛ր է այս։ Հետազօտ եղաք ներկայս զի յոլովք գիրք գոյր յանյայտ ումեքէ ի մերայնոց նախնեաց սրբոց վարդապետաց։ Մանաւանդ պիտանիք, հարկաւորք և լուսաւորողք, և թէ ուրեք ուրեք առ այս, և այն գտանի, զինչ շահ և օգուտ հասարակին, վասն որոյ... սկսաք ի լուսածել զտպագրատունս առ ի տպել զվաղեմի սուրբ գրեանքս...»[11]։

Նա երեք գիրք է տպագրում 1687—1688 թվականներին։

Այդ նույն նախաբանի մեջ նա գրում է. «... Այժմ որովհետև պատրաստեալ եղև ի միջի մերում գործարան տպագրութեանս, այսուհետև անահ ու անկասկած տպելոց եմք զամենայն զգրեանս սրբոց վարդապետաց որ առ մեզ գոյ... հինգ հինգ հարիւրով...»[12]։

Ստեփանոս եպիսկոպոսի տպագրած գրքերից առաջինը «Գիրք համառօտ»-ն է, որի հիշատակարանից իմացվում է, որ նա տպագրվել է ՌՃԼԶ (1687) թվականին։ Դա 10,5×8×8 սմ. չափի կաշեպատ դրոշմազարդ փայտե կազմով փոքրիկ գիրք է, կազմի տակ դաջած կտորով, շատ լավ կազմված ու լավ պահպանված[13]։

Երկրորդը Ալեքսանդր Ջուղայեցու «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական, յառաջնորդութեան յայսմ նահանգի Տ. Ստեփաննոսի, յայտ ածողի տպագրութեանս և հրամայողի առնել զգիրս» վերնագրով հատորն է, տպագրված ՌՃԼԶ (1687) թվականին։ Այս գրքից չկա Մատենադարանում և Հայկական ՍՍՌ Պետական գրադարանի անձեռնմխելի գրականության հավաքածուում։

Երրորդը «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց, մանաւանդ... ժողովոյն Քաղկեդոնի, արարեալ սրբազան վարդապետաց» վերնագիրը կրող հակաճառական բովանդակալից ժողովածուն է, որը 764 էջից բաղկացած 12×8×5 սմ. չափի, կաշեպատ ստվարաթղթե կազմով, կազմի դարձերեսին դաջած կտորով ծածկված, լավ կազմված գիրք է[14]։ Գրքի վերջում կա հիշատակարան, որից կարևոր ենք համարում բերել հետևյալ տողերը. «... աւարտեցաւ գիրքս հակաճառական որ ընդդէմ պիղծ ժողովոյն Քաղկեդոնի և անբարշտին Լևոնի և Փւարիանոսի հետևողացն Նեստորի, յամի թուահաշուութեան տոհմիս Հայկական ՌՃԼԷ (1688)... յառաջնորդութեամբ... Ստեփաննոսի արքեպիսկոպոսի, որոյ հրամանաւ և օժանդակութեամբ հաստատեցաւ զտպագրատունս ի վանս վսեմական և փառաբնակ Ամենափրկչի Նոր Ջուղայու»։

Ա. Երեմյանը իր «Նոր-Ջուղա» աշխատության (Նոր-Ջուղա, 1919) «Ս. Ամենափրկչյան վանքի տպարանը» գլխում տալիս է տպարանի համառոտ պատմությունը և վերջում այդտեղ տպագրված գրքերի ցանկը։ Ցանկում չկան ոչ 1641 թվականին տպագրված Խորհրդատետրը և ոչ էլ 1688 թվականին տպագրված «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց» անունը կրող գրքերը (էջ 87—88)։

---

10 Աստվածաշնչի առաջին տպագրությունը տեղի է ունեցել Ամստերդամում 1666 թվականին, Ոսկան վարդապետ Երևանցու աշխատասիրությամբ։

11 Յովհաննես Մրքուզ, «Գիրք համառօտ վասն խոկալոյ և ճշմարիտ հաւատոյ», Նախաբան, էջ 1—3։

12 Նույն տեղում, էջ 5։

13 Մատենադարան, Հնատիպ գրականության հավաքածու, № 1145։

14 Նույն տեղում, № 1611։

Այդ տպարանում տպագրված գրքերի ցանկը կա նաև «Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքի տպարանը» վերնագրով գրքի մեջ, որը տպագրվել է Նոր-Ջուղայում 1912 թվականին Տ. Ա.-ի խմբագրությամբ։ Այդ ցանկի մեջ առաջին գիրքը 1641 թվականին տպագրված Հարանց վարքն է, երկրորդը՝ Ատենի ժամագիրքը, երրորդը՝ «Պարզատոմար Ազարիայի» 1647 թվականի տպագրությունը։ Այդ ցանկից դուրս են մնացել 1641 թվականի Խորհրդատետրը և 1688 թվականին տպագրված «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակացս»-ը (էջ 10—11)։

Ստեփանոս եպիսկոպոսի վերականգնած տպարանը նշված երեք գրքերը հրատարակելուց հետո նորից լռության է մատնվում։

Երկար տարիներ անգործության մատնված տպարանը գործի է դրվում 1877 թվականին Գրիգորիս արքեպիսկոպոս Հովհաննիսյանի շնորհիվ և գործում էր մինչև վերջին տարիները։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ
(Փոխանորդ Արարատյան թեմի)

# ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՐԵՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Գ. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

*Երևանի պատմական եկեղեցիներից է նաև Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որի տեղում հնում եղել է մի փոքր եկեղեցի, կործանված 1679 թվականի մեծ երկրաշարժից։*

*Ըստ Սիմեոն կաթողիկոսի վկայության, Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցին վերակառուցվել է Նահապետ կաթողիկոս Ուռհայեցու օրոք (1691—1705). «Շինեաց զԵրևանու երկու եկեղեցիսն, Քանաքեռու, զԿոնտին, և զայլոց բազմաց գեղօրէից եկեղեցիս խարտեալ քարիւ ի հիմանէ»*[1]*։*

*Ս. Հովհաննես եկեղեցու արևելյան պատի վրա, դրսից, փորագրված է կառուցման թվականը՝ ՌՃԾ Թ (1701)։*

*Նախքան Ս. Հովհաննես եկեղեցու ավարտը, Նահապետ կաթողիկոսը վախճանվում է և կառուցումը շարունակվում է Աղեքսանդր Ա Ջուղայեցու օրոք (1706—1714)։ Այդ առթիվ, Աղեքսանդր Ա Ջուղայեցին, նորավարտ եկեղեցու հարավային պատի վրա, մեջտեղի լուսամուտի վերևի մասում, զետեղել է տվել մի խաչքար հետևյալ արձանագրությամբ.* «Յիշատակ է սուրբ խաչս Տեառն Աղեքսանդր կաթուղիկոս Ջուղայեցի»*: խաչքարը այսօր էլ իր տեղում մնում է անաղարտ։*

*Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու կառուցման թվականը սխալմամբ համարում է ՌՃԾԷ (1708), հենվելով 1708 թվականը կրող մի խաչքարի վրա։ 1708 թվականը, սակայն, ոչ թե եկեղեցու շինության թվականն է, այլ խաչքարի զետեղման։ Շահխաթունյանցը գրում է. «Թաղ քաղաքիս է Կոնդ... եկեղեցի հայոց ի հիւսիսակողմն բաժնի այսր թաղի կառուցեալ ի տաշածոյ քարանց, և ըստ մասին յանհարթ որձաքար վիմաց ի թուին Հայոց ՌՃԾԷ, ի վերայ չորից սեանց օրօցաձև բաւականաչափ մեծութեամբ և է յանուն Յովհաննու Մկրտչի. ունի դերիս սեղանս, զերկուս աւանդատունս յաջմէ և յահեկէ, և զերկուս դրունս յարևմտից և ի հարաւոյ»*[2]*։*

*Ս. Հովհաննես եկեղեցու կառուցման մասին Շահխաթունյանցի սխալը կրկնում է Հ. Ղ. Ալիշանը. «Եկեղեցին յանուն Ս. Յովհաննու Մկրտչի քարակերտ շինեալ է յամի 1708, երիւք սեղանովք և երկու աւանդատամբք»*[3]*։*

*Ս. Հովհաննես եկեղեցին ունի պատարագի երեք սեղան, աւագ սեղանը՝ հանուն Ս. Աստվածածնի, աջակողմյանը՝ հանուն Ս. Հովհաննու Կարապետի, ձախակողմյանը՝ հանուն Ս. Գրիգոր Լուսավորչի։*

*Մինչև 1740-ական թվականները եկեղեցին ունեցել է երկու դռներ՝ հարավային և արևմտյան, ինչպես վկայում է Շահխաթունյանցը։ Այսօր նա ունի երեք դուռ՝ հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերում։ Հյու-*

1 Սիմէոն կաթողիկոս, «Ջամբռ», էջ 28։

2 Շահխաթունեան, «Ստորագրութիւն...», Բ, էջ 146։

3 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 311։

*սիսային դռան կառուցման մասին առ այժմ չկա որևէ տեղեկություն։*

*Ս. Հովհաննես եկեղեցու արևելյան և հարավային պատերի վրա, դրսից, ինչպես նաև եկեղեցու մեջ, պատերի վրա, կան մի շարք կարևոր արձանագրություններ։ Արևելյան պատի արձանագրությունը խաչաձև է, խաչի*

«Կամաւ Աստուծոյ
Էկեղեցիս Մելիք
Ադամայ շինեալ ի յի-
շատակ իւր ծնողաց
Մելիք Սատտուրին, խան-
բեկին և որդւոյ Մելիք
Սատուրին, Սնակին, Աղաւէլին»։



Կողբի Ս. Հովհաննես եկեղեցին

*վերին մասում փորագրված է* «Նշան յաղթող տէրունական ի փրկութիւն Ողոյ»։ *Միջին մասում փորագրված է բուն արձանագրությունը.*

*Ներքևի մասը գեղեցկաքանդակ փոքրադիր խաչքար է, որի վրա, ցածում, փորագրված է.* «Յակոբջանի ծնողաց Նիկողոսին, Լեյուն»։ *Իսկ խաչի թևերի վրա փորագրված է.* «Սուրբ

Յովհաննէս Մկրտիչ», աջ կողմում՝ «Թվ. ՌՃԾԹ» (1710)։

Եկեղեցու արևելյան պատի վրա կան նաև համանման ուրիշ փոքրադիր, գեղեցկաքանդակ խաչքարեր, ի հիշատակ Մելիք Աղամալի տոհմի անդամների։ Կան նաև երկու զարդաքանդակներ և դրանց ներքևի համանման թռչունների նուրբ քանդակները։

Եկեղեցու արևմտյան և հարավային պատերի մեջ հագցված են մի քանի խաչքարեր, որոնք հավանորեն մնացել են հին շինությունից և հետո, վերաշինության ժամանակ, զետեղվել են իրենց ներկա տեղերում։ Ուշադրության են արժանի հարավային դռան բարավորի և կողերի զարդաքանդակները[4]։

Այդ խաչքարերից մեկը զետեղել է տվել Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսը, եկեղեցու շինության ավարտման առթիվ, իսկ մյուսներից մեկը կրում է «Աւետիս, թվ. ՌՃԾ» (1709) արձանագրությունը։

Եկեղեցու ներսում, սյուների վրա և մեծ սեղանի կողքին ևս կան արձանագրություններ։ Այսպես, ձախակողմյան սյան վրա, վերևում, փորագրված է խոշոր տառերով. «Յիշատակ է սիւնս այս Նիկողոսի որդի Սարգսի կողակից Մարիանին և սիւնս այս Նիկողոսի որդի Սարգսի կողակից Մարիանին և դուստր Նանագուլին»։

Սյան ներքևում, պղնձագույն տառերով, փորագրված է. «Յիշատակ է սուրբ խաչս եկեղեցիս Մելիք Աղամալին և ծնողացն Մելիք Սաաուրին և հանրեկին և կողակից Մարիամին, որդոցն Մելիք Սաաուրին, Սանակին»։

Եկեղեցու ներսում, ձախ սյան վրա, խոշոր, սև տառերով փորագրված է. «Յիշատակ է սուրբ դասի ֆարշն մազագործ Բայրամի որդոյ Յարութիւնին... Եղիսաբէթին, որ Վարդավառի նաւակատեաց պատարագն միշտ եղիցի սոցա հոգուն»։

Եկեղեցու ավագ սեղանի կողքին, խոշոր, սևատառ, կա հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է մեծ սեղանի սիվաակցենին, նկարածաղկելն, Մելիք Աբրահամին, աղա Սանակին Աղամալով և իւր աներ աղա Օհաննէս Աղաջանով»։

Ս. Հովհաննես եկեղեցին ժամանակին եղել է հարուստ, ունեցել է եկեղեցական հոյակապ սպասներ և թանկարժեք վարագույրներ, որոնցից մեկը ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է վարագոյրս աղա Մանուկ Յակոբջանեանին և հեռն իւրոյ Թեկղի խաթունին, ի դուռն Երևանայ Կոնդի Սուրբ Յովհաննէս եկեղեցայն, յամի Տեառն մերոյ 1800, ի Հնդիկս»[5]։

Եկեղեցու բակում եղել է աղբյուր, որը կոչվել է «Ս. Հովհաննեսի աղբյուր»։

Ս. Հովհաննես եկեղեցին Երևանի պատմական եկեղեցիներից մեկն է։ Եկեղեցում պաշտոնավարում են երեք քահանա հայրեր։ Եկեղեցու ուխտի օրն է Հովհաննու Կարապետի տոնակատարության օրը, հունվարի 6—7։

Եկեղեցում վերջերս կատարվեցին մասնակի վերանորոգություններ։

1954 թվականին եկեղեցու ներսում կատարվել են հիմնական բարեզարդումներ, կառուցվել է հյուսիսային կողմի պարիսպը։

Անցյալ տարի, Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, եկեղեցու տանիքը վերանորոգվեց և պատվեց նոր ցինկապատ թիթեղներով։ Կառուցվեց նաև փոքրիկ զանգակատուն։

[4] Երվանդ Շահազիզ. «Հին Երևանը», էջ 206։

[5] Նույն տեղում, էջ 206—207։



# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## № 163

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

*Թերթերը՝ 188։—Պրակները՝ 18, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի պրակներ ԺԵ և ԺԷ՝ 2, ԺԸ՝ 5 և Ա՝ 11 թերթից։—Մեծությունը՝ 27,3$\times$19,3$\times$8 սմ.։—Նյութը՝ ղեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ։—Կազմը՝ կաշեպատ տախտակ, մաշված և քայքայված։—Պահպանակները՝ սկզբում երկու, իսկ վերջում չորս թերթ մագաղաթ։—Գիրը՝ բոլորաձև երկաթագիր։—Ժամանակը՝ Թ—Ժ դարեր, բովանդակությունը՝ Ավետարան։—Վիճակը՝ անբավարար, քայքայված և տեղ-տեղ պակասավոր, հատկապես վերջին պրակներից։—Գրչությունը՝ երկսյուն։—Տառերի թիվը՝ 1։—Տողերը՝ 21։—Գծումները՝ նախապես քաշված գծերով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարդագրությունը՝ ձեռագրում կան մի քանի կիսախորաններ և մի հատ էլ խորան (թ. 2ա), մի քանի թռչնագրեր (թ. թ. 69ա և 74բ), լուսանցազարդեր, զարդաթերթեր և խաչեր, բոլորն էլ միջակ գեղեցկությամբ։—Գրիչը՝ Մատթեոս։—Ստացողը՝ անհայտ։—Ծաղկողը՝ անհայտ։—Ժամանակը՝ 1618 թ.։—Վայրը՝ անհայտ։—Ծանոթություն՝ սույն ձեռագիրը 1907 թվականին Փիլիպոս Գազանճյանի կողմից Խարբերդից տարվում է Ամերիկա։ Նրա մահից հետո իր կինը՝ Եղսա Գազանճյան (Լոս-Անջելոս, ԱՄՆ) 1960 թվականի ամռանը ձեռագիրը նվիրում է Մայր Աթոռին Ձեռագրատան, Վեհափառ Հայրապետի Ամերիկա կատարած այցելության առթիվ։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 76բ.— Ով եղբարք, աղաչեմ զձեզ յիշողարել ինձ, քանզի ԺԹ տարի է որ գրիլ չեմ բաներ, ձեռս պաղեալ է, համ մագաղաթի գրել բնաւ չեմ տեսեր, ի հալէն չեմ գիտեր, ի ձեզանէ կու խնդրեմ և հողացեալ բերանովս զոտս ձեր համբուրեմ, մէկ ողորմի ասացէք և Աստուած ձեզ ողորմի, ամէն։ Հայր մեր որ յեր...։*

*Թ. 140ա.— Ով եղբայր, աղաչեմ զքեզ որ հանդիպիք սմայ Ա ողորմի ասացէք, զինչ մեզի ուղէք ձեզ եղիցի։*

*Թ. 188ա.— (Գլխավոր հիշատակարանի սկիզբը կորել է)։*

*... րութիւն։ Արդ. աղաչեմ զամենեսեանդ որք հանդիպիք սմայ յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զվերոյգրեալս և զիս զլոկ...ուն Մաթէոսս և զուսուցիչ իմ զՅովանէս եպիսկոպոս և զԿարապետ մանաղն, և զեանպէկի տետեան, որ ԺԱ տարի է, որ աշխատու և սպասաւորութիւն է բազմաջան կու դատի դուռս այս, և զԿիրակոս կիսասարկաւագն, որ և խառւչ եա ի չինումն ժամատանն և Աստուած ողորմի ասացէք վերոյգրեալցս և Աստուած ձեզ ողորմի, ամէն։*

*Թերես անկեալ կրկին զերիս և պաղատիմ ձեր առաջինս խոշորութեան և սղալանաց յայսմ գրիս չի մեղադրէք ձեր ծառայիս, զի բազում վիշտս էանց ընդ իս յետ շինելոյ ժամատեղիս. շատ չարչարանք քաշեցաք ի ձեռացն Իսմայելացոցն, հալա[ծա]կան, փախստական, յապրանաց զրկեցին և կողոպտեցին, և աւրէ բստ աւրէ ի յահ և ի դողման կամք, և ես ի վաղուց հետէ փափաքէի այս գրոց և ոչ կարէի գրել, մինչև որ Քրիստոս ձեռնտու եղև և կարողացոյց և ես շտապէի ի գրելն, թէ (թ. 188բ) ի յաւարտ ելանեմ, զի վասն բազում մեղաց իմոց բազում կու չարչարիմ բստ այնմ, թէ ոչ զոյ խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց ի խեյթս ցնորեալ է և լոյս աչս պակասեալ է ի բազում զրաղմանս, որ եղին ի վերայ մեր, թէ ի շինումն ժամատանն զանձ զտեալ ես և զմեզ շատ զրպարտեցին մինչ ի յայս, և զապազայն Տեառն եմք յանձեալ, և ես զրաղում չարչարանս ի յանձս առեալ և ի մէջ նեղութեանս և ի դառն ժամանակիս զամէնն ի բաց դնելով։ Սկիզբն արարի և կարողութեամբ Սուրբ Հոգոյն ի կատար ածի։ Վասն այն առ յոտս անկեալ աղաչեմ զձեզ չմեղադրել սղալանաց սորա, բայց միայն ողորմի և Հայր մեղա ասել և Աստուած մեզ յիշելոցս և ձեզ յիշողացդ ողորմի, ամէն։*

*Գրեցաւ սա հայոց թվին ՌԿԷ (1618)։ Իշխանութիւն ոչ յիմոց և ոչ աստարաց հանել զսա ի սուրբ եկեղեցոյս։ Ով եղբարք, խնդրեմ ի ձեզանէ առանց լաթի չբանէք, փոքր տղի ձեռն չտաք յարեն չի բռնէ, մոմ չի կաթեցնէք, խնամ տանողն աւրհնի յԱստուծոյ։ Ամէն։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Կազմի առաջին մասի կռնակում կպցված թղթի վրա գրված է հետևյալը.*

*«Այս գիրքը կը նուիրէ այրի Տիկին Եղսա Գազանճեան ի յիշատակ իր ամուսնոյն հանգուցեալ Փիլիպպոս Գազանճեանի (Հիւսէյնիկ, Խարբերդ) Լոս Անճէլէս, Գալիֆոռնիա, Միացեալ Նահանգներ Ամերիկայի։ Հասցէ.*

4710 Don Zarenbo Drive,
Los Angeles M. California,
United States of America»:

*Թ. 1ա.—Ասցենա հոգի Սուրբ Աստուած ճշմար...*
*Զզործս ձեռաց ձերոց ուղիղ ար...։*

---

** Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից, Է-ից, Թ-ից, 1961 թվականի № № Բ-ից, Գ-ից, Զ-ից, Թ-ից, ԺԲ-ից և 1962 թվականի № № Ը-ից, Թ-ից և Ժ—ԺԱ-ից։*

Ես Փիլիպպոս Յ. Խոջանճեանըս այս Սուրբ Գիրքը բերի Ամէրիգայ 1907-ին և մինչ կըրակէն կը վախնամ որ չայրի այս գիրքը։ Այս գիրքը Ավէտարան, Սաղմոս և Ժամագիրք է։

Առաջի երկու թէրթը և չորս թէրթ վերջի կողմինը ծանոց առաջի գիրգ գրած ժամանակը գրված է, Փըրկչին թըվին 884-ին։

187 թէրթը ալ գըրված է Փըրկչին թըվին 784-ին հարրերդ, ծանուցում։

Կինըս Եղսայ և զավակներս Խոսրով, Արտաշէս, Ժան, Հայկ և աղջիկներս Ծաղկասան և Անայհիտ։ Փ. Յ. Խ.։

Թ. 68բ.—Թավին Ռճ։

Թ. 148բ.—Կա անընթեռնելի մի փոքր կնիք։

№ 164

## ԲԺՇԿԱՐԱՆ

(Հայատառ տաճկերեն)

Թերթեր՝ 208։—Պրակներ՝ 18, անկանոն, Ե՝ 18, Ա և Գ՝ 14, Է, Թ և Ժ՝ 15, Զ՝ 16, Բ, Դ և Ը՝ 18 թերթ։—Մեծությունը՝ 21,5✕18✕8 սմ.։—Նյութը՝ զեղնած և կեղտոտած հաստրակ բարակ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, մաշված։—Պահպանակներ՝ չունի։—Վիճակը՝ բավարար։—Գրությունը՝ միասյուն։—Պատարկ թղթեր՝ 5ա-ից մինչև 7բ թերթերը։—Տողեր՝ անկանոն, 26—32։—Գծումներ՝ առանց ճնշման, աչքի չափով։—Գիր՝ նոտրգիր։—Զարդագրություն՝ չունի։—Գրիչը՝ Պողոս։—Պատվիրատու՝ անհայտ։—Ժամանակը՝ ԺԸ—ԺԹ դարեր։—Վայրը՝ Թուրքիա, շատ հավանաբար Կեսարիայի շրջան, որովհետև գործածված որոշ տաճկերեն բառեր օգտագործվում են հատկապես Կեսարիայի շրջանում։—Ծանոթություն՝ Մայր Աթոռի ձեռագրատունը ստացել է Կոստանդնուպոլսից 1958 թվականին Տիկին Էլիզա Գալյանի կողմից որպես նվեր, հանգուցյալ բժիշկ Եղվարդ Արշարունու անձնական գրադարանից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.Թ. 2ա—4բ.— Բովանդակության ցանկը։
Թ.Թ. 8ա—207բ.— Ձեռագրի տեքստը։

Ձեռագրում տրվում են հիվանդությունների նկարագրականը, ախտաճանաչումը, բուժման միջոցները, դեղատոմսեր, դեղեր և այլն։ Բժշկարանը հանդիսանում է ԺԸ դարի վերջի և ԺԹ դարի սկզբի Հայտնի Հայ բժիշկ Ռեստենի, որի իսկական անունն ու ազգանունն է Միքայել Պատկանյան, գրքի տաճկերեն թարգմանությունը։ Թարգմանված է տաճկերենի՝ օգտագործելով բազմաթիվ պարսկերեն բառեր և տերմիններ։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Հէքիմլիք էլմի Թ[ա]պ[ի]պ
Ռէստէն
Պարոն Միքայէլին
Պիրինճի փարչա
(պատռված)... հաստալըքլարըն իւզէրինէ
(պատռված)... ճի պասմաւ

Թ. 8ա.— Դպպըը էլմի ֆէննի հէքիմլիք քիւթիւպէյի թէրճիմէնւ

Թ. 37բ.— Սրմա վէ հիմանըն էլմի իւթապէթ քէլամըւ

Պունու չիւնքիւ եազտն եաքըշըր հէսսապ,
Տիւզէն հիմմա իչին բահգիկ ճիւսիւն պապ,
Կէօնէկէօն սօյ վաքի սէպէպէ կէօրէ,
Կէօստիւրմէք մէրամըն շիֆա չօք սէվապ։

Օլմէն գիեա կիրիֆթ ճէման իւլէթէ.
Էվէլ ախո թիւրապ րէվան էօլէթէ,
Ջէքէն ճիսիմ հաւէ մաշուֆ ղէվիս ճիհան.
Սանեմազ անը էպէտ զէհրիմէն ախրապ։

Ղանատմտա հեվա քէմին կէզէրիմ.
Ջար նէսնեե ղարշը զօյսա պուսէրիմ,
Նար ապ ղաղէսինտէ գուսու մէզարիմ.
Գարէ ճէսաթ իւլթ ճիսիմ էօզ մէքեանդապ։

Ոլ ճիսմին նաթըըմէնիլէ եանար.
Ֆիւքիր չարէ պուլսա ղամ իւլէթ սունար,
Էզաիլէ նէտէմ ղուրթուլտում սանար.
Կէրի տէօնսէ խաֆտէն օլուրում քէպապ։

Սանա էօղիւտ վէրէմ խապէրտար քէլամ.
Օլմա պանա էտու պու սիճիլ իլամ,
Նէֆսէ թապի իփսիզ օլմա վէսէլյամ.
Անընլա պիկիրիֆթ ղամ շիֆա շապապ։

Հինգ տներր առաջին տողերի սկզբնատառերը կազմում են Պողոս ծայրանունը։

Թ. 207բ.—

Պու տէրթէլերին նաքլին էյէգիք էնճամ
Կէօնակչօն իւլէթլէր տէրունինտէ ճէմ,
Ոլ հէօքամա տէստի նէյէ վիճութտա
Վէրէ պիլմէզ Ֆաքաթ պիրրօհի թամ,
Ղամիլէ քինէթլի չար նէսնէ վիճութ
Տէրտին հարէրէթի եաքըեօր մէվճութ,
Սնունյա սեֆիլճէ ճիսիտէ ֆիտան
Էեիե պէտէլի ումուտիլէ պէյխութ,
Սէտա էտէր եարա ղաթիտէն պէնտէ,
Ֆէրեատ արալաշմազ ճան իլէ թէնտէ,
Իւլէթին զէհրիննի տէֆ էտէր հէքիմ
Միւթիւհ թապիեթի թէմիզլէր անտէ։

Տող ընդ մեջ սկզբնատառերը տալիս են Պողոսի ծայրանունը։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի քանի տեղ գրություններ կան գրված գրքի գրչի և այլոց կողմից, բոլորն էլ հայատառ տաճկերենով, այսպես՝ սկզբի կազմի կռնակում, թերթեր 7բ, 208ա և 208բ։ Գրքում կան նաև երեք հատ պատառիկներ, որոնք հայատառ տաճկերենով գրված դեղատոմսեր են։

Կանակի կազմի վրա, ներսի կողմից, գրված է. «Նուէր Ս. Էջմիածնի մատենադարանին հանգուցեալ բժիշկ Եդուարդ Արշարունիի, ձեռամբ ստորագրեալիս Էլիզա Գալեան, 18.9.1958»։

## № 165

## ԽԻՂԱԲԵՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 28։—Պրակներ՝ 4, Ա՝ 3, Բ՝ 10, Գ՝ 8 և Գ՝ 7 թերթ։—Մեծություն՝ 35,4×21,5×2,3 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտված հասարակ թուղթ։—Կազմը՝ մանուշակագույն թավշապատ տախտակ։ Կազմի երկու կողմերին անցյալում եղել են զամերով ամրացված զարդեր, որոնք հետագայում ընկել են։—Պահպանակները՝ սկզբում և վերջում կան մեկական թերթ կանաչ թուղթ։—Վիճակը՝ բավարար, սակայն որոշ տեղեր պատռվել են։—Դրությունը՝ երկսյուն։—Դատարկ թղթեր՝ 1, 2, 3, 23, 24, 25, 26, 27 և 28։—Տողեր՝ անկանոն՝ 18—21։—Գծումները՝ մատիտով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի շատ հասարակ զարդագրություն, որ միայն գլխագրեր են, որոնք գծագրված են թանաքով։ Կա միայն մի հատ մարդագիր (թ. 5ա), երեք հատ իրար միացած թռչնագիր և ձկնագիր և յոթ հատ էլ թռչնագրեր։—Գրիչը և պատվիրատուն՝ անհայտ։—Ժամանակը՝ ԺԹ դար։—Վայրը՝ անհայտ։—Սեփականությունը՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից, 1960 թվականի մայիս ամսին։

## № 166

## ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 241։—Պրակներ՝ 50, ձեռագրի առաջին կիսում պրակներից յուրաքանչյուրը 6 թերթից են, իսկ երկրորդ կիսում՝ 4-ական թերթից։ Կան սակայն մի քանի ավել-պակաս պրակներ։ Պրակների ընդհանուր պատկերը հետևյալն է. Թ, ԻԷ և ԼԷ պրակները երկուական թերթից են, ԺԳ և Ծ պրակները՝ երեքական թերթից, ԻԱ, ԻԹ—ԼՁ, ԼԸ—ԽԹ պրակները՝ չորսական թերթից, ԻԸ պրակը՝ 5 թերթից, Ա, Գ—Ը, Ժ—ԺԳ, ԺԵ—Ի, ԻԲ—ԻՁ պրակները՝ 6-ական թերթից, Բ պրակը 8 թերթից։—Մեծությունը՝ 34,6×24,5×5,2 սմ.։—Նյութը՝ սպիտակ, մաքուր և դիմացկուն թուղթ։—Կազմը՝ արծաթապատ տախտակ, որի վրա փորագրված են շատ գեղեցիկ քանդակներ։ Կազմի առաջին երեսի կենտրոնում, ձվաձև շրջանակի մեջ, փորագրված է Քրիստոսի բարձրաքանդակ մանրանկարը, նստած գահի վրա և ձախ ձեռքով բռնած Ավետարանը, որի վրա ռուսերեն ութ բառ է գրված։ Կազմի նույն երեսի չորս անկյուններում էլ կլոր շրջանակներում փորագրված են չորս ավետարանիչները, որոնց յուրաքանչյուրի ձեռքին կա մեկական Ավետարան։ Ավետարանիչներից առաջինի մոտ կա մի հրեշտակ, երկրորդի մոտ՝ մի արծիվ, երրորդի մոտ՝ մի եզ և չորրորդի մոտ՝ մի ձի։ Հինգ շրջանակներից դուրս փորագրված են գեղեցիկ զարդանկարներ։ Կազմի երկրորդ երեսի կենտրոնում, ձվաձև շրջանակի մեջ, բարձրաքանդակ փորագրված են Նորածին Հիսուսը, Մարիամ Աստվածածինը, Հովսեփը և երկու հրեշտակներ։ Չորս անկյուններում կան մեկական արծաթյա բարձր հենարաններ, որոնցից վերևի ձախակողմյանն ընկել է։ Բացի այդ, կազմի մնացյալ տարածության վրա փորագրված են գեղեցիկ զարդանկարներ։ Կազմի կռնակի վրա ռուսերեն լեզվով գրված է «Սուրբ Աւետարան»։ Կան երկու խաչեր և գեղեցիկ զարդանկարներ։ Կազմը ժամանակին ունեցել է գեղեցիկ արծաթյա երկու բռնիչներ, որոնցից մեկն ընկել է։ Սույն Ավետարանի արծաթյա կազմը հիանալի նմուշ է ԺԹ դարի ռուսական փորագրության և արծաթագործության։ Կազմի արծաթն ամբողջովին ներկված է ոսկեգույն, ինչպես նաև թղթի ծայրերը, որտեղ ճնշումով նկարված են մի խաչ և վեց հատ ծաղիկներ։—Պահպանակները՝ սկզբում և վերջում կան մեկական հաստ թուղթ։—Վիճակը՝ շատ լավ։—Դրությունը՝ երկսյուն։—Դատարկ թղթեր՝ 1, 2, 6, 13, 150—241։—Տողեր՝ 31։—Գծումները՝ մատիտով։—Գիրը՝ բոլորգիր, սակայն մինչև թ. 119բ տարբեր է, իսկ հետո՝ տարբեր։ Ուրեմն մինչև թ. 119բ էջը բոլոր տառերի ուղղահայաց իրենց գծերը զույգ են, որոնց մեջը փոքրիկ գծիկներով լցված են, իսկ թ. 120ա-ից հետո ուղղահայաց գծերը մի հատ գիծ է միայն։—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի շատ գեղեցիկ զարդագրություն և շատ արժեքավոր է հատկապես այն բանի համար, որ գրված և նկարված է մի կնոջ կողմից։ Ձեռագրում կան վեց հատ ամբողջական էջի ծավալով գեղեցիկ նկարներ (թ. թ. 7ա, 14բ, 52բ, 79բ, 119բ և 146ա), որոնցից առաջինը միայն ներկայացնում է չորս ավետարանիչներին, իսկ մնացյալ հինգը՝ դրվագներ Հիսուսի կյանքից։ Կան նաև վեց հատ գեղեցիկ կիսախորաններ (թ. թ. 3ա, 15ա, 53ա, 80ա, 120ա և 149ա), որոնք ներկայացնում են Հիսուսի կյանքը, բացի առաջինից և վերջինից։ Ձեռագիրն ունի սակավաթիվ այլ նկարներ Հիսուսի, հրեշտակների, սրբերի, ծառերի և այլն։ Կան բազմաթիվ սիրուն զարդագրեր, ինչպես նաև երկու հատ գազանագիր (թ. թ. 53ա և 80ա), մի հատ մարդագիր (թ. 15ա) և մի հատ էլ թռչնագիր (թ. 120ա)։ Սրանցից բացի, ձեռագրի ամեն մի նոր տողը սկսվում է հատուկ գլխատառով։ Տեքստի ամեն մի էջի վերևում կա մի հրեշտակ, ձեռքում բռնած մի ժապավեն, որի վրա գրված է տվյալ Ավետարանի անունը։ Չորս տեղ նկարված է աղոթող Ս. Գրիգոր Նարեկացին, հայացքն ուղղած դեպի երկինքը, որտեղ ամպերի մեջ Տիրամայրն է Մանուկ Հիսուսը գրկում (թ. թ. 10բ, 50ա, 76բ և 117ա)։ Ձեռագրում կան նաև Շուշի քաղաքի հայոց թաղամասի (թ. 10ա), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկարները (թ. 149բ), որի հեռուում երևում են Արարատ լեռները և Նոյան տապանը։ Վերոհիշյալ բոլոր նկարները, խորանները և մանրանկարչությունը նկարված են գրչության համար օգտագործված նույն գույնի թանաքով։—Գրիչը և ծաղկողը՝ Մարգարիտ Ալեքսանյանց (1838—1902 թ. թ.), դուստրը շուշեցի Ամբրի բեյ Հովհանյանցի։—Պատվիրատուն՝ անհայտ։—Ժամանակը՝ 1867—1872 թ. թ.։—Վայրը՝ Շուշի։—Սեփականությունը՝ սույն հիանալի ձեռագրի գրողը ժամանակին նվեր է ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։ Ձեռագիր մատյանը այժմ գտնվում է Մայր Տաճարի թանգարա-

*նում, որպես հիանալի նմուշ հայ գրչագրության և մանրանկարչության (Գրողի և ծաղկողի կենսագրությունն ու գծանկարը տեսնել «Էջմիածին» ամսագրում, 1958 թ. սեպտեմբեր ամսի համարում, էջ 39—41։ Այնտեղ կա նաև գրչագրի երկու էջի լուսանկարը)։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

***Թ. 3ա.*** *— Հոգին Սուրբ եկեսցէ։*
*Սուրբ Աւետարան Յիսուսի Քրիստոսի։*
*Ձեռագրեաց Մարգարիտ Ո. Ալէքսանեանց, ի Շուշի, յամի 1872 ՌՅԻԱ։*

***Թ. 4ա.*** — Евангелie господа нащего и спасителя Iисуса Христа.

Рукопись Маргариты Алексановой дочери покойного Умбри бека Оганова,
При царствованiи Александра II,
императора всероссiйскаго,
Патрiаршества Георгiя IV.
Католикоса всех Армянь
и епархiальномь начальства Саркиса
Джалалова архiепископа Карабагскаго.
Шуша, 1872.

***Թ. 5ա.*** — L'Evangile de notre Seigneur et Sauveur Jésus Christ.

Manuscrit de Margarite Alexaniantz, fille de feu Oumbri-Bek Obaniantz.

Sous l'Empire d'Alexandre II, Empereur de Russie.

Le Patriarcat de Georges IV, Patriarche Suprême de tous les Arméniens et la prélature des arméniens de Carabag, d'Archi-Evêque Sarkis Djalaliantz.

Choucha, 1872.

***Թ. 8բ.*** *— Հոգի Տեառն ի վերա իմ. Հայցուած.*

*Աղաչեմ սրտաբեկ սիրով զաստուածարեալ հոգեւորական դասս լուսաւորչական հայոց մերս Կաթուղիկէ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, որ ժամանեալդ էք ընթեռնուլ զճաշու Սուրբ Աւետարանսն ի պաշտամունս եկեղեցականս, ի կիր առնուլ զսա միայն յաւուրս մեծ տէրունի տօնիցն տարւոյն և օրհնաբանեալ տօնից ամենասուրբ Կուսին Աստուածածնայ ի ժամ ճաշու, այն է Սրբոյ Պատարագին։*

*Քանզի այնպիսեօք միայն ունի մնալ սա յարատեական անջինջ յիշատակ տառապեալոյս ի փրկութիւն հոգւոյ իմ և իմայնոց ուղղափառ հարազատակցաց Սուրբ Եկեղեցւոյ, զերծ կալով սմա ի վաղաժամ եղծմանէ յերեսաց յաճախակի և վաղ-վաղ կիրառութեանց։*

*Եւ այսպէս իմ հինգամեայ այս երկասիրութիւն կացցէ մնասցէ ինձ աղօթիւք սրբութեանց ձերոց իբրև լուսաւորագոյն բիբ ականս յաւերժահայեաց ի շարս սրբազան մատենից առաքելական Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայցս, ի փառս միոյն մերոյ աբարչապետի, Տեառն Աստուծոյ։*

Աղախին Աղախնեայցն Աստուծոյ
ՄԱՐԳԱՐԻՏ Ո. ԱԼԷՔՍԱՆԵԱՆՑ։

***Թ. 10ա.*** *— Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ կենդանւոյ։*

### Աւետարան

*Ձեռագրեաց Մարգարիտ դուստր Ղազանչեցի, այժմ Շուշա քաղաքացի, հանգուցեալ ազնուազարմ Ումբրի-բէյի Յովհանեան, ի կողմանէ ամուսնոյն Ալէքսանեանց, ի կայսրութեան Ռուսաց Ալէքսանդրի Բ, ի Հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ Դ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և յառաջնորդութեան հայոց Ղարաբաղու վիճակի Տեառն Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց։*

*(Այստեղ նկարված է Շուշի քաղաքի հայոց թաղամասը, վերևը կենտրոնում հայկական եկեղեցին, իսկ ներքևում և կողքերում բազմաթիվ ծառեր և սիրուն տներ։*

*Նկարի ներքևում գրված է հետևյալը).*

*Տես զ նոր թաղին հայոց հայելով ի քաղաքամիջէն դէպի հիւսիս։*

*Ի Շուշի, յամի 1872, ՌՅԻԱ,*

***Թ. 149ա.*** *— Եւ քանզի անզանձալի ուղւոյն յիշատակ սատեացս պարտեաց զայս կտակ թողի, որոց ընթեռնուն իմովս բանիւ առ Աստուած կարդալ հանապազօր։*

### Յիշատակարան

*Շնորհօք Սուրբ Հոգւոյն, ողորմութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ազդմամբ ամենակալին և ամենազթածին Աստուծոյ, և պաշտելի բարեխօսութեամբ և պաշտպանութեամբ ամենասրբուհի Աստուածամօրն և Թագուհւոյն երկնի և երկրի, միակ Տիրամօր Կուսին Մարիամայ, ես մեղաւոր անարժան աղախին Մարգարիտս ի դստերացն Ումբրի-բէյի Յովհանեանց, ծնելոյ ի Շուշի քաղաքի, աշխարհին Արցախայ Մեծին Հայաստանի, սկիզբն արարի ձեռամբ իմով գծագրել զՍուրբ Աւետարանս, ի Փրկչական թուին 1867, և շնորհապարգև օժանդակութեամբ Սրբոյ Երրորդութեանն յաւարտ հասուցի աշխատելով կարի յոյժ վասն գեղեցկութեան մատենիս, յամի Տեառն 1872, ի տիսամաց կենաց իմոց իբրև երեսնից։*

*Նուիրեցի զայս ի դուռն Արարատեան Աստուածակառոյց Առաքելական Մայր Սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոյն Սրբոյ Էջմիածնայ, ի փրկութիւն հոգւոց ծնողացն իմոց Ումբրի-բէյի և Հռիփսիմէին, և եղբօրն իմոյ Յովհան-*

Նիսին, և քերչն իմոց Մինային, Մարթային, Ջավահիրին և Աննային, և ամենայն արեան առու առհմականացն մերոց կենդանեաց և ննջեցելոց, այլ և ի փրկութիւն հոգւոյս տառապեալ աղախին Մար(բ. 149)գարտիս և ամուսնոյս Պետրոսի Ալէքսանեանց։

Արդ՝ հայցեմք յԱմենակալ զօրութենէ Աբարչին մերոյ, որոց յիշելոցդ էք ի մաքուր աղօթս ձեր զվերոյ նշանակեալ անուանսն, զի իւրև Ամենախնամ պարգևատու բարեաց ամենից շնորհեսցէ ձեզ վայելել աստ զերջանիկ կեանս Աստուածապաշտականս՝ և յետ աստեացս արժանի արասցէ ժառանգորդ լինել անմահական կենաց վերին անվախճան արքայութեանն Աստուծոյ. ամէն։

(Ներքևում կան պարսպապատ Ս. էջմիածնի տաճարի, Արարատ լեռների և Նոյան տապանի նկարներ։)

## № 167

### ԴԺՈԽՔ ԲԱՑԵԱԼ

### (Հայատառ տաճկերեն)

Թերթերը՝ 64—Պրակները՝ 6 հատ անկանոն։ Ա՝ 10, Բ՝ 10, Գ՝ 13, Դ՝ 12, Ե՝ 13 և Զ՝ 6 թերթ։—Մեծությունը՝ 22,2✕16,2✕1,8 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ։—Պահպանակները՝ սկզբում և վերջում երկուական թերթ հասարակ թուղթ։—Վիճակը՝ անբավարար, սկզբից 34 թերթ պակասում է։—Գրությունը՝ միասյունի։—Դատարկ էջերը՝ չկան։—Տողերը՝ 23—24։—Գծումները՝ ճնշումով։—Գիրը՝ նոտրգիր։—Զարդագրությունը՝ չկա։ Վերնագրերը և գլխագրերը գրված են կարմիր թանաքով։—Գրիչը՝ անհայտ։—Ստացողը՝ անհայտ։—Ժամանակը՝ ԺԹ դար։—Վայրը՝ անհայտ։—Ստացությունը՝ ձեռագիրը 1954 թվականին ստացված է Թեհրանի հայոց եկեղեցուց, դոկտ.-պրոֆ. Աշոտ Աբրահամյանի միջոցով։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 64բ.— Ուչյոնճի ֆասըլ։
Պու սոոէ տուշէն նէֆաղըլէրտէ։
Պու նէֆաղըլէր ճէմիէսի 8 մուճէտէլէտէ, 2 ֆասըլտա, ւէ 2 քյաղիթտա պոլ օխու, ւէ նամազ էյլէ պիզէ։

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրի սկզբում պահպանակի երկրորդ թերթին, կպցված է մի թուղթ հետևյալ գրությամբ.

Առաջին երես (տպագիր).

Ծուցագիր—Հոգևոր Կառավարութեան Հայոց Նոր-Նախիջևանի.

(ձեռագիր նամակ).

Ծարգեյի եղբայր Պ. Աճառեան.

Կը խնդրեմ նեղութիւն քաշէք յայտնելու ինձ այս հայատառ տաճկերէն ձեռինեննէմ աչըլմըշ գիրքն ի՞նչ գիրք լինելը, որի համար կանխաւ կը յայտնեմ շնորհակալութիւնս.

Ծարդ. Պօղոս քահանայ Բետեչեան

Բ. երես (ձեռագիր).

Ճէհէննէմ աչըլմըշ՝ այն է Դժոխք բացեալ. տպ. 1783 թ. Թրիէսթ, Մխիթարեանց մամ. հեղինակն է ճիզվիթ Պաոլօ Սեհոննէրս, իտալերէնից հայ և հայերէնից էլ թուրքերէն թարգմանուած. (Սա շատ հավանաբար գրված է պրոֆ. Հ. Աճառյանի կողմից)։

Մեծ. Պրն. Հր. Աճառեանին.

Սարգիս Քաժնեչեան.

Սարգիս—1897 փետր. 2. № 4։

(Ձեռագրում տեղ-տեղ լուսանցքներում կարմիր թանաքով և փոքր նոտրգրով գրված են մեջբերումներ Ավետարանից հայերեն լեզվով, տեքստում եղած տաճկերենի թարգմանությամբ։ Տեղ-տեղ էլ հայերեն բառեր են գրրված, ինչպես, օրինակի համար, թ. թ. 35բ, 36ա, 40ա և այլն, տեքստում եղած տաճկերեն բառի թարգմանությունը)։

## № 168

### ԳՈՒՇԱԿԱՐԱՆ ԵՎ ՕՐԱՑՈՒՅՑ

Թերթերը՝ 164—Պրակները՝ 14, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ ԺԱ պրակը 10, Է, Ը և ԺԴ՝ 11 և Ա՝ 13 թերթից։—Մեծությունը՝ 20,8✕16,3✕1,8 սմ.։—Նյութը՝ դիմացկուն սպիտակ թուղթ։—Կազմը՝ հաստ սև կաշի։—Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական թերթ հաստ թուղթ։—Վիճակը՝ բավարար, սակայն սկզբից և վերջից մի քանի թերթեր պակասում են։—Գրությունը՝ միասյուն։—Դատարկ էջերը՝ 23բ, 62բ, 63ա, 84ա, 84բ։—Տողերը՝ 22։—Գծումները՝ առանց ճնշման, այլ չափով։—Գիրը՝ շեղագիր։—Զարդագրությունը՝ չկա։—Գրիչը՝ անհայտ։—Ժամանակը՝ շատ հավանաբար 1925—1926 թ. թ. (տեսնել թ. թ. 23ա և 65ա)։—Վայրը՝ անհայտ։—Ստացությունը՝ ստացված է նվեր 1960 թվականին Ախալցխայի քահանա Տ. Հովհաննես Դանիելյանից, Վրաստանի առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի միջոցով։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. թ. 1ա—64ա.— Գուշակարան։
Թ. թ. 121ա—164ա.— Գուշակարան։
Թ. 23ա.— Օրացույց։
Թ. թ. 64բ—120բ.— Օրացույց (որից լուսնի օրացույց՝ 1926-ից մինչև 1944 թիվը և արեգակի օրացույց 1926-ից մինչև 1937 թիվը։ Շարունակությունը պատռված է)։

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 21բ.—Այս տուն աղալված եմ իմացիր։
Թ. 148ա.—Այստեղ շատ աղալ կայ։

(Շարունակելի)

# ՑԱՆԿ

# «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1962 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

## Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ դիմումը եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին Հայաստանյայց եկեղեցու անդամակցության համար, Թ 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ զեկուցումը Ազգային-եկեղեցական ժողովին, Ժ—ԺԱ 28:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորությունները «Սովետական Հայաստան» ամսագրի համար, Ժ—ԺԱ 61:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և Սրբալույս Միռոնի օրհնության մասին, Է 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և Սրբալույս Միռոնի օրհնության մասին, Ժ—ԺԱ (Ներդիր):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին, ԺԲ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Երուսաղեմի Սուրբ Հարության Տաճարի վերանորոգման հանգանակության առթիվ, Ե 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Թուրքիայի հայոց նորընտիր պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանին, Բ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հաստատման հինգհարյուրամյակի առթիվ, Բ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանին, ԺԲ 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուրբ Հռիփսիմեի տաճարի վերանորոգման առթիվ, Դ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցի մահվան տասներորդ տարելիցի առթիվ, Գ 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ պատասխանը «Նովոյե պեչատ»-ի թղթակցի հարցին, Ը 11:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը հանուն Ազգային-եկեղեցական ժողովի, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ մեծարգո պր. Ա. Պուզինին, Ժ—ԺԱ 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հուշագիրը եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին Հայաստանյայց եկեղեցու մասին, Թ 10:

Ազգային-եկեղեցական ժողովի հեռագիրը Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետի նախագահ մեծարգո պր. Ա. Քոչինյանին, Ժ—ԺԱ 6:

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը, Ա 9:

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 15:

Արձանագրություն Ազգային-եկեղեցական ժողովի, Ժ—ԺԱ 11:

Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու պետ գերապատիվ Տ. Լորիստոն Սքեյֆ եպիսկոպոսի նամակը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ երանաշնորհ Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցի առթիվ, Զ 17:

Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցումը Հայ եկեղեցու կանոնագրքի կազմության հարցի շուրջ, Ժ—ԺԱ 52:

Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցումը Հայ եկեղեցու միասնության ամրապնդման հարցի շուրջ, Ժ—ԺԱ 45:

Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկուցումը Մայր Աթոռի յոթնամյա գործունեության տնտեսական հաշվետվության շուրջ, Ժ—ԺԱ 56:

Թուրքիայի հայոց նորընտիր պատրիարքի գահակալության առթիվ փոխանակված հեռագրեր, Ա 21:

Հաղորդագրություն, Ա 27:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասուներկուերորդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր, ԺԲ 10:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի ողջույնի հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ, Ժ—ԺԱ 4:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի քառասունհինգերորդ տարեդարձի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր, ԺԲ 7:

Պաշտոնական ընդունելություն, Գ 9:

Պաշտոնական հաղորդագրություն, Գ 8:

Պաշտոնական հաղորդագրություն, Գ 12:

Պաշտոնական հաղորդագրություն, Ե 10:

Պաշտոնական հաղորդագրություն, Ե 17:

Պաշտոնական հաղորդագրություն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին անդամակցության մասին, Թ 13:

Պաշտոնական հաղորդագրություն Վեհափառ Հայրապետի Բաքու կատարած այցելության մասին, Է 8:

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ողջույնի հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ, Ժ—ԺԱ 3:

Փրկչի Հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի անունով ստացված քույր եկեղեցիների հոգևոր պետերի ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ե 8:

Փրկչի Հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ողջույնը քույր եկեղեցիների հոգևոր պետերին, Դ 7:

Փրկչի Հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 9:

Փրկչի Հրաշափառ և Ս. Ծննդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 9:

## Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ամանոր և Սուրբ Ծնունդ, Ա 3:

«Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս», Բ 5:

Ավարայրի դյուցազնամարտը, Գ 5:

Հարության վկայությունը և լույսի հաղթանակը, Դ 5:

Երուսաղեմի Սուրբ Հարության Տաճարի վերանորոգությունը, Ե 5:

Երանաշնորհ Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանց, Զ 3:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը Մայր Աթոռում, Է 5:

Խաղաղության համաշխարհային վեհաժողով Մոսկվայում, Ը 3:

Թուրքիայի հայոց Պատրիարքության հաստատման հինգհարյուրամյակը, Թ 5:

Ազգային-եկեղեցական արտագումար ժողովը և նրա պատմական նշանակությունը, Ժ—ԺԱ 7:

Մեր Ազգային մեծագույն տոնը, ԺԲ 12:

## Գ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԲԵՆԼԻՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ—Վեհափառ Հայրապետի փոխայցելությունը Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ին, Գ 18:

ԵԱՅ—Անդրադարձություններ, ԺԲ 25:

ԵՂԻԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Բաքու, Է 9:

ՀՈՎՍԵՓՅԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ—Էջմիածին և Կիլիկիո Աթոռները, Զ 8:

ՊԱԼՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ—«Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց», Գ 21:

Անման Կոմիտաս վարդապետի մի նշխար՝ «Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան», Բ 45:

Գահակալություն Թուրքիայի հայոց նորընտիր պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան արքեպիսկոպոս Գալուստյանի, Բ 9:

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի երրորդ համագումարը, Ա 28:

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարության նամակը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Թ 16:

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի պատվիրակությունը Մայր Աթոռում, Ժ—ԺԱ 85:

Խոհեր Գարեգին Ա Կաթողիկոսից, Զ 11:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անդամակցում է Եկեղեցիների Համաշխարհային խորհրդին, Թ 14:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցիների Ազգային խորհրդի պատվիրակությունը Մայր Աթոռում, Թ 17:

Սուրբ Հարության Տաճարեն ներս սկսած նորոգությունները, Բ 15:

Տեսակցություն Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական նախկին պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի հետ, ԺԲ 30:

## Դ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ամանորի հանդեսը Հոգևոր Ճեմարանում, Ա 22:

Ամավերջի հանդիսությունները Հոգևոր Ճեմարանում, Զ 41:

Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսը Մայր Աթոռում, Թ 20:

Եպիսկոպոսական ժողովի գումարում Մայր Աթոռում, Ժ—ԺԱ 24:

1962 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ցուցակը, Ժ—ԺԱ 64:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասուներկուերորդ տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում, ԺԲ 14:

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում Քրիստոսի Հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ, Ա 17:

Հանդիսավոր սուրբ պատարագ և հիշատակի հանդես Երանաշնորհ Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցի առթիվ, Զ 7:

Հանդիսություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիվ, Ժ—ԺԱ 87:
Ձեռնադրություն Մայր Աթոռում, Ը 15:
Մասնավոր վարդապետական գավազանի տվչություն Մայր Աթոռում, Ը 12:
Սարկավագների ձեռնադրություն Մայր Աթոռում, Թ 25:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը, Թ 21:
Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության հանդեսը Մայր Աթոռում, Գ 10:
Քրիստոսի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ հայրապետական հանդիսավոր պատարագ և թափոր Մայր Տաճարում, Դ 11:
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (լուրեր Մայր Աթոռից)—Ա 25, Բ 19, Գ 23, Դ 14, Ե 36, Զ 39, Է 15, Ը 19, Թ 23, Ժ—ԺԱ 105, ԺԲ 18:

## Ե. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ.)—Մեսրոպ Մաշտոց, Ա 31, Բ 18, Գ 25, Դ 16:—Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցը իբրև հայ հնագրության մեծ վարպետ, Զ 14:
ԱՐԱ ՄԱՐԿՈՍ—Բանասիրական նոթեր, Բ 57:
ԲԱԼԱՐ ԺԱՆ—Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին առթիվ, Ե 35:
ԲԵՐԲԵՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ—Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության նվիրված ուսումնասիրությունները և անտիպ էջերը, Բ 48:—Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության անտիպ էջերից, Զ 61:
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ—Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբռ»-ը ռուսերեն լեզվով, Զ 56:—Հովսեփ արքեպիսկոպոս Արղության երկու նամակ-զեկուցագրերը որպես հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներ, Է 32:
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ.—Հովհաննու Կարապետի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, Ա 57:—Եղվարդի Մեծ և Փոքր վանքերը և գյուղի մյուս կարևոր հուշարձանները, Է 40:
ԹԱՓԻՐՅԱՆ ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ—Շիրակի վանքերն ու եկեղեցիները, Գ 40:
ԹՈՓՈՒԶՅԱՆ Հ.—Էջեր եգիպտահայ հին գաղութի պատմությունից, Ը 40:
ԹՈՒՄԱՆՅԱՆ Բ.—Հին հայկական աստղագիտական գործիքներ, Դ 51:
ԽԱԼՓԱԽՉՅԱՆ Հ.—Տաթևի երերացող սյունը, Թ 45:
ՀԱԿՈԲՅԱՆ Ս.—Սուրբ Էջմիածնի վանքում օգտագործված մարմարները, Ը 47:
ՀԱԿՈԲՅԱՆ Գ.—Վարդանանց հերոսներին նվիրված «Անպարտ սիրոյ ծնունդք» պարականոն շարականի հեղինակը, Է 59:
ՄԵՅԵ ԱՆՏՈՒԱՆ—Հայ այբուբենը գլուխ-գործոց մըն է, Ե 34:
ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐՓԻԿ—Սաադիի հայերեն թարգմանությունները, Ը 51:
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Շ. Գ.—Նոր-Ջուղայի հայկական տպարանը և այնտեղ տպագրված «Խորհրդատետր»-ը, ԺԲ 46:
ՍԻՐՈՒՆԻ Հ. Ճ.—Օրմանյան և իր ժամանակը, Ա 47, Բ 36, Գ 33, Դ 34, Ե 45:—Պոլիս և իր դերը, Թ 28, ԺԲ 35:
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Հ.—Հայկական արծաթյա մասնատուփերի երկու հին նմուշներ, Դ 46:
ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Ե. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.)—Ե դարի Հայ եկեղեցու պատմության և գրականության մի քանի հանգուցային հարցերի շուրջը, Ե 37, Զ 45:
ՑԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ—Համառոտ պատմական ակնարկ Երևանի եկեղեցիների մասին, Ը 27, Թ 38, ԺԲ 52:
ՔՈԼԱՆՋՅԱՆ Ս.—Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը, Զ 36, Է 16, Ը 33:
ՕՐՄԱՆՅԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը, Թ 26:

## Զ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇՃՅԱՆ ԱՐՏԵՆ ՔԱՀԱՆԱ—Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանց, առաջնորդ Ամերիկայի հայոց, Զ 31:
ԻՍՊԵՆՃՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՅՇ—Մարգարեություն մը և պատգամ մը, Զ 37:
ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ Լ. Մ. (ՊՐՈՖ.—ԴՈԿՏ.)—Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանց, Զ 23:
ՓՈԼԱՏՅԱՆ ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Գարեգին Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Զ 18:
Գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյան, Ժ—ԺԱ 100:
Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյան, Ժ—ԺԱ 104:
Գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյան, Ժ—ԺԱ 103:
Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյան, Ժ—ԺԱ 102:

## Է. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ա. Հ.—Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններ, Ե 16:
Զվարթնոց տաճարի հազարերեքհարյուրամյակը, ԺԲ 16:
Վալերի Բրյուսովին նվիրված գիտական նիստ, ԺԲ 21:
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ—Բ 60, Գ 50, Է 60, Ը 58:

## Ը. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Բ.—Սուրբ Էջմիածին, Սրբության Սրբոց ձայուն, ԺԲ 28:
[ՏԵՐՏԵՐՅԱՆ] ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Սրտագին կոչ բովանդակ ազգության որ ի սփյուռս աշխարհի, ԺԲ 23:
ԹՂԹԱԿԻՑ—Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի տոնակատարությունը Լոնդոնի մեջ, Ը 22:
Պաշտոնական բացում Սուրբ Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական դպրոցի, ԺԲ 34:

## Թ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրես Մոսկվայում, Ը 6:
Խաղաղության բանաձև ընդունված Ազգային-եկեղեցական ժողովի չորրորդ նիստում, 1962 թվականի հոկտեմբերի 5-ին, Ժ—ԺԱ 59:
Խաղաղության կողմնակիցների ասիաաֆրիկյան կոնֆերանսը, Ե 15:
Խաղաղության պաշտպանության ասիաաֆրիկյան կոմիտեի նախագահության նիստը, Բ 12:

## Ժ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՎՈՅԱՆ Ռ.—Զվարթնոցում, Է 63:
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ—Մայրյան փայլություն, Ե 28:
ՄԱՏԵՆԱՋՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ—Ներբող Սուրբ Էջմիածնի, Ե 33:
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ—Օշականում, Ե 27:
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆԱՆՍԵՆ—Մաշտոցի շիրմաքարի առաջ, Ե 31:
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ—Հայոց այբուբեն, Ե 30:

## ԺԱ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյանի, Ը 21:
Հանգիստ գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի, Ը 20:
Հանգիստ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանի, Դ 68:

## ԺԲ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ—Վնասաբեր մի գիրք, Դ 59:
Հ. Ս. Հ.—Հանուն պատմական ճշմարտության, Դ 53:
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Ը 59, Թ 58, Ժ—ԺԱ 107, ԺԲ 55: